

Մշակույթ և  
ստեղծարարություն  
ԵՄ Արևելյան գործընկերության ծրագիր




# ԶԵԿՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄՐՑՈՒՆ ԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Խորհրդատու՝ դոկտոր Ռոբերտ Փիքարդ



Ծրագիրը ֆինանսավորվում է  
Եվրոպական միության կողմից





Նախագծի անվանումը՝ Արևելյան գործընկերության մշակութային ծրագիր II  
ԵՀԲԳ /2014/353745  
Բրիտանական խորհուրդ

Առաջադրանքի համար՝ 26 ավագ փորձագետ

**24 փետրվարի 2017թ.**

«Դիլր Արմեն» ինտերակտիվ թատրոն  
(պատկերի սկզբնաղբյուր)

# Մույն զեկույցը բաղկացած է հետևյալ մասերից.

Ամփոփ նկարագիր,

Մաս 1. Եվրամիությունում մշակութային ժառանգության ոլորտի զարգացման հիմնական միտումների և ուղղությունների համառոտ նկարագրություն

Մաս 2. Հայաստանում մշակութային ժառանգության ոլորտի վերաբերյալ տվյալների հավաքագրում և վերլուծություն

Մաս 3. Առաջարկություններ

# ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Հետևելով Եվրոպայի խորհրդի «Մշակութային ժառանգության նշանակությունը հասարակության համար» շրջանակային կոնվենցիայով ամրագրված օրակարգին՝ Եվրոպական Միության խորհրդի վերջերս կայացրած եզրակացությունները կրկնում են այն տեսակետը, որ մշակութային ժառանգությունը «ռեսուրս է կայուն զարգացող Եվրոպայի համար»: Եվրահանձնաժողովը նաև ընդգծել է, որ մշակութային ժառանգության ներդրումը տնտեսական աճի և սոցիալական համախմբվածության ապահովման գործում թերագնահատված է՝ չնայած աճող գիտական ապացույցներին, և կոչ է արել Եվրոպայի համար կիրառել մշակութային ժառանգության նկատմամբ ինտեգրված մոտեցում:

Եվրոպական առանցքային զեկույցների և փաստաթղթերի լույսի ներքո սույն զեկույցի Մաս 1-ը ներկայացնում է Եվրոպական Միությունում և Եվրոպայի խորհրդում մշակութային ժառանգության ոլորտի զարգացման հիմնական միտումների և զարգացումների համառոտ նկարագիրը: Այն ընդգծում է տնտեսական և սոցիալական ներուժի վրա նոր շեշտադրումը՝ նաև ապացուցահեն քաղաքականության միջոցով: Ներկայացվում են կառավարման նոր մոդելները, հմտությունների զարգացումը, նորարարական ապրանքները, ծառայությունները և նոր տեխնոլոգիաները:

Մաս 2-ում Հայաստանում մշակութային ժառանգության ոլորտում հիմնական շահագրգիռ կողմերից տվյալների հավաքագրումից և քննարկումներից հետո Հայաստանի մշակութային ժառանգության ոլորտի վերլուծություն է ներկայացվում: Այստեղ ամփոփված է ՀՀ մշակույթի նախարարության պատասխանը մի շարք հարցերի և հարցադրումների՝ կապված մշակութային ժառանգության ոլորտում ներկայիս իրավիճակի հետ: Որոշարկվում են մի շարք էական հարցեր, այդ թվում՝ նաև այլ շահագրգիռ կողմերի դիտարկումների ներառմամբ, որոնք մատնացույց են անում զարգացման և համապատասխան հասցեական գործողությունների համար պատշաճ ոլորտներն ու ուղղությունները:

Մաս 2-ում բարձրացված հարցերի հիման վրա Մաս 3-ը ներկայացնում է մի շարք առաջարկներ և բացատրում է դրանք այլ երկրներում գոյություն ունեցող պատշաճ աշխատակարգերի համատեքստում:

## **Հայաստանում մշակութային ժառանգության ոլորտում զարգացմանը միտված տասնհինգ առաջարկները կենտրոնանում են հետևյալի վրա.**

- ապացուցահեն քաղաքականություն,
- ցուցանիշներ, որոնք հարկ է նկատի առնել քաղաքականության մշակման ժամանակ,
- մշակութային միջանցքներ և երթուղիներ, մշակութային ժառանգության հուշարձանների վերականգնում, կլաստերների ու ցանցերի դերը,
- ինտեգրված մոտեցում որդեգրելու համար անհրաժեշտ քայլեր,
- զբոսաշրջություն և մշակութային ժառանգության ռեսուրսներ,
- հմտությունների զարգացում և ուսուցում,
- ֆինանսական աջակցություն, ֆինանսավորման մեխանիզմներ և ֆինանսական միջոցների հայթայթում,
- գույքագրում, վերանորոգում և սեփականություն,
- թանգարանային հատված,
- ոչ նյութական ժառանգություն,
- իրազեկության բարձրացում:





Կերամիկայի սալիկներ, հայկական թաղամաս  
(պատկերի սկզբնաղբյուր)



# ՄԱՍ 1

## ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վերջերս հրապարակված մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ պաշտոնական եզրակացությունները և հետազոտությունների եզրահանգումները, ի ցույց են դնում Եվրոպայում մշակութային ժառանգության ոլորտում հիմնական միտումները և զարգացման ուղղությունները: Դրանց թվում են Եվրոպայի խորհրդի՝ «Մշակութային ժառանգության նշանակությունը հասարակության համար» շրջանակային կոնվենցիան (2005), Եվրահանձնաժողովի հետազոտական ուսումնասիրությունների արդյունքները, Եվրոպական Միության մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ Եվրոպական Միության խորհրդի և Եվրախորհրդարանի որոշումները, Եվրախորհրդի ռազմավարությունը՝ կապված 21-րդ դարի մշակութային ժառանգության հետ: Այս փաստաթղթերից բխող խնդիրներն ու միտումները հաջորդիվ ուսումնասիրվում են սույն զեկույցի Մաս 1-ի հետևյալ բաժիններում:

**1. «Մշակութային ժառանգության նշանակությունը հասարակության համար» Եվրոպայի խորհրդի շրջանակային կոնվենցիա**<sup>1</sup> (Ֆարո, 2005թ., Եվրախորհրդի պայմանագրերի շարք No. 199), որը ստորագրման ներկայացվեց Ֆարոյում 2005թ. հոկտեմբերի 27-ին և ուժի մեջ մտավ 10 անդամ-պետությունների կողմից հետագա վավերացումից հետո: Այժմ այն վավերացվել է 17 անդամ-պետությունների կողմից (2012թ. օգոստոսի 22-ին այն ստորագրել է նաև Հայաստանը, իսկ ուժի մեջ է մտել 2012թ. դեկտեմբերի 1-ին): Ֆարոյի կոնվենցիան հիմնված է այն գաղափարի վրա, որ ժառանգության մասին գիտելիքները և դրա օգտագործումը քաղաքացիների՝ մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի մի մասն են, ինչպես սահմանված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում: Տեքստում մշակութային ժառանգությունը ներկայացված է որպես մարդկային զարգացման, մշակութային բազմազանության ընդլայնման և միջմշակութային երկխոսության հանրահռչակման ռեսուրս, ինչպես նաև տնտեսական զարգացման մոդելի մի մաս՝ **ռեսուրսների կայուն օգտագործման սկզբունքների** հիման վրա:

Ֆարոյի կոնվենցիայի քաղաքական մեկնաբանման համար հատկորոշվել է երեք հիմնական թեմ. դրանք նաև կապակցում և ընդգծում են Եվրախորհրդի առաջնահերթությունները: Այս թեմաներն են՝ **«Մշակութային բազմազանության կառավարումը հանուն համերաշխ հասարակությունների»**, **«Կեցության միջավայրի և կյանքի որակի բարելավումը»** և **«Ժողովրդավարական մասնակցության զարգացումը»**:<sup>2</sup>

2013թ.-ից ի վեր Եվրոպայի խորհուրդը կենտրոնանում է վեց նպատակների վրա, որոնք միտված են Կոնվենցիայի հանրահռչակմանը, անդամ պետություններում համապատասխան գործողություններին աջակցմանը և դրա ազդեցության չափմանը:

**«Մշակութային բազմազանության կառավարումը հանուն համերաշխ հասարակությունների»** խորագրի ներքո սահմանված նպատակներն են.

- Որոշել մշակութային ժառանգության նկատմամբ հասարակական հետաքրքրությունը՝ խթանելու ճիշտ ներդրումները, որոնք միտված են ժառանգության տարբեր տեսակների սոցիալական և տնտեսական նշանակության ու արժեքի պահպանմանն ու ամրապնդմանը (Հոդվածներ 5ա, 5բ և 10ա),
- Հանրահռչակել հաշտեցման գործողությունները, որոնք միտված են միավորելու համայնքի՝ տարբեր շահեր պաշտպանող շահագրգիռ կողմերին, իսկ երկխոսությունը դարձնել կայուն զարգացման հիմնական եղանակներից մեկը (Հոդված 5գ, 7ա, 7բ և 7գ):

<sup>1</sup> <http://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/rms/0900001680083746>

<sup>2</sup> Ֆարոյի գրքույկը: <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806abde6>.

«Կեցության միջավայրի և կյանքի որակի բարելավում» խորագրի ներքո նպատակները հետևյալն են.

- Խրախուսել ճարտարապետական և քաղաքաշինական բարձրորակ նախագծումը, որը կարտացոլի տարածքների և դրանց ավանդույթների մշակութային բազմազանությունը (Հոդվածներ 5ե և 8դ),
- Միավորել մշակութային ժառանգության ոլորտում տնտեսական արդյունավետությանը, սոցիալական համերաշխությանը և էկոլոգիական հավասարակշռությանը միտված ռազմավարությունները, որոնք հնարավորություն են ընձեռում պետական մարմիններին, ներդրողներին և քաղաքացիական հասարակությանը համատեղ գործողություններ իրականացնելու (Հոդվածներ 5ե, 8ա, 8բ, 9ա, 10բ, 10գ, 11ա, 11բ, և 11գ):

«Ժողովրդավարական մասնակցության զարգացումը» խորագրի ներքո նպատակները հետևյալն են.<sup>1</sup>

- Մահմանել «համատեղ պատասխանատվություն»՝ ներգրավելով քաղաքացիներին և քաղաքացիական հասարակությանը հանրային գործողությունների հետ ինտեգրված մեխանիզմներում՝ հասկորոշելու արժեքները, սահմանելու առաջնահերթությունները և կառավարելու մշակութային ժառանգության վրա կենտրոնացող ծրագրերը (Հոդվածներ 5գ, 5դ, 11դ, 11ե, 12ա և 12գ),
- Խրախուսել հասարակության շրջանում բոլոր շահագրգիռ կողմերի մոտ պատասխանատվության զգացումը, որպեսզի նրանց գործունեությունը հիմնված լինի հետևյալ ընկալման վրա՝ «Ես համայնքիս մի մասն եմ, իսկ համայնքս հարուստ է իր բազմազանությամբ» (Հոդվածներ 8գ, 9բ, 9դ):

Բացի այդ, Եվրոպայի խորհրդի՝ ճարտարապետական ժառանգության (Գրանադա, 1985թ.), հնագիտական ժառանգության (Վալետտա, 1992թ.) և լանդշաֆտի (Ֆլորենցիա, 2000թ.) վերաբերյալ նախորդ կոնվենցիաներին համահունչ՝ շեշտադրվեց մշակութային ժառանգության կառավարման **ինտեգրված մոտեցումը**:

Իսկապես, *Տարրյի կոնվենցիայի* սկզբունքները և հիմնահարցերը հիմա ներառված են Եվրոպական Միության քաղաքականություններում, ինչի մասին վկայում են մի շարք փաստաթղթեր:

## 2. Եվրոպական Միության խորհրդի՝ «Մշակութային ժառանգության՝ որպես կայուն զարգացող Եվրոպայի ռազմավարական ռեսուրսի» վերաբերյալ եզրակացությունները (21 մայիսի 2014թ.) (2014/C 183/08)

*Տարրյի կոնվենցիայի* հիման վրա Եվրոպական Միության խորհուրդը նաև շեշտադրել է հասարակության համար մշակութային ժառանգության նշանակությունը և կայուն զարգացման համար ունեցած ներուժը:

Այս փաստաթուղթը շեշտում է, որ ԵՄ-ում Եվրոպայի մշակութային ժառանգությունը պետք է պաշտպանվի և ամրապնդվի: Այստեղ ներառվում են նաև այն ռեսուրսները, որոնք ժառանգվել են անցյալից իրենց բոլոր ձևերով և կողմերով, այդ թվում՝ նյութական, ոչ նյութական և թվային արտահայտության ձևերը, հուշարձանները, մշակութային արժեք ներկայացնող տեղանքները, լանդշաֆտները, հմտությունները, աշխատակարգերը և սովորույթները, գիտելիքը և մարդկային ստեղծագործականության արտահայտության ձևերը, հանրային և մասնավոր մարմինների կողմից պահպանված և կառավարված հավաքածուները, օրինակ՝ թանգարանները, գրադարանները և արխիվները: Այն շեշտում է, որ նրանք **արժեք են ներկայացնում հասարակության համար** մշակութային, բնապահպանական, սոցիալական, տնտեսական և տեխնոլոգիական տեսանկյունից, և **որ նրանց կայուն կառավարումը 21-րդ դարի ռազմավարական ընտրությունն է՝** հիմնված դրանց չվերականգնվող բնույթի գիտակցման վրա:

**Եզրակացությունները շեշտում են, որ.**

- Մշակութային ժառանգությունը կարևոր դերակատարություն ունի **սոցիալական կապիտալի ստեղծման և մեծացման** գործում (հանրային կյանքում քաղաքա-

<sup>1</sup> [http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52014XG0614\(08\)&from=EN](http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52014XG0614(08)&from=EN)  
Տե՛ս նաև. [http://www.consilium.europa.eu/uedocs/cms\\_data/docs/pressdata/en/educ/142705.pdf](http://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/docs/pressdata/en/educ/142705.pdf)

ցիների մասնակցություն, կյանքի որակի բարելավում, բազմազանության, միջմշակութային երկխոսության և պատկանելության զգացողության ակտիվացում և սոցիալական ներառականության դյուրացում, ինչպես նաև հմտությունների, գիտելիքների, ստեղծարարության և նորարարության ձեռքբերում) և հանդես է գալիս որպես գործիք ֆորմալ և/կամ ոչ ֆորմալ կրթության, ցկյանս ուսումնասիրության և վերապատրաստման համար:

- Մշակութային ժառանգությունն ունի կարևոր **տնտեսական ազդեցություն**, այդ թվում՝ մշակութային և ստեղծարար ոլորտներում, և հանդես է գալիս որպես հզոր ուժ տեղական և տարածքային զարգացման և կայուն մշակութային զբոսաշրջության համար, աջակցում է գյուղական և քաղաքային վայրերի վերականգնմանը և ստեղծում է զբաղվածության բազմապիսի հնարավորություններ:
  - Մշակութային ժառանգությունը կոնկրետ դեր է խաղում **Եվրոպա 2020 ռազմավարության**<sup>2</sup> «**խելացի, կայուն և ներառական աճի**» նպատակներին հասնելու գործում (քանի որ նպաստում է սոցիալական և տնտեսական ազդեցությանն ու էկոլոգիական կայունությանը):
- Քանի որ մշակութային ժառանգության քաղաքականության հարցերը տրամախաչվում են այլ հանրային քաղաքականությունների հետ (օրինակ՝ զբոսաշրջություն, տարածքային զարգացում, կրթություն), **հարկ է ճանաչել և զարգացնել քաղաքականությունների ինտեգրման ներուժը:**

**Համապատասխանաբար, եզրակացությունները պահանջում են.**

- **Մշակութային ժառանգության՝ որպես ողջ հասարակությանը պատկանող ռեսուրսի արժեքի, նշանակության, ներուժի ճանաչում** տեղական, էթիկական, գեղագիտական և էկոլոգիական արժեքների հիման վրա հասարակության զարգացման համար, մասնավորապես ճգնաժամային իրավիճակներում:
- **Երկխոսություն մշակութային ժառանգության շահագրգիռ կողմերի հետ՝** հատկորոշելու և իրականացնելու մշակութային ժառանգության կայուն կառավարմանը և զարգացմանը միտված, համաձայնեցված քաղաքականությունները և գործողությունները, ինչպես նաև առաջ մղելու միջազգային և միջկառավարական կազմակերպությունների (մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի) հետ համագործակցությունը:
- Ռեսուրսների մոբիլիզացում՝ **ինտեգրված և համակողմանի եղանակներով** մշակութային ժառանգության պահպանման, ամրապնդման և հանրահռչակման համար (հաշվի առնելով մշակութային, տնտեսական, սոցիալական, բնապահպանական և գիտական բաղադրիչները):
- Մշակութային ժառանգությանը վերաբերող քաղաքականությունների միակցում ազգային և եվրոպական քաղաքականությունների հետ:
- **Մշակութային ժառանգության և քաղաքականության այլ ոլորտների միջև սիներգիաների** հատկորոշում և ստեղծում (ոլորտների ցանկը հաջորդիվ ուղղորդող է, սակայն ոչ սպառիչ՝ տարածքային զարգացում, համերաշխություն, գյուղատնտեսություն, ծովագնացություն, բնապահպանություն, էներգետիկա և կլիմայի փոփոխություններ, զբոսաշրջություն, կրթություն, հետազոտություն և նորարարություն):
- Բոլոր առկա ծրագրերի միջոցով **ֆինանսավորման հասանելիության բարելավում** որպես կայուն տեղական և տարածքային զարգացման միասնական ռազմավարությունների իրացում:

**Եզրակացություններն այնուհետ կոչ էին անում.**

- Հանրահռչակել մշակութային ժառանգության երկարաժամկետ **քաղաքականությունների ապացուցահեն մոդելներ, որոնք պահանջում են հասարակության ու քաղաքացիների մասնակցությունը:**

<sup>2</sup> [https://ec.europa.eu/info/strategy/european-semester/framework/europe-2020-strategy\\_en](https://ec.europa.eu/info/strategy/european-semester/framework/europe-2020-strategy_en)



- Ընդգծել կայուն զարգացման ոլորտում մշակութային ժառանգության դերը՝ վերականգնելով, վերակառուցելով և վերանորոգելով քաղաքային և գյուղական վայրերը:
- Խրախուսել մշակութային ժառանգության ոլորտում և քաղաքականության այլ ոլորտներում հանրային և մասնավոր հատվածների և տարբեր մակարդակի կառավարման մարմինների միջև ցանցային հարաբերությունները և գործընկերությունները:
- Խթանել մշակութային ժառանգության պահպանման, կայուն կառավարման և զարգացման և Եվրոպայի մշակութային արժեքների շարունակական պաշտպանության և հասանելիության համար անհրաժեշտ **ավանդական գիտելիքները և հմտությունները**:
- Մշակել **հետազոտական օրակարգ** և նախաձեռնություններ մշակութային ժառանգության վերաբերյալ, հատկապես Հորիզոն 2020 շրջանակային ծրագրի միջոցով (տե՛ս ստորև՝ Բաժին 6, 8):

**Փաստաթուղթը կոչ էր անում Եվրահանձնաժողովին՝**

- Իրականացնել **մշակութային ժառանգության տնտեսական և սոցիալական ազդեցության վերլուծություն**:
- Աջակցել մշակութային ժառանգության նկատմամբ **ռազմավարական մոտեցման մշակմանը**:
- Մշակութային ժառանգությունը ներառել որպես Եվրոպա 2020 ռազմավարության մի մաս:
- Խթանել այն **պատշաճ աշխատակարգերի փոխանակումը և օգտագործումը**, որոնք միտված են նպաստելու մշակութային ժառանգության **կայուն օգտագործմանն ու կառավարմանը**:
- Աջակցել **ցանցային հարաբերությունների հաստատմանը և ռեսուրսների կուտակմանը** հանրային և մասնավոր մշակութային ժառանգության փորձագետների և մասնագետների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև:

**3. Եվրահանձնաժողովի հաղորդակցությունը՝ «Եվրոպայի համար մշակութային ժառանգության նկատմամբ միասնական մոտեցմանն ընդառաջ» (2014թ.)<sup>3</sup>.**

Այս հաղորդակցության մեջ վերոհիշյալ գաղափարներն ավելի են զարգացվում: Այստեղ շեշտադրվում է այն հանգամանքը, որ Եվրոպայի մշակութային ժառանգությունը ԵՄ-ի օրակարգի կետերից է և պետք է դիտարկվի որպես «բոլորին ծառայող արժեք, բոլորի պատասխանատվության առարկա»՝ հատկապես հաշվի առնելով այն, որ բազմաթիվ կողմերով հանդես եկող մշակութային ժառանգության դերը **հաճախ թերագնահատվում է տնտեսական աճին և սոցիալական համերաշխությանը նպաստելու առումով**:

Ոլորտային և առանձին երկրների վերաբերյալ ուսումնասիրություններից ստացված ապացույցները ցույց են տալիս, որ մշակութային ժառանգության ոլորտը կարևոր տնտեսական նպաստ է բերում (հատկապես շինարարության ոլորտում, իսկ պետական ներդրումները օգնում են հետագայում լրացուցիչ ներդրումներ ներգրավելու): Բացի այդ, մշակութային ժառանգությունն ունի տնտեսության այլ ոլորտներ ներթափանցող ազդեցության ներուժ (օրինակ՝ զբոսաշրջության ոլորտում աշխատատեղերի ստեղծումը, տե՛ս Եվրոպայում ճանապարհորդների կողմից մշակութային ժառանգության վայրեր այցելությունների վիճակագրությունը): Փաստաթղթում այնուհետ նշվում է, որ **տեխնոլոգիաների օգտագործումը հավելում է ժառանգության ոլորտում տնտեսական արժեքը** (օրինակ՝ թվայնացված նյութերի միջոցով, ինչը կարող է ավելի հազեցած դարձնել այցելությունների փորձառությունը, կրթական բովան-

<sup>3</sup> ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՒՂՎԱԾ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ, ԽՈՐՀՐԴԻՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ, «Եվրոպայի համար մշակութային ժառանգության նկատմամբ միասնական մոտեցմանն ընդառաջ», ԵՎՐԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ, Բրյուսել, 22.07.2014, COM(2014) 477 վերջնական տարբերակ. [http://ec.europa.eu/assets/eac/culture/library/publications/2014-heritage-communication\\_en.pdf](http://ec.europa.eu/assets/eac/culture/library/publications/2014-heritage-communication_en.pdf)

դակության, ինչպես նաև այլ զբոբսաշրջային հավելվածների և խաղերի մշակման միջոցով):

Հաղորդակցությունն այնուհետ շեշտադրում է այն հանգամանքը, որ **մշակութային ժառանգությունը մեծ ներուժ ունի խթանելու սոցիալական համերաշխությունն ու միասնականությունը**, օրինակ՝ հարաբերականորեն հին, անտեսված տարածքների՝ ժառանգության վրա հիմնված վերականգնման միջոցով և երիտասարդների ու տարեցների համար կրթական և կամավորական աշխատանքի հնարավորություններ ստեղծելով, ինչպես նաև խթանելով երկխոսությունը տարբեր մշակույթների և սերունդների միջև:

Այնուամենայնիվ, նշվել է, որ մշակութային ժառանգության իրական և հավանական դերակատարության ավելի ընդլայնված ընկալում է պահանջվում համապատասխան քաղաքականության մշակման, հատկապես տնտեսական և սոցիալական ազդեցությունների հաշվառման համար: Բացի այդ, սահմանվել է, որ եվրոպական ֆինանսավորմամբ հետազոտությունները ուղղված կլինեն տվյալների բարելավմանը: «Եվրոպական մշակութային ժառանգությունը թվերով դեպի մշակութային ժառանգության արժևորման եվրոպական համաթիվ» հետազոտական ծրագիրն այդ ժամանակից ի վեր ներկայացրել է իր զեկույցները և կքննարկվի ստորև (տե՛ս ստորև՝ Բաժին 6):

Հաղորդակցությունն այնուհետ նկարագրում է **մշակութային ժառանգությունը որպես խելացի, կայուն և ներառական աճի համար սոցիալական նորարարության աղբյուր՝** հատկորոշելով մի շարք մարտահրավերներ, որոնց հարկ է արձագանքել (այդ թվում՝ նաև խնդիրները, որոնք ի հայտ են գալիս զբոբսաշրջային մեծ ակտիվության, թվայնացման, մշակութային ապրանքների թրաֆիքինգի, գլոբալ տաքացման և կլիմայի փոփոխության պատճառով): Այնտեղ հիշատակվում է նաև կառավարման մոդելներն ադապտացնելու ու մասնագիտական նոր հմտություններ ձեռքբերելու անհրաժեշտությունը, այդ թվում՝ մասնավոր շահագրգիռ կողմերի ներգրավման և հանրային ու մասնավոր հատվածների միջև գործընկերություններ հաստատելու, մշակութային ժառանգության պահպանման, հանրահռչակման և արժևորման նկատմամբ ավելի միասնական մոտեցման անհրաժեշտությունը: Այս ամենը հնարավորություն կտա հաշվի առնելու մշակութային ժառանգության բերած նպաստը և ազդեցությունը հասարակական և տնտեսական նպատակների, ինչպես նաև այլ հանրային քաղաքականությունների վրա:

**Ընդգծվել է մի քանի ոլորտ՝ բացահայելու, թե ինչպես է մշակութային ժառանգության ոլորտը սկսում արձագանքել նոր մարտահրավերների ու հնարավորությունների, ներառյալ.**

- Պահպանություն, որը միտված է ամբողջական լանդշաֆտների/տարածքների, ոչ թե առանձին վայրերի պահպանությանն ու բարեկարգմանը (և ավելի մարդակենտրոն է՝ մշակութային ժառանգության ռեսուրսը դարձնելով տեղական համայնքի մի բաղադրիչ):
- **Մշակութային ժառանգության ոլորտում թվայնացում և առցանց հասանելիության ընդլայնում՝ ավելի մեծ ներգրավվածության նպատակով**, այդ թվում՝ էլեկտրոնային ուսուցման գործիքների և եկամուտների նոր հոսքերի ապահովման միջոցով:
- Մշակութային **ժառանգության վայրերին սոցիալական, տնտեսական և բնապահպանական առավելություններ** (կապիտալ) ունեցող **հանրային վայրեր** այդ թվում՝ տնտեսական գործունեության կամ գիտելիքի կենտրոններ, ստեղծագործական գործունեության և մշակույթի հենակետեր, համայնքի անդամների շփման և սոցիալական ինտեգրման վայրեր **դառնալու հնարավորությունների տրամադրում:**
- **Թանգարանների և արխիվների հավաքածուների զարգացում թվայնացման**, ինչպես նաև քաղաքացիների համար լայնորեն հասանելի ցանցերի միջոցով (բայց կան հեղինակային իրավունքի հետ կապված խնդիրներ, որոնք հարկ է լուծել): Թանգարանների **աստիճանաբար ավելի մեծ հարում համայնքային կողմնորոշմանը** (դրանք կառավարում են տեղաբնակները, այդ թվում՝ պատմական իրադարձությունների վերաբերյալ ու մշակութային ժառանգության արժեք-



ների վրա հիմնված պատումների միջոցով), երբ լսարանները նույն մակարդակի կարևորություն ունեն, ինչ հավաքածուները:

- **Քաղաքներում ժառանգության այն վայրերի հնարավորությունները, որոնցում կարող են գտնվել մշակութային և ստեղծարար արդյունաբերությունների կլաստերներ**, իսկ գյուղական և հեռավոր վայրերում գտնվող և կենցաղի մաս կազմող մշակութային ժառանգության համար ապահովել դրանց համապատասխանեցումը համայնքամետ կառավարմանը՝ բարելավելու տնտեսական և սոցիալական ներուժը:

Հաղորդակցությունն այնուհետ շեշտում է այն հանգամանքը, որ մշակութային ժառանգությունը կենտրոնական տեղ է զբաղեցնում *Եվրոպական մշակութային օրակարգում*<sup>4</sup> զգալի ներդրում ունենալով բոլոր երեք նպատակների ձեռքբերման գործում:

- **Մշակութային բազմազանության և միջմշակութային երկխոսության խթանում**. ներհատուկ սոցիալական արժեքի պատճառով մշակութային ժառանգությունը բարելավման գործընթացների առանցքային բաղադրիչ է: Մշակութային ժառանգության թվայնացումը կարևորվում և ընդգծվում է հասանելիության բարելավման նպատակով:
- **Մշակույթի՝ որպես ստեղծարարության համար կատալիզատորի հանրահռչակում**. մշակութային ժառանգության ներուժը ուղղակիորեն և անուղղակիորեն նպաստելու է տնտեսական առաջընթացին, այդ թվում՝ մշակութային և ստեղծարար արդյունաբերությունների համար ամուր հենք հանդիսանալով: Կա հնարավորություն մշակութային ժառանգությունն օգտագործելու տեղական և տարածքային զարգացման, եվրոպական մշակութային և արդյունաբերական ժառանգության շուրջ զբոսաշրջության խթանման, հին հմտությունների և արհեստագործության վերակենդանացման, ինչպես նաև նորերի զարգացման համար (հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում):
- **Մշակութային ժառանգության ոլորտում եվրոպական գիտելիքի և փորձի հանրահռչակում**. որպես եվրոպական հանրային դիվանագիտության մի մաս, ինչպես նաև ԵՄ-ի սահմաններից դուրս ավելի ուժեղ կապերի ստեղծման նպատակով:

#### 4. Եվրոպական Միության խորհուրդ. «Եզրակացություններ մշակութային ժառանգության մասնակցային կառավարման վերաբերյալ» (ընդունվել է Իտալիայի նախագահության օրոք, 2014թ. նոյեմբերին)<sup>4</sup>

Այս «Եզրակացություններն» ընդգծեցին, որ բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավումը մշակութային ժառանգության քաղաքականությունների և ծրագրերի վերաբերյալ որոշումների կայացման, դրանց պլանավորման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման գործում կարող է բարձրացնել հանրային իրազեկության մակարդակը մշակութային ժառանգության ներկայացրած արժեքի մասին, կարող է ամրապնդել հանրային ռեսուրսների օգտագործման թափանցիկությունն ու հաշվետվողականությունը և ամրապնդել վստահությունը քաղաքացիների և պետական մարմինների միջև: Բացի նյութական և ոչ նյութական ժառանգությունից, «Եզրակացություններում» ընդգծվում է թվայնացված ժառանգության կարևորությունը **նորարարական ծառայությունների զարգացման, օրինակ՝ Europeana** կայքէջի<sup>5</sup> մշակումը, որը հնարավորություն է տալիս մարդկանց ուսումնասիրել Եվրոպայի պատկերասրահների, թանգարանների, գրադարանների, արխիվների և տեսաձայնային հավաքածուները թվային ռեսուրսների միջոցով: «Եզրակացություններում» այնուհետ մանրամասն ներկայացվում են **մշակույթի և զբոսաշրջության հատվածների միջև սիներգիաների հնարավորությունները**: «Եզրակացություններում» նաև ներառված է առաջարկ Եվրահանձնաժողովին՝ հայտարարել **«Մշակութային ժառանգության եվրոպական տարի»**:

<sup>4</sup> [http://eur-lex.europa.eu/legal-ontent/EN/TXT/PDF/?uri=CELEX:52014XG1223\(01\)&from=EN](http://eur-lex.europa.eu/legal-ontent/EN/TXT/PDF/?uri=CELEX:52014XG1223(01)&from=EN)

<sup>5</sup> Տե՛ս <http://www.europeana.eu/portal/en>

## 5. Եվրախորհրդարանի՝ 2015թ. սեպտեմբերի 8-ի բանաձևը՝ «Եվրոպայում մշակութային ժառանգության նկատմամբ ինտեգրված մոտեցմանն ընդառաջ»<sup>6</sup>

Եվրահանձնաժողովի՝ «Եվրոպայում մշակութային ժառանգության նկատմամբ ինտեգրված մոտեցմանն ընդառաջ» հաղորդակցությունը ողջունվեց Եվրոպական համայնքների հանձնաժողովի կողմից 2015թ. ապրիլի 16-ի Կարծիքում, և Եվրախորհրդարանի կողմից, որն ընդունեց Բանաձևը 2015թ. սեպտեմբերի 8-ին:

### Բանաձևը կրկին շեշտում է հետևյալի անհրաժեշտությունը.

Ինտեգրված մոտեցում, այդ թվում.

- ի շահ մշակութային երկխոսության և փոխըմբռնման՝ հաշվի առնելով մշակութային, տնտեսական, սոցիալական, պատմական, կրթական, բնապահպանական և գիտական բաղադրիչները, նպատակ հետապնդելով հասնել ընդլայնված սոցիալական, տնտեսական և տարածքային համերաշխության,
- և **Մշակութային ժառանգության եվրոպական տարվա** գործողությունների մշակման նպատակով, որոնք նպաստեն այս ամենի ներդրմանը:

Ֆինանսավորում, այդ թվում՝

- համատեղել երեք հիմնական բաղադրիչներին ուղղված ԵՄ ֆինանսավորման մասին տեղեկատվությունը. նյութական և ոչ նյութական մշակութային օբյեկտների և դրանց հարաբերակից լավագույն աշխատակարգերի տվյալների շտեմարան, մշակութային ժառանգության **ֆինանսավորման հնարավորություններ**, ինչպես նաև **մշակութային ժառանգության վիճակի մասին տվյալներ** և այլ հարակից խնդիրներ, ինչպիսիք են կլիմայի փոփոխությունները և վերականգնման նախագծերի մանրամասները (որպես լավագույն փորձի օրինակ),
- **գիտակցել այնպիսի ուսումնասիրությունների, հետազոտությունների և փորձնական միջոցառումների** անհրաժեշտությունը, որոնց շրջանակներում **վերլուծության կենթարկվեն մշակութային ժառանգության հանրահռչակման ազդեցությունը և կոնկրետ ցուցանիշների ու հենանիշերի մշակման** կարիքները՝ մշակութային ժառանգության տնտեսական և սոցիալական զարգացման գործընթացների նկատմամբ ունեցած ուղղակի և անուղղակի նպաստի առնչությամբ, այս կերպ ուղղակիորեն աջակցելու մշակութային և սոցիալական նորարարությունը այնպիսի տեղական համայնքներում, որտեղ մշակութային ժառանգությունը կարող է առաջ մղել զարգացումը և բարելավել կյանքի որակը (ըստ *Տարրի կոնվենցիայի* ),
- խրախուսել **պետական-մասնավոր գործընկերությունը** և **ուժեղացնել բազմաթիվ աղբյուրներից ֆինանսավորման մոտեցումները**,
- ուսումնասիրել վերականգնման, պահպանման և պաշտպանության աշխատանքների նկատմամբ **հարկային արտոնություններ** կիրառելու հնարավորությունները, մասնավորապես այն պատճառով, որ մշակութային ժառանգության մեծ մասը կառավարում են մասնավոր մարմինները, **դիտարկել և փոխանակել Եվրոպայի լավագույն փորձը՝** ապահովելու մասնավոր հատվածի կողմից նյութական և ոչ նյութական ժառանգության նախագծերին աջակցության առավելագույն խրախուսումը, առավելագույնի հասցնելու տեղական համայնքներում տնտեսական զարգացման և սոցիալական համերաշխության ազդեցությունները:
- **Կառավարման նոր մոդելներ**, այդ թվում՝
- **դիտարկել համատեղ օգտագործվող ռեսուրսների հայեցակերպերը** (ըստ *Տարրի կոնվենցիայի* ),
- **նկատի առնել այնպիսի նոր իրավական գործիքներ**, որոնք հնարավորություն կտան կիրառել **ֆինանսավորման և վարչարարության այնպիսի այլընտրանքային մոդելներ**, ինչպիսիք են համայնքային զարգացումը, քաղաքացիական հասարակության մասնակցությունը, պետական - մասնավոր գործընկերության ձևաչափը,

<sup>6</sup> Եվրախորհրդարանի 2015թ. սեպտեմբերի 8-ի Բանաձևը՝ «Եվրոպայում մշակութային ժառանգության նկատմամբ ինտեգրված մոտեցմանն ընդառաջ» (2014/2149(INI)) P8\_TA(2015)0293



- գտնել **հավասարակշռություն մշակութային ժառանգության կայուն պահպանման և տնտեսական ու սոցիալական ներուժի զարգացման միջև,**
- ստեղծել **երկխոսություն կառավարման տարբեր մակարդակների, մշակութային և ստեղծարար արդյունաբերությունների, զբոսաշրջային-օպերատորների ցանցերի, պետական և մասնավոր հատվածի գործընկերների և հասարակական կազմակերպությունների միջև,**
- կատարել մշակութային ժառանգության զարգացման **ազդեցության գնահատում:**

**Մշակութային ժառանգության տնտեսական ու ռազմավարական ներուժը՝**  
ներառյալ

- ընդունել, որ **մշակութային ժառանգությունն ունի բարձր որակավորում պահանջող աշխատատեղեր ստեղծելու կարողություն,**
- ավելի շատ ուշադրություն կենտրոնացնել **մշակութային զբոսաշրջության վրա մակրոտարածքային ներուժը զարգացնելիս** (նաև 'soft travel' նախաձեռնությունների) և տեղական զարգացման ռազմավարությունների միջոցով, ինչպես նաև **խթանել մշակութային ժառանգության և զբոսաշրջության համատեղ ծրագրերը,**
- խթանել **մշակութային և ստեղծարար ոլորտներում նորարարությունը և մրցակցությունը,** հատկապես աջակցելով արվեստագետներին, հեղինակներին և մշակութային ոլորտի այլ մասնագետներին,
- բարելավել մեթոդաբանական շրջանակները՝ ապահովելու **մշակութային ժառանգության վերաբերյալ ավելի որակյալ վիճակագրություն,** այդ թվում՝ **մշակութային ժառանգության մշտադիտարկման և գնահատման համար ցուցանիշների համակազմ** մշակելով և **մշակութային ժառանգության իրական և հավանական տնտեսական արժեքի գնահատում իրականացնելով** (ավելի համակարգված կերպով),
- ճանաչել **երիտասարդների զբաղվածության** համար մշակութային ժառանգության ներուժը, ամրապնդել կրթության և մասնագիտական գործունեության միջև կապը, օրինակ՝ ուսուցման/վերապատրաստման և ՓՄՁ-ներում ստարտափների միջոցով, ինչպես նաև նորարարական ֆինանսավորման, ուսուցման և աշխատողների շարժունության բարելավման միջոցով,
- ճանաչել ձեռնարկատիրական գործունեության զարգացման ներուժը, հատկապես զբոսաշրջային ՓՄՁ-ների, ստարտափերի, շահույթ չհետապնդող հատվածի համար և նվազեցնել ՓՄՁ-ների վրա ավելորդ բեռը/իրավական սահմանափակումները:

**Հնարավորություններ և մարտահրավերներ՝** ներառյալ՝

- **մշակութային ժառանգության թվայնացումը** (բարելավելու պահպանությունը, տրամադրելու կրթական հնարավորություններ, ստեղծելու աշխատատեղեր, բարելավելու սոցիալական համերաշխությունը և ընդլայնելու հասանելիությունը, հատկապես հաշմանդամություն ունեցող և հեռավոր վայրերում բնակվող անձանց համար),
- **շեշտադրել միջմշակութային երկխոսության կարևորությունը, ազգային փոքրամասնությունների առանձնահատկությունները և կրոնական ժառանգության պահպանության անհրաժեշտությունը՝ անկախ կրոնական ծագումից,**
- **խրախուսել մշակութային ժառանգության օգտագործումը որպես հասարակական խնդիրների վերաբերյալ կրթական գործիք:**

Մրանք են Բանաձևում բարձրացված առանցքային խնդիրներից մի քանիսը, բայց կան շատ այլ հարցեր, որոնց քննության համար կպահանջվի հաշվի առնել հենց բանաձևը:

**6. Մշակութային ժառանգությունը Եվրոպային ի նպաստ ծառայեցնելը. Մշակութային ժառանգության վերաբերյալ Հորիզոն 2020-ի փորձագիտական խմբի զեկույցը (2015)<sup>7</sup>**

Այս փաստաթուղթը սահմանում է նորարարական քաղաքականության շրջանակի համար առաջարկները և մինչև 2020թ. **մշակութային ժառանգության վերաբերյալ հետազոտության և նորարարության** օրակարգը (դրա մասին մանրամասն տե՛ս ստորև՝ Բաժին 7, 8): Այն ներկայացնում է Մշակութային ժառանգության փորձագիտական խմբի բացահայտումները, որոնք ստացվել են Հորիզոն 2020-ի Աշխատանքային ծրագիր 2014-ի ներքո՝ «Կլիմայի փոփոխության դեմ գործողություններ, շրջակա միջավայր, ռեսուրսների արդյունավետություն և հումք»<sup>8</sup> հասարակական մարտահրավերի առնչությամբ: Այն կրկին շեշտադրում է **մշակութային ժառանգության դերը որպես համախառն ներքին արդյունքին (ՀՆԱ) դրական նպաստ բերող ոլորտի, որը տնտեսական առավելությունների է հանգեցնում** գրոսաշրջության հետ առնչությունների շնորհիվ, բայց նաև բազմապիսի ավանդական և նոր արդյունաբերություններում **նորարարական խթանիչ ուժ է՝ միտված աճին և զբաղվածության ընդլայնմանը**: Այն կրկին շեշտադրում է մշակութային ժառանգության **հսկայական ներդրումը** համայնքների **սոցիալական համերաշխության ապահովման հարցում** և խթան է երիտասարդների բնապահպանական գործունեության համար:

Զեկույցն առաջ է քաշում և պնդում այն դրույթը, թե Եվրոպական Միությունը պետք է **ակտիվորեն հանրահռչակի ժառանգության նորարարական կիրառումը հանուն տնտեսական աճի, աշխատատեղերի ստեղծման, սոցիալական համերաշխության և բնապահպանական կայունության, մասնավորապես այն պատճառով, որ մշակութային ժառանգության դրական փորձը դեռևս համատարած չէ**. շատ վայրերում դեռևս ճանաչված չէ տեղերում առկա վերականգնման և վերանորոգման ներուժը:

Զեկույցը կենտրոնանում է տնտեսական, հասարակական և բնապահպանական խնդիրների վրա՝ համարելով դրանք մշակութային ժառանգության վերաբերյալ հետազոտության և նորարարության հետ կապված հետազոտական խնդիրներ:

**Տնտեսություն.** Նորարարական ֆինանսավորման, ներդրումների, կառավարման և բիզնես մոդելների խթանում՝ մեծացնելու մշակութային ժառանգության՝ որպես տնտեսական արտադրության գործոնի արդյունավետությունը:

Այս կապակցությամբ զեկույցում նշվում է.

«Այսպիսի մոդելի դեպքում պետական հատվածին կարելի է կոչ անել փոխել իր կենտրոնացումը մշակութային ժառանգության նկատմամբ առկա մոտեցման շրջանակներում: Թանգարանները և նմանատիպ այլ բաղադրիչները բնական մենաշնորհ համարելու փոխարեն հարկ է խթանել նաև մասնավոր հատվածի ներգրավումը այնպիսի գործիքների միջոցով, ինչպիսիք են՝ հարկային արձակուրդները, տարբերակված ԱԱՀ տոկոսադրույքները, լավ մշակված դրամաշնորհային կամ վարկային ծրագրերը, պետական և մասնավոր հատվածների գործընկերության (PPP) սխեմաները, իրավունքների տրամադրումը և այլն: Այն պետք է ընդհանուր առմամբ ստեղծի ավելի բարենպաստ միջավայր, որը կխրախուսի մասնավոր հատվածին՝ ներդրումներ կատարել մշակութային ժառանգության ոլորտում»:

**Հասարակություն.** Մշակութային ժառանգության նորարարական օգտագործման խթանում՝ խրախուսելու ինտեգրումը, ներառականությունը, համերաշխությունը և մասնակցությունը:

<sup>7</sup> Տե՛ս <https://ec.europa.eu/programmes/horizon2020/en/news/getting-cultural-heritage-work-europe>

<sup>8</sup> Տե՛ս [http://ec.europa.eu/research/participants/data/ref/h2020/wp/2016\\_2017/main/h2020-wp1617-climate\\_en.pdf](http://ec.europa.eu/research/participants/data/ref/h2020/wp/2016_2017/main/h2020-wp1617-climate_en.pdf)





**Երկրաշարժի զոհերին նվիրված հուշարձան**

*(պատկերի սեղանադրուշ)*

Այս կապակցությամբ զեկույցում նշվում է.

«...Մշակութային ժառանգությունն ավանդաբար հասկո՞րոշվել, պաշտպանվել և պահպանվել է մշակութային ժառանգության ոլորտի մասնագետների և/կամ մշակութային ժառանգությամբ մասնագիտացված կերպով զբաղվող հաստատությունների կողմից: Թեև սա հանգեցրել է բազում դրական արդյունքների, այն նաև ձևավորել է մշակութային ժառանգության կառավարման այնպիսի համակարգ, որի շրջանակներում տեղական համայնքները հաճախ շատ փոքր պատասխանատվություն են կրում իրենց իսկ մշակութային լանդշաֆտների, հուշարձանների, հավաքածուների և ոչ նյութական ժառանգության համար... Մի այնպիսի ժամանակահատվածում, երբ սպականոնակարգումը և սպակենտրոնացումը դարձել են քաղաքականության նպատակներ գրեթե բոլոր եվրոպական երկրներում, ազդեցիկ փաստարկներ կան մշակութային ժառանգության և լանդշաֆտների կառավարման համար նոր համատեղ ձևաչափերի օգտին: Այս փաստարկները էլ ավելի հիմնավոր են դառնում մշակութային ժառանգության պաշտպանության և կառավարման համար կենտրոնական բյուջեից հատկացումների կրճատման և այդ ոլորտը ստանձնելու համար առևտրային շուկաների սահմանափակ կարողությունների ֆոնին»:

**Շրջակա միջավայր.** Խթանել մշակութային ժառանգության նորարարական և կայուն օգտագործումը՝ հնարավորություն տալով իրացնել եվրոպական լանդշաֆտների և բնական միջավայրերի կայուն զարգացմանը նպաստող ողջ ներուժը:

Այս կապակցությամբ զեկույցը որոշարկում է.

«... մշակութային լանդշաֆտների վերաբերյալ հետազոտության, դրանց պլանավորման ու կառավարման գործառույթներն ավանդաբար տարամիտված են եղել: Գիտությունը հաճախ միջգիտակարգային չէ, քաղաքականությունը հիմնականում միտված է մեկ եզակի ոլորտի, իսկ լանդշաֆտների կառավարումն ի ցույց է դնում լուրջ տարամիտում բնության և մշակութային ժառանգության կառավարման միջև: Սա հաճախ հանգեցնում է թերի և թյուր հաղորդակցության, ռեսուրսների անարդյունավետ օգտագործման և մշակութային և բնապահպանական արժեքների կորստի»:

Զեկույցն **առաջարկում է չորս հետազոտական գործողություն՝ ամրապնդելու ժառանգության դերը որպես Եվրոպայի հիմքում ընկած սոցիալ-տնտեսական, մշակութային և բնական կապիտալի մի մաս**, որոնցից յուրաքանչյուրը կարող է նպաստել աճին, աշխատատեղերի ստեղծմանը և սոցիալական համերաշխության ու մասնակցության ամրապնդմանը, ինչպես նաև կառավարման մոդելների վրա կենտրոնացմանը.

**ա) Մշակութային ժառանգության վրա հիմնված քաղաքային վայրերի վերականգնում**

Բազմաթիվ եվրոպական պատմական քաղաքներ ընդունել են հմուտ և տաղանդավոր մարդիկ, զբոսաշրջիկներ և ներդրումներ գրավելու իրենց հզոր մագնիսային ներուժը, այնինչ մի շարք այլ քաղաքներ վատ վիճակում են գտնվում գործազրկության, տնտեսական լճացման և սոցիալական խնդիրների պատճառով, քանի որ քաղաքացիական ձգտումների բացակայությունն է հաճախ ընկած քաղաքների քայքայման հիմքում: Հետազոտական օրակարգն ուղղված է գիտելիքը, փորձը, պատշաճ աշխատակարգերը և հաջողված փորձը տարածելուն, ինչպես նաև մշակութային ժառանգության հաջող վերականգնման նպատակով կառավարման կառույցների, ֆինանսական գործիքների, ներգրավման միջոցների և իրավական շրջանակների ապացույցներ և օրինակներ տրամադրելուն: (Տե՛ս Հետազոտական հայտի հրավեր. SC5-21-2016-2017: Մշակութային ժառանգությունը որպես կայուն աճի մղող ուժ.

ա) Ժառանգության վրա հիմնված քաղաքային վայրերի վերականգնում (2016թ.):

### բ) Մշակութային լանդշաֆտների պահպանում

Նույն կերպ բազմաթիվ գյուղական վայրեր են ենթարկվել քայքայման, բնակիչների արտահոսքի և մարզինսպացման: Այդ իսկ պատճառով զուգահեռ հետազոտական օրակարգ է առաջ քաշվել՝ տրամադրելու մշակութային ժառանգության հաջող վերականգնման հասնելու համար կառավարման կառույցների, ֆինանսական գործիքների, ներգրավման միջոցների և իրավական շրջանակների ապացույցներ և օրինակներ: (Տե՛ս Հետազոտական հայտի հրավեր. SC5-21-2016-2017. Մշակութային ժառանգությունը որպես կայուն աճի մղող ուժ. բ) Ժառանգության վրա հիմնված գյուղական վայրերի վերականգնում (2017թ.):)

### գ) Ներառական կառավարում

#### դ) Մշակութային ժառանգության համար նորարարական բիզնես մոդելներ

Այս երկու հայեցակետերին անդրադարձը եղել է «Հետազոտական հայտերի հրավեր SC5-22-2017. Ֆինանսավորման, բիզնես և կառավարման նորարարական մոդելներ մշակութային ժառանգության հարմարունակ վերաօգտագործման համար» ծրագրի շրջանակներում: Այն կենտրոնանում է պատմական արժեքների վրա, որոնք այս պահին չեն գործածվում ըստ իրենց առաջնային գործառնական նշանակության, օրինակ՝ եկեղեցիներն այլևս չեն օգտագործվում պաշտամունքի համար, արդյունաբերական շինություններն այլևս չեն օգտագործվում արտադրության համար, գյուղատնտեսական շինություններն այլևս չեն օգտագործվում գյուղատնտեսական նպատակներով, մշակութային լանդշաֆտները քայքայվում են և այլն: Հիմնականում այս արժեքների հարմարունակ վերաօգտագործման ծախսերը չեն կարող հոգալ պետական հատվածը կամ մասնավոր հատվածը՝ իր ավանդական, ներդրումների շահութաբերության վրա հիմնված մոդելների միջոցով: Այդ իսկ պատճառով հետազոտությունն ուղղված է ֆինանսավորման, բիզնես և կառավարման նորարարական մոդելների քննությանը, որոնցով հնարավոր է լրացնել այս «ներդրումային բացը» և իրականացնել պատմական նյութի պահպանումը, դրա ինտեգրումը ժամանակակից աշխարհին՝ ապահովելով մշակութային ժառանգության ներակա արժեքների արժևորումը ժամանակակից հասարակությունների կողմից՝ առավելագույնս հարմարունակ վերաօգտագործման աշխատակարգերի միջոցով:

**7. «Եվրոպական մշակութային ժառանգությունը՝ թվերով»** (CHCfE) (հրատարակվել է 2015թ. հունիսին անգլերեն, այնուհետ՝ թարգմանաբար 2016թ.)<sup>9</sup>

«Մշակութային ժառանգությունը Եվրոպային ի նպաստ ծառայեցնելը» զեկույցի միջոցով տարածված ուղերձները հետազայում ամրապնդվում են «Եվրոպական մշակութային ժառանգությունը՝ թվերով. դեպի մշակութային ժառանգության արժևորման եվրոպական համաթիվ» ուսումնասիրությունում, որը ԵՄ-ի Մշակութային ծրագրի (2007-2013թթ.) կողմից ֆինանսավորվող երկամյա նախագիծ էր: Դրա նպատակն էր բարձրացնել մշակութային ժառանգության բազմակի օգուտների մասին իրազեկության մակարդակը և հանդես գալ քաղաքականությանը վերաբերող առաջարկություններով, որոնք կապահովեն մշակութային ժառանգության ներուժի լիարժեք իրացումը: Գնահատվել են Եվրոպայի տարբեր մասերում գտնվող մշակութային ժառանգության բազմակի օգուտները բազմաթիվ դեպքերի ուսումնասիրությունների, եվրոպական նախագծերի, եվրոպական, ազգային, տարածաշրջանային և տեսական հետազոտությունների և զեկույցների հիման վրա՝ տրամադրելով ապացույցներ առ այն, թե ինչպես են մշակութային ժառանգության տարբեր հայեցակետերը հանգեցնում սոցիալական և տնտեսական օգուտների: Այս ուսումնասիրության արդյունքները մեծապես կիրառվել են հետագա հետազոտություններում, և եվրոպական երկրներին խորհուրդ է տրվել դրանք հաշվի առնել:

<sup>9</sup> Տե՛ս [http://blogs.enactc.org/culturalheritagecountsforeurope/wp-content/uploads/2015/06/CHCfE\\_REPORT\\_ExecutiveSummary\\_v2.pdf](http://blogs.enactc.org/culturalheritagecountsforeurope/wp-content/uploads/2015/06/CHCfE_REPORT_ExecutiveSummary_v2.pdf) (սեղմագիրը) և [http://blogs.enactc.org/culturalheritagecountsforeurope/wp-content/uploads/2015/06/CHCfE\\_FULL-REPORT\\_v2.pdf](http://blogs.enactc.org/culturalheritagecountsforeurope/wp-content/uploads/2015/06/CHCfE_FULL-REPORT_v2.pdf) հիմնական զեկույցը:



«Եվրոպական մշակութային ժառանգությունը՝ թվերով» նախագծի հայեցակարգային շրջանակը և իրականացման ձգտումները հիմնված էին *Տարոյի կոնվենցիայի*, ինչպես նաև *Հանգժուի հռչակագրի* (որն ավելի շուտ ընդունվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո)<sup>10</sup> սկզբունքների և ոգու վրա: *Տարոյի կոնվենցիան մարդկանց և մարդկային արժեքները դնում է մշակութային ժառանգության նորովի ընկալման կենտրոնում* (տե՛ս վերը), այնինչ *Հանգժուի հռչակագիրը* ճանաչում է *մշակութային ժառանգության նշանակությունը որպես կայուն զարգացումն առաջ մղող ուժ*:

Իրականում զեկույցը որոշարկում է, որ «Եվրոպական մշակութային ժառանգությունը՝ թվերով» նախագծին հանգեցրած քաղաքականության փոփոխությունն ամրապնդվել է ԵՄ-ի մակարդակում մշակութային ժառանգության կարևորության ավելի մեծ գիտակցմամբ, մասնավորապես «Մշակութային ժառանգությունը՝ որպես կայուն Եվրոպայի ռազմավարական ռեսուրսի» ԵՄ-ի Եզրակացությունների, «Մշակութային ժառանգության մասնակցային կառավարման մասին եզրակացությունների», «Եվրոպայի համար մշակութային ժառանգության նկատմամբ միասնական մոտեցմանն ընդառաջ» հաղորդակցության, ինչպես նաև Եվրահանձնաժողովի՝ «Մշակութային ժառանգությունը Եվրոպային ի նպաստ ծառայեցնելը» զեկույցի շնորհիվ: Բացի այդ, *մշակույթի ոլորտում 2015-2018թթ. աշխատանքային պլանի վերաբերյալ ԵՄ-ի խորհրդի եզրակացություններով մշակութային ժառանգությունը չորս հիմնական գերակայությունների թվում էր*: Այստեղ մատնանշվեց *մշակութային վիճակագրության ոլորտում ԵՄ-ի ներդրումներ կատարելու անհրաժեշտությունը՝ որպես մշակութային ժառանգության վերաբերյալ ապացուցահեն քաղաքականության մշակման նախապայման*:<sup>11</sup>

Ավելին, «Եվրոպական մշակութային ժառանգությունը՝ թվերով» զեկույցը հատկորոշեց մշակութային ժառանգության տեղը ավելի ընդլայնված Եվրոպական, այն է՝ Եվրախորհրդի (որի անդամ է Հայաստանը) մակարդակում՝ մշակութային ժառանգության քաղաքականության նկատմամբ առաջնորդվելով *Նամուրի հռչակագրով*, որն ընդունվեց Մշակութային ժառանգության համար պատասխանատու Նախարարների 6-րդ համաժողովի կողմից (22-24 ապրիլ, 2015թ.): Այն կոչ է անում ունենալ «մեկ համաեվրոպական ռազմավարություն մշակութային ժառանգության համար» և շուտով կվերջնականացվի (տե՛ս ստորև):

«Եվրոպական մշակութային ժառանգությունը՝ թվերով» ուսումնասիրությունը առաջադրում է 10 հիմնական եզրահանգում և ներկայացնում է 5 առաջարկ:

*Հիմնական բացահայտումների համառոտ նկարագիրը.*

- ա) Մշակութային ժառանգությունը **Եվրոպայի համայնքների, քաղաքների և գյուղական վայրերի գրավչությանը** նպաստող հիմնական բաղադրիչներից է մասնավոր հատվածի կողմից երկրի ներսում ներդրումների, մշակութային ստեղծարար շրջանակների զարգացման և տաղանդներ ու ազատ բիզնեսներ գրավելու առումով՝ այս կերպ մեծացնելով համայնքների մրցունակությունը թե՛ Եվրոպայի ներսում, թե՛ համաշխարհային մակարդակում:
- բ) Մշակութային ժառանգությունը Եվրոպական երկրներին և համայնքներին տրամադրում է **եզակի ինքնություն**, որը ստեղծում է գրավիչ քաղաքային պատումներ: Դրանք էլ հիմք են հանդիսանում մշակութային զբոսաշրջության զարգացման և ներդրումների ներգրավման արդյունավետ մարքեթինգային ռազմավարությունների համար:
- գ) Մշակութային ժառանգությունը **կարևոր գործոն է ողջ Եվրոպայում աշխատատեղերի ստեղծման առումով**՝ ստեղծելով տարբեր տեսակի և որակավորման մակարդակ պահանջող աշխատատեղեր, որոնք կարող են լինել պահպանության հետ կապված շինարարության, նորոգման և տեխնիկական սպասարկման ու ընթացիկ պահպանման, մշակութային զբոսաշրջության ոլորտներում, ինչ-

<sup>10</sup> Հանգժուի հռչակագիրը «Մշակույթը՝ կայուն զարգացման քաղաքականությունների կենտրոնում»:

Ընդունվել է Հանգժուում, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, 17 մայիսի 2013թ.  
Տե՛ս <http://www.unesco.org/fileadmin/MULTIMEDIA/HO/CLT/images/FinalHangzhouDeclaration20130517.pdf>

<sup>11</sup> Տե՛ս <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52014XG1223%2802%29&from=EN>

պես նաև փոքր և միջին ձեռնարկություններ (ՓՄՁ-ներ) և ստարտափներ՝ հաճախ ստեղծարար արդյունաբերություններում:

- դ) Մշակութային ժառանգությունը կարևոր **աղբյուր է ստեղծարարության և նորարարության**, նոր գաղափարների հղացման և խնդիրների համար՝ նոր լուծումների որոնման, մշակութային արժեքների թվայնացման, պատմական միջավայրերի և շինությունների մասին մեկնաբանությունների, դրանք քաղաքացիներին ու այցելուներին հասանելի դարձնելուն միտված առաջանցիկ վիրտուալ իրականության տեխնոլոգիաների կիրառմամբ՝ նորարարական ծառայությունների ստեղծման միջոցով:
- ե) Մշակութային ժառանգության մասին վկայություններն ապացուցում են, որ այն **ներդրումների լավ շահութաբերություն ապահովող ոլորտ է և պետական իշխանությունների համար հարկային մուտքերի կարևոր աղբյուր է**, որոնք ստացվում են թե՛ մշակութային ժառանգությանն առնչվող տնտեսական գործունեության ոլորտներից, թե՛ անուղղակիորեն մշակութային ժառանգությանը միտված ծրագրերի ընդլայնված ազդեցությունից, ինչն էլ հանգեցնում է հետագա ներդրումների:
- զ) Մշակութային ժառանգությունը **խթանում է վերականգնողական գործընթացները՝ որպես հիմք օգտագործելով հենց այդ ժառանգությունը**:
- է) Մշակութային ժառանգությունը Եվրոպայի կողմից **կլիմայի փոփոխության մարտահրավերների** լուծման մի մասն է կազմում, օրինակ՝ պատմական շինությունների ֆոնդում ներկառուցված հսկայական էներգետիկ հնարավորությունների պաշտպանության և վերագործարկման միջոցով:
- ը) Մշակութային ժառանգությունը նպաստում է **կյանքի որակի բարելավմանը՝** Եվրոպայի բոլոր քաղաքներին, համայնքներին ու բնակելի թաղամասերին հաղորդելով ուրույն կերպար և բնութագիր՝ դարձնելով դրանք աշխատանքի, բնակության և այցելության համար սիրված վայրեր, որոնք հավասարապես գրավիչ են բնակիչների, զբոսաշրջիկների և ստեղծագործողների համար:
- թ) Մշակութային ժառանգությունը էական **խթան է տալիս կրթությանն ու ցկյանս ուսումնառությանը՝** այդ թվում նաև նպաստելով պատմության ավելի լավ ընկալմանը, քաղաքացիական հպարտության և պատկանելության զգացմունքների խորացմանը և ակտիվացնում է համագործակցությունն ու անձի զարգացումը:
- ժ) Մշակութային ժառանգությունը համատեղում է վերոհիշյալ դրական հայեցակետերից շատերը՝ **սոցիալական կապիտալի ձևավորման** նպատակով, և օգնում է Եվրոպայի բոլոր համայնքներում հասնել սոցիալական համերաշխության՝ տրամադրելով մասնակցության և ներգրավման, ինչպես նաև ինտեգրման խթանման հենք:

«Եվրոպական մշակութային ժառանգությունը՝ թվերով» զեկույցի 5 ռազմավարական առաջարկություններն ուղղված են ԵՄ անդամ-պետություններին, բայց վերաբերելի են Եվրոպական բոլոր երկրներին.

ա) **Աջակցել ապացուցահեն քաղաքականությունների մշակմանը.**

- Խթանել այնպիսի քանակական և որակական տվյալներ հավաքագրելու, կառավարելու և մեկնաբանելու համակողմանի մոտեցումը, որոնք կարող են ցույց տալ Եվրոպայի տնտեսության, հասարակության, մշակույթի և շրջակա միջավայրի վրա մշակութային ժառանգության ազդեցությունը,
- Կիրառել այն շրջանակը, որը տրամադրում է ծրագիր/սախագիծ՝ հատկորոշելու, սահմանելու և դասակարգելու մշակութային ժառանգության ազդեցության ցուցանիշները,
- Աջակցել ոլորտի պրակտիկ մասնագետների պատշաճ ուսուցմանը, որոնք պատասխանատու են մշակութային ժառանգության ազդեցության գնահատումներ իրականացնելու և մշակութային (ժառանգության) վիճակագրության տրամադրման համար:

**բ) Չափել ազդեցությունը.**

- Ապահովել մշակութային ժառանգության ազդեցության չափումը ավելի համակարգված և համակողմանի եղանակով բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերի և օպերատորների կողմից.

- o Պատշաճ աշխատակարգերի հատկորոշման և տարածման միջոցով,
- o ԵՄ-ից ֆինանսավորում ստացող ծրագրերի համար ազդեցության համակողմանի գնահատմամբ՝ թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ ազդեցությունների չափման պահանջ ներմուծելով:

**գ) Մշտադիտարկել միտումները**

- Մշտադիտարկել ավելի երկար ժամանակահատվածի կտրվածքով մշակութային ժառանգությանը վերաբերող միտումները՝ տեղեկություններ տրամադրելու քաղաքականություն մշակողներին բոլոր մակարդակներում (հատկապես ԵՄ մակարդակում) հետևյալի միջոցով.

- o Մշակութային ժառանգության արժեքների վիճակի, մշակութային ժառանգությանը վերաբերող ճնշումների և մասնակցության մակարդակների մասին կանոնավոր զեկույցներ կազմելու և հրապարակելու միջոցով,
- o Այսպիսի զեկույցների միջոցով արձագանքելով կոնկրետ թեմաների, ինչպես նաև համայնքների մասին գիտելիքների զգալի բացերին:

**դ) Փոխանցել և տարածել տվյալները**

- Իրականացնել տվյալների շարունակական հավաքագրում և քարտեզագրում, ինչը հնարավորություն կտա ապագայում քաղաքականություն մշակելիս տեղեկատվության վրա հիմնված ընտրություն կատարել հետևյալի շնորհիվ.

- o «Եվրոպական մշակութային ժառանգությունը՝ թվերով» նախագծի միջոցով հավաքագրված տվյալները լայնորեն ու անվճար հասանելի դարձնելով բոլոր շահագրգիռ կողմերին,
- o «Եվրոպական մշակութային ժառանգությունը՝ թվերով» հարցումը դարձնելով բաց և լայնորեն հասանելի աղբյուր, որի ընդգրկման և բովանդակության ծավալները կարող են ընդլայնվել,
- o Խրախուսելով տարածքային և տեղական իշխանություններին օգտվել այս նախագծի բացահայտումներից և օգտագործել դրանք որպես կարողությունների զարգացման գործիք և պատշաճ աշխատակարգերի ուղեցույց:

**ե) Առավելագույնի հասցնել ազդեցությունը**

- Եվրոպական մակարդակում վերջերս ընդունված քաղաքականության փաստաթղթերին համապատասխան՝ առավելագույնի հասցնել մշակութային ժառանգության միջուկորտային ազդեցությունները հետևյալի միջոցով.

- o Կառավարման տարբեր մակարդակներում՝ եվրոպական, ազգային, տարածքային և տեղական իշխանությունների կողմից մշակութային ժառանգության նկատմամբ ինտեգրված մոտեցման որդեգրմամբ և իրականացմամբ, ինչը կապահովի ժառանգության բոլոր հայեցակետերի միավորումը՝ ինտեգրելով դրա պահպանությունը, պաշտպանությունն ու պատշաճ օգտագործումը բոլոր հարակից քաղաքականություններում, ծրագրերում և գործողություններում: Բացի այդ, մշակութային ժառանգության ոլորտում ներքևից վերև ուղղորդվող ներդրումներից տարբեր քաղաքականությունների ոլորտներում վերևից ներքև ստացվող օգուտների մասին իրազեկության բարձրացմամբ:
- o Մշակութային ժառանգության ոլորտում զարգացման ռազմավարությունների և քաղաքականությունների մշակման գործում բոլոր շահագրգիռ կողմերի և քաղաքացիական հասարակության կառուցվածքային և համակարգային ներգրավման միջոցով մասնակցային կառավարման ամրապնդմամբ,
- o Հատուկ կենտրոնանալով և ճանաչելով ժառանգության բերած դրական նպաստը տարածքային և տեղական կայուն զարգացմանը՝ որպես «խելացի, կայուն և ներառական աճի» համար ռազմավարական ռեսուրս և «որպես ներառական, նորարարական և մտածող հասարակությունների» ձևավորմանը նպաստող հիմք (մինչև 2020թ. և այնուհետ եվրոպական ֆինանսավորման մասին կարծիքների համաձայն):



**8. «Միջազգային մշակութային հարաբերությունների ռազմավարությունը»,** որը ներկայացվել է Եվրահանձնաժողովի և Արտաքին գործերի ու անվտանգության հարցերով ԵՄ բարձր ներկայացուցչի կողմից (2016թ. հունիսի 8-ի մամլո հաղորդագրությունը, Բրյուսել)<sup>12</sup>, նպատակ ունի խրախուսելու մշակութային համագործակցությունը ԵՄ-ի և նրա գործընկեր երկրների միջև, ինչպես նաև առաջ մղելու այնպիսի աշխարհակարգ, որը հիմնված կլինի խաղաղության, օրենքի գերակայության, արտահայտման ազատության, փոխըմբռնման և հիմնարար արժեքների նկատմամբ հարգանքի վրա:

Մշակութային համագործակցությունը ներառում և անդրադառնում է այն խնդիրներին, որոնք վերաբերում են մշակութային ժառանգությանը, իսկ ռազմավարությունը նպատակ ունի մշակութային ժառանգության պահպանությունը հանրահռչակել որպես ԵՄ-ի արտաքին քաղաքականությունների հիմնական բաղադրիչ: «Միջազգային մշակութային հարաբերություններում դեպի ԵՄ ռազմավարություն» Եվրախորհրդարանի և Խորհրդի համատեղ հաղորդակցությունը (Բրյուսել, 08.06.2016թ. JOIN(2016) 29 վերջնական տարբերակ)<sup>13</sup> հղում է անում *Մշակութային ժառանգության վերաբերյալ համագործակցության ամրապնդմանը* (Բաժին 3.3)<sup>14</sup> շեշտելով, որ մշակութային ժառանգության վերականգնումը և հանրահռչակումը գրավում է զբոսաշրջիկներին և խթանում է տնտեսական աճը, և որ մշակութային ժառանգության ոլորտում համագործակցությունը կարևոր դեր է խաղում միջազգային հարաբերություններում և զարգացմանն ուղղված քաղաքականություններում: Փաստաթուղթն ընդգծում է այն փաստը, որ շատ ԵՄ անդամ-պետություններ պատրաստակամ են՝ կիսվելու իրենց գիտելիքով և փորձով գործընկեր երկրների հետ համատեղ գործունեության հնարավորությունների (օրինակ՝ **Հայաստանը՝ որպես Արևելյան գործընկերության երկիր, Եվրախորհրդի հետ համագործակցությամբ, այդ թվում՝ Պատմական քաղաքների վերականգնման Կիևի նախաձեռնության և ընթացիկ COMUS ծրագրի**) շրջանակներում ուսուցման, հնտությունների զարգացման և գիտելիքների փոխանցման արդյունքում մշակելով մշակութային ժառանգության պաշտպանության կայուն ռազմավարություններ:

Առաջարկվել են **մշակութային ժառանգության վերաբերյալ համատեղ գործողությունների** հետևյալ ոլորտները.

- **Մշակութային ժառանգության վերաբերյալ հետազոտություն** Հորիզոն 2020 ծրագրով, ինչը կաջակցի մշակութային ժառանգության գործողությունների համար հետազոտությանն ու նորարարությանը միջազգային և միջգիտակարգային ծրագրերի շրջանակում: Դրանցում նաև կներգրավվեն տեղական և տարածքային իշխանությունները, բիզնեսները և քաղաքացիական հասարակությունը:<sup>14</sup>

<sup>12</sup> Տե՛ս [http://europa.eu/rapid/press-release\\_IP-16-2074\\_en.htm](http://europa.eu/rapid/press-release_IP-16-2074_en.htm).

<sup>13</sup> Տե՛ս <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52016IC0029&from=EN>

<sup>14</sup> Վերջերս Հորիզոն 2020-ի ծրագրերը սկսել են ներառել նաև «Մշակութային ժառանգության» որպես կայուն աճի մղող ուժի վերաբերյալ հետազոտություններ, ա) Մշակութային ժառանգության վրա հիմնված քաղաքային վերականգնում» (H2020 2016-2017թթ. Աշխատանքային ծրագիր «Կլիմայի փոփոխության դեմ գործողություններ, շրջակա միջավայր, ռեսուրսների արդյունավետություն և հումք» (SC5-21- 2016) և «Պատերազմի մշակութային ժառանգությունը» (H2020-REFLECTIVE-SOCIETY-5-2015): Ավելին, ծրագրերի հայտերից մի քանիսը կգնահատվեն 2017թ. ընթացքում, այդ թվում. «Մշակութային ժառանգությունը որպես կայուն աճի մղող ուժ. բ) Մշակութային ժառանգության վրա հիմնված գյուղական վայրերի վերականգնում» (2017թ.) (SC5-21-2017), «Ֆինանսավորման, բիզնես և կառավարման նորարարական մոդելներ մշակութային ժառանգության հարմարումակ վերածառագործման համար» (SC5- 22- 2017), իսկ H2020-ի 2017թ. աշխատանքային ծրագրի ներքո՝ «Եվրոպայի փոփոխվող աշխարհում՝ ներառական, նորարարական և մտածող հասարակություններ. մասնակցային մոտեցումները և սոցիալական նորարարությունը մշակույթում» (ներառյալ մասնակցային կառավարման գործունեության հետ կապված խնդիրները, այդ թվում՝ ժառանգության տարբեր տեսակների կառավարման մոդելները, առանձնահատկությունները հաշվի առնելը և հասանելիությունը) (CULT-COOP-06-2017), «Վիրտուալ թանգարանները և սոցիալական հարթակը հանուն եվրոպական թվային ժառանգության, հիշողության, ինքնության և մշակութային փոխազդեցության» (CULT-COOP-08-2017), «Եվրոպական մշակութային ժառանգությունը, հասանելիությունը և վերլուծությունը անցյալի ավելի հազեցած մեկնաբանության համար» (CULT-COOP-09-2017): Այս բազմաթիվ գործընկերներ ենթադրող հետազոտական ծրագրերը կարող են զգալի հետաքրքրություն ներկայացնել Հայաստանի համար՝ մեծացնելու մրցունակությունը մշակութային ժառանգության ոլորտում:

- **Պայքար մշակութային ժառանգության թրաֆիքինգի դեմ** մշակութային ապրանքների ԵՄ ներկրման լրացուցիչ կանոնակարգման միջոցով (անկախ ծագման երկրից) հասկոթոշելով ազգային օրենսդրության բացերը և ընդլայնելով գործընկեր երկրների հետ համագործակցությունը, որը միտված կլինի մշակութային ապրանքների թրաֆիքինգի դեմ պայքարին:
- **Մշակութային ժառանգության պաշտպանությունը** (հատկապես աղետներին և հակամարտություններին հաջորդող իրավիճակներում) և մշակութային ժառանգության պաշտպանությանն ու մշակութային բազմազանության հանրահոչակմանն աջակցությունը:  
Այնուամենայնիվ, փաստաթուղթը նաև ընդգծում է **այլ ոլորտներ, որոնք կարող են կապված լինել մշակութային ժառանգության հետ**<sup>15</sup> ներառյալ.
  - Կայուն զարգացման և ներառական աճի խթանումը,
    - Մշակույթը/մշակութային ժառանգությունը կարող են օգնել խթանելու աշխատատեղերի ստեղծումը և մրցունակությունը,
  - Մշակութային և ստեղծարար արդյունաբերությունների ուժեղացում, մասնավորապես.
    - **Ստեղծարար արդյունաբերություններից ստացվող տնտեսական եկամուտների** ավելացում,
    - **Ստեղծարար կենտրոնների և կլաստերների ձևավորում** (համատեղ ստեղծում), այդ թվում, օրինակ, երիտասարդ ստեղծարար ձեռներեցների ցանցին աջակցող փորձնական ծրագրերի միջոցով (ԵՄ և երրորդ երկրներ),<sup>15</sup>
    - **Ձեռներեցություն և հմտությունների ձեռքբերում** մշակութային և ստեղծարար արդյունաբերությունների ոլորտում՝ խթանելով մշակութային ապրանքների ու ծառայությունների համար շուկայական հնարավորությունները և խրախուսելով նորարարությունը և ժամանակակից տեխնոլոգիաներում նոր մասնագիտությունները (օրինակ՝ թվայնացումը),
    - Աջակցություն փոքր և միջին ձեռնարկություններին (ՓՄՁ-ներին),
    - Կանոնարկված տարածքային համագործակցության շրջանակներ, որոնք ցույց կտան, թե ինչպես մշակույթը կարող է կապակցել բազմազանեցված համայնքները, նպաստել կայուն զբոսաշրջությանը, պաշտպանել շրջակա միջավայրը և այլն:

## 9. Մշակութային ժառանգության եվրոպական տարի

2017թ. փետրվարի 9-ին Խորհրդի և Եվրախորհրդարանի ներկայացուցիչները ձեռք բերեցին պայմանական համաձայնություն մի որոշման մասին, որով հայտարարվում էր Մշակութային ժառանգության եվրոպական տարի (2018):<sup>16</sup>

Նախաձեռնությունը հղում է անում Հաղորդակցությանը և Եվրախորհրդարանի՝ «Եվրոպայում մշակութային ժառանգության նկատմամբ ինտեգրված մոտեցմանն ընդառաջ» բանաձևին: Այն վերլուծում և ուսումնասիրում է «Եվրոպական մշակութային ժառանգությունը՝ թվերով» և Հորիզոն 2020-ի փորձագիտական խմբի «Մշակութային ժառանգությունը Եվրոպային ի նպաստ ծառայեցնելը» զեկույցը, ինչպես նաև Մշակութային ժառանգության և համաշխարհային փոփոխության համատեղ ծրագրային նախաձեռնության կողմից մշակված «Ռազմավարական հետազոտությունների օրակարգը»:<sup>17</sup>

Մշակութային ժառանգության եվրոպական տարին նպատակ ունի հնարավորություն տալու Եվրոպայի քաղաքացիներին՝ ավելի լավ հասկանալու ներկան անցյալի ավելի հազեցած և համատեղ մեկնաբանության միջոցով: Այն ուղղված կլինի մշակութային ժառանգության սոցիալական և տնտեսական օգուտների ավելի լավ գնահատմանը և տնտեսական աճին, նաև սոցիալական համերաշխությանը բերած նպաստի խթանմանը: Սա կարելի է գնահատել, օրինակ, կայուն զբոսաշրջության և քաղաքային վայրերի վերականգնման հանրահոչակման միջոցով: Այն կընդգծի թվայնաց-

<sup>15</sup> Տե՛ս [http://ec.europa.eu/culture/calls/2015-eac-s11\\_en](http://ec.europa.eu/culture/calls/2015-eac-s11_en)

<sup>16</sup> Տե՛ս <http://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2017/02/09-cultural-heritage/>

<sup>17</sup> Տե՛ս <http://www.jpi-culturalheritage.eu/wp-content/uploads/SRA-2014-06.pdf>.



**Չինվորի արձանիկ, մ.թ.ա. 9-րդ դար, Տավուշ, գյուղ Պառավաբար,  
բրոնզ, Հայաստանի պատմության թանգարան**

[\(պատկերի սպեկտրոլուր\)](#)



ման հետ կապված մարտահրավերները և հնարավորությունները, նաև կնպաստի հատկորոշված մարտահրավերներին դիմակայմանը հետևյալ ուղղություններով առկա լավագույն փորձի տարածման միջոցով՝ պահպանություն, կառավարում, զարգացում, հետազոտություն, ղեկավարում և նորարարական գործողություններ: Կրնդգծվեն վերջերս տեղի ունեցած բեկումնային շրջադարձերը՝ կապված մշակութային ժառանգության ոլորտում տեխնոլոգիական և սոցիալական նորարարությունների հետ, ինչպես նաև այս ոլորտներում առկա ԵՄ նախաձեռնությունները:

Այս Եվրոպական տարվա հիմնական նպատակը լինելու է հետևյալը.

- Խթանել մշակութային բազմազանությունը, միջմշակութային երկխոսությունը և սոցիալական համերաշխությունը,
- Ընդգծել մշակութային ժառանգության տնտեսական ներդրումը մշակութային և ստեղծարար ոլորտներում, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկություններում, տեղական և տարածքային զարգացման գործում,
- Շեշտել ԵՄ արտաքին հարաբերություններում մշակութային ժառանգության դերը՝ ներառյալ՝ հակամարտությունների կանխարգելումը, հակամարտություններին հաջորդող հաշտեցումը և ոչնչացված մշակութային ժառանգության վերականգնումը:

### **10. «Մշակութային ժառանգությունը 21-րդ դարում հանուն ավելի բարվոր համակեցության. դեպի համաեվրոպական ռազմավարություն» (Նամուրի հռչակագիր 2015<sup>18</sup> և Ռազմավարություն 2017)**

Ինչպես ցույց է տրվել «Եվրոպական մշակութային ժառանգությունը՝ թվերով» զեկույցում (տե՛ս վերը՝ Բաժին 7), Մշակութային ժառանգության համար պատասխանատու նախարարների 6-րդ համաժողովը, որը կայացավ Նամուրում 2015թ. ապրիլի 22-24-ը Եվրախորհրդում Բելգիայի նախագահության օրոք, ընդունեց «Նամուրի հռչակագիրը»: Այն կոչ էր անում Եվրախորհրդին սահմանել և իրականացնել «մշակութային ժառանգության համար համաեվրոպական ռազմավարություն»՝ Եվրամիության հետ սերտ համագործակցությամբ, հաշվի առնելով ԵՄ-ի՝ վերջին շրջանի զեկույցներն ու բանաձևերը, որոնցում կարևորվում է քաղաքացիական հասարակությունը ներկայացնող կազմակերպությունների ներգրավումը:

Նամուրի հռչակագրի հավելվածը («21-րդ դարի համար եվրոպական մշակութային ժառանգության ռազմավարության ուղեցույց») առաջարկում է մի շարք միավորող և միասնական մոտեցման թեմաներ, որոնք հարգում են ներգրավված տարբեր պետությունների և կողմերի՝ մշակութային ժառանգության և որոշ խնդիրների մասին ունեցած պատկերացումների տարբերությունները, և որոնք պետք է համարվեն գործառնական առաջնահերթություններ.

- Ժառանգություն և քաղաքացիություն.
  - Պատշաճ կառավարման ապահովում և մշակութային ժառանգության հատկորոշման և կառավարման համար մասնակցային կառավարման հանրահռչակում,
  - Մշակութային ժառանգության վերաբերյալ եվրոպական կոնվենցիաների իրականացման օպտիմալացում,
  - Բնակչության փորձի հետ առավելագույն ներդաշնակության հասնելու համար ժառանգության նկատմամբ զգայուն մոտեցման խթանում,
- Ժառանգություն և հասարակություններ.
  - Խաղաղ համակեցությունը, կյանքի որակի և կենցաղի միջավայրի բարելավումը,
  - Մարդկանց բարեկեցությանը, անհատների առողջությանը նպաստելը, հավաքական հիշողության պահպանումը,
- Ժառանգություն և տնտեսություն.
  - Ավելի ներառական և համերաշխ հասարակության ձևավորումը, բարգավաճումը, հանրային բարեկեցության խթանումը,

<sup>18</sup> Տե՛ս <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806a89ae>

- Ժառանգություն և գիտելիք.
  - Գիտելիքահեն հասարակության ձևավորման խթանումը,
  - Գիտելիքի, մեթոդների և նոու-հաուի պահպանման ու փոխանցման ապահովումը,
  - Մշակութային ժառանգության և դրա ներկայացրած արժեքի մասին իրազեկության մակարդակի և պատասխանատվության զգացման բարձրացումը,
  - Ցկյանս ուսուցման հասանելիության ապահովում, ժառանգությանն առնչվող աշխատանքներում սոցիալական դեմպինգի դեմ պայքար:
- Ժառանգություն և տարածքային կառավարում.
  - Հաստատությունների դերի և քաղաքացիների պատասխանատվությունների սահմանում հասարակության բոլոր անդամների կյանքի որակի բարելավմանն ու շրջապատի բարեկարգմանը միտված համագործակցության շրջանակներում,
  - Ժառանգության կառավարման ներմուծում, ինչը կնպաստի ներդաշնակ համակեցությանը, բարեկեցությանը և զարգացմանը,
- Ժառանգություն և կայուն զարգացում.
  - Համապատասխան միջոցների տրամադրում պետական հաստատության, որոնք հնարավորություն են տալիս ավելի արդյունավետ կերպով բարելավելու կյանքի որակը և կենցաղի միջավայրը:

Եվրոպայի խորհրդի *GR-C Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և բնապահպանության վերաբերյալ զեկուցող խումբը* հաստատեց Ռազմավարություն 21-ը՝ 2017թ. փետրվարի 7, և այժմ ակնկալվում է դրա վերջնական ընդունումը Նախարարների կոմիտեի կողմից 2017թ. ապրիլին:

*Եվրամիության խորհրդի եզրակացություններում* նշված ժառանգության քաղաքականության ապացուցահեն և հասարակության ու քաղաքացիների մասնակցության իրականացման վրա հիմնված երկարաժամկետ մոդելների հանրահռչակման անհրաժեշտության, *Եվրախորհրդարանի բանաձևում* շեշտադրվող մշակութային ժառանգության հանրահռչակման ազդեցությունները վերլուծելու համար ուսումնասիրության, հետազոտության և փորձնական միջոցների, կոնկրետ ցուցանիշների և հեռանիշների անհրաժեշտության, ինչպես նաև ապացուցահեն քաղաքականության մշակման, ազդեցության չափման, մշտադիտարկման և տվյալների շարունակական հավաքագրման մասին «Եվրոպական մշակութային ժառանգությունը՝ թվերով» *զեկույցի ռազմավարական առաջարկներին համահունչ՝* Ռազմավարությունն առաջարկում է **Ժառանգության նկատմամբ ինտեգրված մոտեցման համար գնահատման ընթացակարգ և ցուցանիշների կիրառում** (Հավելված Ա): Այստեղ յուրաքանչյուր բաղադրիչ կապված է **մի շարք մարտահրավերների հետ**, որոնցից մի քանիսը կրկնական են մեկ բաղադրիչի կամ այլ երկու բաղադրիչների հետ: Մի շարք **առաջարկություններ** ձևակերպվել են՝ այս մարտահրավերներին արձագանքելու համար:

Այդ առաջարկություններին հետևելն այլևս յուրաքանչյուր պետության պարտականությունն է սեփական առաջնահերթություններին և ռեսուրսներին համապատասխան: Առաջարկներից յուրաքանչյուրը բաժանվում է առաջարկվող **գործողությունների. մի շարք քայլերի** օրինակներով ի ցույց են դրվում որոշ պետություններում իրականացված գործողություններ (Հավելված Բ):

**Եվրոպայում մշակութային ժառանգության քաղաքականության մասին տեղեկատվության այլ աղբյուրներ կարելի է գտնել Եվրախորհրդարանի հետազոտությունների բլոգում, որը վերնագրված է «Մշակութային ժառանգության քաղաքականությունը Եվրոպական Միությունում»:**<sup>19</sup>

<sup>19</sup> Հրապարակվել է Անդամների հետազոտական ծառայության կողմից, 16 դեկտեմբերի, 2014թ.: Տե՛ս <https://epthinktank.eu/2014/12/16/cultural-heritage-policy-in-the-european-union/>

# ՄԱՍ 2

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

### ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ

#### ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տվյալների հավաքագրման շրջանակներում մշակվեց մի հարցաշար՝ վերնագրված «Մշակութային ժառանգության քաղաքականության գնահատման ուղեցույց՝ մշակութային ժառանգության հատվածը Հայաստանում զարգացնելու համար», որը ներկայացվեց հայաստանյան պետական իշխանության մարմիններին և քննարկվեց տարբեր շահագրգիռ կողմերի հետ երկօրյա կլոր սեղանի ձևաչափով աշխատաժողովի ընթացքում (Երևան, հոկտեմբերի 3-4, 2016թ.): Այս վերլուծությունը հիմնված է շահագրգիռ կողմերից (Երևան առաքելությանը նախորդող և հաջորդող ժամանակահատվածներում) ստացված մեկնաբանությունների և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության կողմից հարցաշարին տրված պատասխանների վրա (անգլերեն թարգմանված տարբերակը ստացվել է 2017թ. փետրվարի 7-ին):

Համապատասխանաբար, պատասխաններն ամփոփվել են ըստ հարցաշարում տրված թեմաների և հարցերի:

#### 1. Երկրի վարչական համակարգի ընդհանուր պատկեր

Այս հարցադրման նպատակն էր հասկանալ, թե ինչպիսի արձագանք և լուծում են ստանում գյուղատնտեսությանը, շրջակա միջավայրին, կայուն հասարակական ու տնտեսական զարգացմանը, հողօգտագործման պլանավորմանը, շինարարությանը, մարդու իրավունքներին, մշակութային իրավունքներին, ենթակառուցվածքներով ապահովմանը, զբոսաշրջությանը, մշակույթին և մշակութային ժառանգությանն առնչվող խնդիրները, և թե որքանով են տարբեր նախարարություններ համագործակցում մշակութային ժառանգության խնդիրների շուրջ (խոսքը չի վերաբերում զուտ պահպանությանը, այլ՝ նրան, թե ինչպես է նշված ժառանգությունը գործածվում որպես ռեսուրս)՝ փորձելով նաև համառոտ անդրադառնալ ներդրված ինտեգրված մեխանիզմներին: Այս բաժնում տրված էր հետևյալ հարցը՝ «Ո՞ր գործողություններն արդյունքում կբարելավվի գործնական համագործակցությունը նախարարությունների միջև մշակութային ժառանգության համատեքստում: Այստեղ հատկապես անհրաժեշտ է անդրադառնալ մշակութային քաղաքականությանը, կրթությանը, հասարակական և տնտեսական զարգացմանը, բնապահպանությանը և այլ ոլորտներին»:

Եվրոպայում ներկայումս այս խնդրի ընկալումներում (տե՛ս սույն զեկույցի առաջին մասը) շեշտադրվում է մշակութային ժառանգության՝ որպես հասարակությանն ի նպաստ ծառայող ռեսուրսի կառավարման նկատմամբ *ինտեգրված մոտեցումը*:

Մշակույթի նախարարությունը փաստել է, որ մշակութային ժառանգության, շրջակա միջավայրի պահպանության, տարածական պլանավորման մշակման խնդիրներով զբաղվում են մասնավորապես ՀՀ մշակույթի նախարարությունը, ՀՀ բնապահպանության նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեն և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն:

Մշակութային ժառանգության ոլորտում վերոհիշյալ գերատեսչությունների համագործակցությունն իրականացվում է մի շարք **միջգերատեսչական հանձնաժողովներում և աշխատանքային խմբերում**, որոնցից են՝

- ՀՀ մշակույթի նախարարությանը կից գործող **միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովը**,



- ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը կից գործող **Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը,**
- ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեին կից գործող **ՀՀ համայնքների (քնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովը,**
- ՀՀ բնապահպանության նախարարությանը կից գործող **Բնության հատուկ պահպանվող տարածքների հողերը վարձակալությամբ և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրման միջգերատեսչական հանձնաժողով:**

Այնուամենայնիվ, այլ առումներով նախարարության պատասխանում չկար անդրադարձ և բացատրություն այն մասին, թե որչափ են համագործակցում տարբեր նախարարություններ մշակութային ժառանգության ոլորտում (պահպանությանն ուղղված գործողություններից զատ), օրինակ՝ ժառանգության որպես ռեսուրսի օգտագործման և գոյություն ունեցող ինտեգրված մեխանիզմների առումով (տե՛ս ստորև՝ Բաժին 4): Մշակութային ժառանգությունը շեշտվել է որպես առանցքային ռազմավարական առաջնահերթություն և որպես կայուն զարգացման ռեսուրս, սակայն այստեղ շեշտադրումը սոցիալական կապիտալի (խաղաղության, մշակութային բազմազանության, միջմշակութային երկխոսության, տարբեր մշակույթների փոխադարձ հարգանքի) վրա էր, ոչ տնտեսական ներուժի:

Այլք իրենց մեկնաբանություններում նշում էին, որ լրացուցիչ գործողություններ են անհրաժեշտ պատկան պետական մարմինների, մասնագիտական ու հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի համագործակցման արդյունավետության համար՝ մշակութային ժառանգությանը կայուն զարգացման ապահովման համատեքստում: Բացի այդ, իրավական ռեժիմների լրացուցիչ վերլուծություն է անհրաժեշտ՝ հնարավորություն տալու ավելի ինտեգրված մոտեցում կիրառելու և մշակութային ժառանգությունը դիտարկելու նաև քաղաքականությունների այլ ոլորտներում: Մեկ այլ պատասխանող նշել է, որ նախարարությունների գործողությունները կատարվում են խիստ ոլորտային սահմաններում և որ նույնը կարելի է ասել պետական բաժնետիրական ընկերությունների մասին (օրինակ՝ գազի, էլեկտրաէներգիայի, երկաթուղու և այլ ենթակառուցվածքների ընկերությունների մասին), ինչի արդյունքում մշակութային ժառանգության ներուժը լիարժեք կերպով չի քննվում: Նշվել է, որ հարկ է կատարել կառավարման կառուցվածքային փոփոխություններ՝ ստեղծելով այնպիսի միավորներ, որոնց համագործակցության արդյունքում կստեղծվեն մշակութային ժառանգությունը որպես ռեսուրս դիտարկելու համար ավելի նպաստավոր պայմաններ: Այս ուղղությամբ առաջին քայլեր կարող են լինել մի շարք փոքրածավալ և կարճաժամկետ (մինչև 2 տարի) ծրագրեր՝ կառուցված նախարարությունների, ՏԻՄ-երի և այլ շահառուների, այդ թվում նաև միջազգային գործակալությունների միջև համագործակցության հիման վրա:

## **2. Ռազմավարություն և քաղաքականություն, որոնց նպատակն է ապահովել կայուն զարգացում և պահպանել մշակութային ժառանգությունը**

Այս թեմայի ներքո քննվել են կայուն զարգացմանը միտված ազգային ռազմավարության խնդիրները՝ ներառյալ մշակութային ժառանգության դիտարկումը որպես տնտեսական և հասարակական զարգացման և շրջակա միջավայրի աճն ու կյանքի որակի բարելավումն ապահովող միջոց: Այստեղ քննվում է այն հանգամանքը, թե ինչպես է մշակութային ժառանգությունը նպաստում նորարարական աշխատատեղակների (գբաղվածության), ապրանքների, ծառայությունների, գործընթացների և ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը: Այստեղ առաջադրվել է հետևյալ հարցադրումը. «Այս համատեքստում քաղաքականության կամ կառավարման ո՞ր ոլորտներում կա գործողությունների և զարգացման անհրաժեշտություն»:

Մշակույթի նախարարությունը նշել է, որ մշակութային ժառանգության պահպանության խնդիրներն արժարծվել են «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում», համաձայն որի՝ նյութական մշակութային ժառանգության պահպանության ոլորտում իրակա-

նացվող ծրագրերի հիմնական նպատակը պատմամշակութային անշարժ հուշարձանների, թանգարանների և գրադարանների պահպանումն ու բարեկարգումն է, ինչը ոչ միայն նպաստում է ՀՀ մշակութային ժառանգության փոխանցմանը ապագա սերունդներին, այլև զբոսաշրջության զարգացմանը և դիտարկվում որպես երկրի տնտեսական զարգացման բաղադրիչ: Պատասխանը ցույց է տալիս, որ մշակութային ժառանգության հանրահոջակումը հեռանկարային զարգացման ռազմավարության կարևորագույն ուղղություններից է. այդ նպատակով նախատեսվել և իրականացվում է.

- թանգարանային, գրադարանային և արխիվային նյութերի՝ տպագիր և էլեկտրոնային կրիչներով հրատարակումների հասանելիության ապահովում,
- թանգարանների ճանապարհային քարտեզների և ուղեցույցների հրատարակմամբ բնակչության և զբոսաշրջիկների համար մշակութային ժառանգության մատչելիության ապահովում (օրինակ՝ ՀՀ մշակույթի նախարարության նախաձեռնությամբ մշակվել և 2016թ. հրատարակվել է «ՀՀ և ԼՂՀ թանգարանները» տեղեկագիրքը),
- տեղական ու միջազգային շուկայում գովազդվող հայ մշակույթի բրենդների տարածում՝ Հայաստանի ճանաչման և դրական վարկանիշի ձևավորման ապահովում,
- տարեկան 3-5 հուշարձանների մասին վավերագրական կինոնկարների ու հեռուստահաղորդումների ստեղծում, 2-5 գրքի ու տեղեկատուի հրատարակում:

Բացի այդ, ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 36 արձագրությամբ հավանության է արժանացել «**Պատմամշակութային հուշարձանների պահպանության, օգտագործման և հանրահոջակման 2016-2020 թվականների ռազմավարության և միջոցառումների ծրագիրը**», որով նախատեսվում է մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի ու զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի մշակում: Այս ծրագրով նախատեսվում է հետևյալը<sup>20</sup>

- նոր մշակութային զբոսաշրջային երթուղիների ձևավորում՝ այդ երթուղիներում նաև հնագիտական հուշարձանների ընդգրկմամբ,
- մշակութային տուրիզմի արդիական առաջարկների մշակում, գիտական տուրիզմի կազմակերպում (մասնավորապես մասնակցություն պեղումների գոտիներում տարվող աշխատանքներին),<sup>21</sup>
- զբոսաշրջությանը նպաստելու համար ենթակառուցվածքների զարգացում,
- նոր պատմամշակութային արգելոցների և արգելոց-թանգարանների ստեղծում՝ ապահովելով դրանց կապակցվածությունը համապատասխան զբոսաշրջային ենթակառուցվածքներին, այդ թվում՝ հուշարձանների վերաբերյալ բացատրական, մեկնաբանման աշխատանքների, բազմալեզու էքսկուրսիաների և կրթամշակութային միջոցառումների կազմակերպում, արգելոցների տարածքների ապահովում շարժական ինտերնետ կապով,
- ավանդական տոնակատարությունների և փառատոների կազմակերպում:

Հատկորոշվել է, որ մշակվող ծրագրերը միտված են զբոսաշրջային կենտրոններ դարձնելու Գյումրին, Մեղրին և մյուս պատմական քաղաքները (ինչպիսիք են արդեն Գորիսը և Դիլիջանը): Իրականում, միջազգային կապերի բաժնի ներկայացուցիչը նշել է, որ կարելի է Գյումրին կամ Գորիսը դարձնել «ստեղծարար քաղաք»:

Մշակույթի նախարարության պատասխանում ասված է, որ սույն ծրագրի ընթացքում պետք է ձեռնարկվեն միջոցներ ներդրումային քաղաքականության ակտիվացման, զբոսաշրջության բոլոր ձևերի համակցությամբ զբոսաշրջային գրավիչ միջավայրի ձևավորման, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վերականգնման, դեպի հուշարձաններ, զբոսաշրջային գրավչության այլ վայրեր տանող ճանապարհների ու հարակից տարածքների բարեկարգման ուղղությամբ: Այնուամենայնիվ,

<sup>20</sup> Տե՛ս նաև քննարկումը ստորև՝ Մաս 2, Բաժին 3:

<sup>21</sup> Ինչպես որոշարկված է «Հայաստանի Հանրապետությունում հնագիտության բնագավառի զարգացման և հանրահոջակման միջոցառումների ծրագիրը (2017-2025 թթ.)»: Այս ծրագրի մշակումը ներառված է ՀՀ կառավարության 2017թ. Գործողությունների ծրագրում:

նայնիվ, այս կոնկրետ ներդրումային կարիքները և թիրախային բյուջեները չեն հատկորոշվել:

Հույս կա, որ այս գործողությունների արդյունքում կապահովվեն զբոսաշրջային ակտիվ սեզոնի երկարաձգումը, զբոսաշրջային այցելությունների դինամիկ աճը, ներքին զբոսաշրջության զարգացումը, ինչպես նաև մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումը և բնակչության որոշակի հատվածի զբաղվածությունը:

Կառավարության ներկայացուցիչներից մեկը (մի պատգամավոր) ասաց, որ իրականում Հայաստանի մշակութային ժառանգության պահպանումը այսպիսի փոքր երկրի համար լուրջ մարտահրավեր է: Անհրաժեշտություն կա բարձրացնելու մշակութային ժառանգության՝ որպես ներուժ ունեցող արժեքի կարևորության մասին իրազեկության մակարդակը՝ նպաստելով մշակութային ժառանգության ներառմանը բիզնես մոդելներում: Կառավարությունը քննարկում է տարեկան բյուջեն և մշակութային ժառանգությունը համարում է թե՛ ուժեղ, թե՛ թույլ կողմ: Նշվում է, որ այս նախաձեռնությունից անհրաժեշտ է ստանալ նպաստավոր պատասխան և աջակցություն, մասնավորապես փաստարկներ բերել մշակութային ժառանգության և զբոսաշրջության միջև կապերի զարգացման օգտին և մշակութային ժառանգության վայրերի շուրջ հարմարություններն ու ենթակառուցվածքները տեղակայել կլաստերային սկզբունքով: Ընդգծվել է, որ կա պահպանության և պահպանման աշխատանքներն իրականացնող փորձագետների պակաս:

Պետական պաշտոնյաներից ստացված մյուս պատասխաններում նշվել է, որ կա ցանկություն կրկին քննելու մշակութային ժառանգությանը վերաբերող քաղաքականությունը, մասնավորապես դրա՝ տնտեսության զարգացման համար խթանիչ ներուժի տեսանկյունից. սա 2020թ. ռազմավարության հիմնական նպատակներից մեկն է: Իտալիայի, Համաշխարհային բանկի հետ համագործակցության և տարածաշրջանի այլ երկրների հետ տարածաշրջանային համագործակցության պլաններն ընկած են այս գործողությունների հիմքում:

Ավելին, նշվել է, որ մշակութային միջավայրի ռազմավարության նպատակը մշակութային ժառանգությունը համայնքային զարգացման մի բաղադրիչ դարձնելն է: Մշակույթի նախարարության կազմում մի գործակալություն և մի վարչություն են զբաղվում այս ծրագրի մշակմամբ:

Մյուս կողմից, այլ պատասխանողներն ավելի քիչ էին համոզված, որ կառավարությունը կկարողանա նախաձեռնել կայուն ռազմավարություններ, որոնք պատշաճ և համապատասխան կերպով կներառեն մշակութային ժառանգությունը և կարտացոլեն դրա տնտեսական ու սոցիալական ներուժը: Պատասխանողներից մեկը նշեց, որ մշակութային ժառանգությունը որպես արժեք և ռեսուրս բնակչության շրջանում հանրահռչակելու գործողությունները դեռևս սահմանափակ են և անբավարար: Մասնավորապես նշվել է, որ մշակութային ժառանգությանը վերաբերող հարցերին բավարար չափով անդրադարձ չի արվում երիտասարդների համար նախատեսված ֆորմալ կամ ոչ ֆորմալ կրթական ծրագրերում և որ միայն եզակի դեպքերում է այն լուսաբանվում զանգվածային լրատվամիջոցներով: Նկատի է առնվել, որ համայնքներն ունեն բավականաչափ հասանելիություն նյութական մշակութային ժառանգության ռեսուրսներին և հիշողությանը, որոնք կապված են դրանց հետ, և որ այս ռեսուրսների հետազոտության համար անհրաժեշտ ռեսուրսները հեշտ հասանելի չեն: Նաև հատկորոշվել է, որ անցյալ տարիների ընթացքում պատմական շինությունների համատարած ոչնչացումներն ու ձևափոխումները մարդկանց շրջանում առաջ են բերել հոռետեսական տրամադրություններ՝ որոշ դեպքերում հանգեցնելով ցույցերի՝ «մշակութային ժառանգության պահպանության նկատմամբ գերզգայուն և անհավասարակշիռ վերաբերմունքի» պատճառով: Որոշ դեպքերում սա հանգեցրել է մշակութային ժառանգության արժեքների պահպանության վերաբերյալ հարցերի: Մեկնաբանողներից մեկը արտահայտել է այն կարծիքը, թե մշակութային ժառանգությունը պատշաճ կերպով չի սահմանվում Մշակույթի նախարարության Օրակարգ 2030-ում ներառված հազարամյակի կամ կայուն զարգացման նպատակներում:

Ակնհայտ է, որ որպեսզի մշակութային ժառանգությունը կարողանա Հայաստանի համար տնտեսական և սոցիալական օգուտներ բերել, ռազմավարությունը պետք է



չափի ժառանգության ոլորտում արվող ներդրումների տնտեսական և սոցիալական ազդեցությունները, ինչպես առաջարկում է ժամանակակից եվրոպական մոտեցումը: Արդյունքում ռազմավարության նպատակների նկատմամբ կստացվի ավելացված արժեք, և կտրամադրվեն ապացույցներ ֆինանսավորման նոր տարբերակների համար:

### 3. Կայուն զբոսաշրջության ռազմավարության մշակում

Այս թեմայի ներքո ուսումնասիրվում էին կայուն զբոսաշրջության համար ռազմավարությունների մշակումն ու դրանց իրականացման ծավալները, այդ թվում՝ այցելուների համար նախատեսված հարմարությունների՝ բնակարանային հարմարությունների, ցուցատախտակների, ենթակառուցվածքների, բրենդինգի, զբոսավարների և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ծավալները՝ ի նպաստ զբոսաշրջության, կլաստերային զարգացումները, ՓՄՁ-ների զարգացման, մշակութային երթուղիների մշակման, մշակութային ժառանգության շուրջ կառուցված զբոսաշրջությունից ստացվող եկամուտների օգտագործման հետ կապված խնդիրները, ինչպես նաև մշակութային ժառանգության ռեսուրսների առումով զբոսաշրջության հետ զուգորդվող բացասական ազդեցությունները: Այստեղ տրված էր հետևյալ հարցը. «Ի՞նչ գործողություններ են անհրաժեշտ մշակութային ժառանգության տեսանկյունից զբոսաշրջության քաղաքականությունը կատարելագործելու համար»:

Մշակույթի նախարարության պատասխանն ի ցույց է դնում այն, որ Հայաստանը զբոսաշրջությունը դարձրել է զարգացման առաջնահերթություն, մասնավորապես՝ երկրի հարուստ հնագիտական ժառանգության շնորհիվ: Մշակվել և շարունակում են մշակվել մի շարք ծրագրեր, որոնք միտված են պատմամշակութային ժառանգության պահպանությանն ուղղված հեռանկարային զարգացման ծրագրերի մշակմանը: Դրանք արդյունավետ կերպով կզուգորդվեն նաև տարածաշրջանում արդեն իսկ իրականացվող ծրագրերի հետ: Մշակութային ժառանգության պահպանությանն ու հանրահռչակմանն ուղղված ծրագրերն իրենց հերթին կնպաստեն մասնագիտական համագործակցության ընդլայնմանը, մշակութային զբոսաշրջության և ենթակառուցվածքների զարգացմանը, ինստիտուցիոնալ կառույցների ձևավորմանը, ինչը համահունչ կլինի նաև ներկայում Հայաստանում միջազգային կառույցների հետ իրականացվող ծրագրերին:

Վերջին տարիներին մշակութային զբոսաշրջության ընտրված ուղի է համարվում Հայկական լեռնաշխարհում պատմականորեն ձևավորված հարավային առանցքի կամ միջանցքի ուղղությունը: ՀՀ կառավարությունը, կարևորելով երկրում զբոսաշրջության զարգացումը, ընդունել է հարավային ուղղության զարգացմանը միտված մի շարք ծրագրեր.

- Մասնավորապես 2013 թ. ՀՀ **մշակույթի նախարարության կողմից հանրապետության հարավային ուղղությամբ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանությանն ուղղված՝** մշակվել և ՀՀ կառավարության քննարկման է ներկայացվել «**Հարավային Երևան-Մեղրի զբոսաշրջային երթուղու զարգացման հեռանկարային համալիր ծրագիրը հաստատելու մասին**» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Այս նախագծի կարգավիճակը (արդյոք պե՞տք է այն վավերացնել՝ վերածելով օրենքի, թե՛ ոչ) չի հստակեցվել, այնուամենայնիվ, տե՛ս ստորև,
- Ներկայում **Տեղական տնտեսության և զբոսաշրջության ենթակառուցվածքի զարգացման ծրագրի (ՏՏԶԵԶԾ)** շրջանակում Համաշխարհային բանկի հետ համագործակցությամբ իրականացվում է «**Հարավային միջանցք**» ծրագիրը, մասնավորապես, հետևյալ վայրերի վերականգնման, բարեկարգման համար անհրաժեշտ տեխնիկական առաջադրանքների մշակման, զբոսաշրջության խթանման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների արդիականացման ուղղությամբ.
- **Խոր Վիրապ (Արտաշատի դիտակետ),**
- **Դվին պատմական քաղաքատեղի,**

- **Ջորաց քարեր բնակատեղի,**
- **Գորիս քաղաքի հուշարձաններ,**

Նախատեսվում է նաև զբոսաշրջության խթանման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների արդիականացում:

ՀՀ մշակույթի նախարարության նախաձեռնությամբ հիմնականում ընդգրկվել են **Հարավային Երևան-Մեղրի զբոսաշրջային երթուղու զարգացման հեռանկարային համալիր ծրագրում** նախանշված հիմնական զբոսաշրջային վայրերը և ներառված են Տեղական տնտեսության և զբոսաշրջության ենթակառուցվածքի զարգացման ծրագրում (SSՁԵԶԾ):

- **ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության և Սմիթսոնյան հաստատության հետ փոխըմբռնման հուշագրի կնքման արդյունքում** մշակված համապարփակ հայեցակարգային փաստաթղթի համաձայն՝ ծրագրվում է Հայաստանում ևս իրականացնել մի շարք մշակութային ծրագրեր՝ ենթակառուցվածքների զարգացման, մշակութային ժառանգության պահպանության, նոր զբոսաշրջային արտադրանքի ձևավորման և այլ ոլորտներում: ՀՀ մշակույթի նախարարությունն առաջարկել է իրականացվելիք ծրագրերում ներառել ՀՀ կառավարության կողմից մշակված մի շարք ռազմավարական ծրագրերի բաղադրիչներ, ինչպիսին է **Երևան-Մեղրի զբոսաշրջային զարգացման** հեռանկարային ծրագիրը, որն ընդգրկում է Հայաստանի 3 մարզերի (ՀՀ Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի) տարածքում գտնվող գրեթե բոլոր բաղադրիչները, այսինքն՝

- երթուղու ճանապարհներին առկա հուշարձաններ,
- ենթակառուցվածքների զարգացում և այլն:

- **Պատմամշակութային հուշարձանների պահպանության, օգտագործման և հանրահռչակման 2016-2020 թվականների ռազմավարության և միջոցառումների ծրագրի** համաձայն (տե՛ս վերը Բաժին 2) նախատեսվում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառի ու զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի փոխադարձ կապի ընդլայնման անհրաժեշտություն: Զբոսաշրջությունը՝ զարգացման տեմպերով և արդյունքներով, լինելով երկրի առավել դինամիկ զարգացող ճյուղերից մեկը, իր գործառնություններով աջակցելու է համապատասխան ենթակառուցվածքների կառարելագործմանը, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությանը, օգտագործմանը և հանրահռչակմանը: Մույն խնդրի կարգավորման համար նախատեսվում է հետևյալը (ինչպես նշված է վերը Բաժին 3-ում)։

- նոր մշակութային զբոսաշրջային երթուղիների ձևավորում,
- ենթակառուցվածքների զարգացում,
- նոր պատմամշակութային արգելոցների և արգելոց-թանգարանների ստեղծում,
- ավանդական տոնակատարությունների և փառատոների կազմակերպում:

Կա մտադրություն՝ խթանել զբոսաշրջությունը, այդ թվում՝ պատմական քաղաքների՝ որպես զբոսաշրջային կենտրոնների զարգացման շնորհիվ, իսկ այս գաղափարների ընդլայնման հավանականությունը «ստեղծարար քաղաքների» ստեղծման առումով կլինի դրական հավելում:

Պատասխանում նշվում է, որ այս ծրագրի շրջանակներում հարկ է միջոցներ ձեռնարկել ներդրումային քաղաքականության ակտիվացման, զբոսաշրջության բոլոր ձևերի համակցությամբ զբոսաշրջային գրավիչ միջավայրի ձևավորման, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վերականգնման, դեպի հուշարձաններ, զբոսաշրջային գրավչության այլ վայրեր տանող ճանապարհների ու հարակից տարածքների բարեկարգման ուղղությամբ:

Ինչպես հիշատակվում է Մշակույթի նախարարության պատասխանում, արդյունքում կբարձրանա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների օգտագործման և հանրահռչակման արդյունավետությունը, բնագավառում ներդրումային դաշտի գրավչությունը, կընդլայնվեն զբոսաշրջության ծավալները: Ռազմավարությունը նաև նպատակ ունի նպաստելու համայնքների զարգացմանը, միջազգային ասպարե-

զում Հայաստանի մասին իրազեկվածության բարձրացմանը, երկրի բնական և մշակութային ժառանգության պահպանմանն ու զարգացմանը:

Ռազմավարության միջոցառումների ծրագրով նաև նախատեսվում է հետևյալ արգելոցների և թանգարանների ստեղծումը՝ ըստ հստակ ժամանակացույցի.

- «Բերդ», «Ամբերդ» - 2016թ.,
- «Բջնիի ամրոց», «Սմբատաբերդի ամրոց» - 2018թ.,
- «Դաշտադեմի ամրոց» արգելոցի և «Ռազմարվեստի» թանգարան - 2019թ.,
- «Արտաշատ», «Դվին», պատմամշակութային արգելոցներ - 2020 թ.:

Զուգահեռաբար ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության արգելոց-թանգարանների և արգելոցների տարածքներում նախատեսվում է ստեղծել և զարգացնել զբոսաշրջային սպասարկմանն ուղղված համապատասխան ենթակառուցվածքներ, ինչպես նաև մշակութային տուրիզմի արդիական առաջարկների մշակում, գիտական տուրիզմի կազմակերպում (պեդումների գոտիներում աշխատանքների մասնակցություն):

Ներկայում ՀՀ մշակույթի նախարարությունն իր արգելոցների և արգելոց-թանգարանների տարածքներում իրականացնում է հուշարձանների վերաբերյալ բացառական, մեկնաբանման աշխատանքների, բազմալեզու էքսկուրսիաների և կրթամշակութային միջոցառումների կազմակերպում: Արգելոցների տարածքներն ապահովված են շարժական ինտերնետ կայքով, ինչը կարող է խրախուսել հավելվածների օգտագործումը այցելուների համար ավելի հագեցած փորձառություն ապահովելու նպատակով (խնդիր, որի համար կարող են հետագա զարգացման գործողություններ պահանջվել):

Այնուհետ նախարարության պատասխանը որոշարկում և կրկնում է, որ Հայաստանն այսօր հեռանկարային զարգացման գերակայությունների մեջ առանձնահատուկ տեղ է հատկացնում զբոսաշրջությանը՝ հատկապես նկատի ունենալով երկրում հնագիտական հարուստ ժառանգության առկայությունը: Ներկայում մշակվում է **«Հայաստանի Հանրապետությունում հնագիտության բնագավառի զարգացման և հանրահռչակման միջոցառումների ծրագիրը (2017-2025 թթ.)»**: Դրա նպատակն է գրավել զբոսաշրջիկներին՝ հնարավորություն տալով այցելելու հնագիտական վայրեր և մասնակցելու պեդումներին: Մա կմեծացնի զբոսաշրջիկների թիվը: Ծրագրի հիմնական նպատակներից է հանրապետությունում զբոսաշրջային երթուղիների մշակումը, այդ երթուղիներում հնագիտական հուշարձանների ընդգրկումը, Հայաստանի զբոսաշրջային ակտիվ սեզոնի երկարացումը, զբոսաշրջային այցելությունների դինամիկ աճը, ներքին զբոսաշրջության զարգացումը, ինչպես նաև մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումը և բնակչության որոշակի հատվածի զբաղվածության ապահովումը (թեև սա հետո չի հստակեցվում, հետևաբար դժվար է մեկնաբանել): Ծրագրի մշակումն ընդգրկված է 2017 թ. ՀՀ կառավարության միջոցառումների ծրագրում:

ՀՀ մշակույթի նախարարության թանգարանները մշակում են թանգարանի հեռանկարային զարգացման ռազմավարությունները և յուրաքանչյուր տարի դրանցից բխող գործառույթներն ընդգրկում նախարարության բյուջետային հայտերում, միջնաժամկետ ծախսային ծրագրերում: ՀՀ մշակույթի նախարարության և «ԻԿՕՄ»-ի հետ համատեղ Հայաստան են հրավիրվել Բրիտանական թանգարանի մասնագետները՝ ՀՀ տարբեր թանգարանների մասնագետների համար թանգարանային մարքեթինգի կառավարումը և պլանավորումը թեմաներով դասընթաց-վարժանք իրականացնելու նպատակով: (Թեև սա դրական նախաձեռնություն է, այս առաջարկի վերաբերյալ այլ մանրամասներ հստակեցված չեն):

Մշակութային ժառանգության վայրերին հասցվող հավանական վնասը դիտարկվում է զբոսաշրջության աճն ապահովելու համատեքստում, և նախարարությունը զբոսաշրջության բնագավառի կառույցների հետ նպաստավոր երկխոսություն է սկսել: Քննարկվում են զբոսաշրջիկների թողունակության, վարքականոսների և սահմանված ընթացակարգերի կիրառմանն ուղղությամբ հնարավոր միջոցառումները՝ մշակութային արժեքների անխաթարությունն ապահովելու համար (այնուամենայնիվ, այս միջոցառումները չեն մանրամասնվում):



Այստեղ համառոտ հիշատակվում է այն, որ Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջային ռազմավարական ծրագրերի զարգացման հարցում կարևոր դերակատարություն ունեն նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող դիտարժան և օգտագործման ենթակա զգալի թվով քարանձավներ (այդ նպատակով ՀՀ կառավարությունը 2015 թվականի դեկտեմբերի 10-ի նիստի N 54 արձանագրության 30-րդ կետի որոշմամբ հաստատել է քարանձավները զբոսաշրջային նպատակներով օգտագործման հանձնելու միջոցառումների ծրագիրը, ինչով նախատեսվել է ընտրել և օգտագործման հանձնել պատմամշակութային նշանակության մի շարք քարանձավներ): Ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից հատկորոշվել են որպես ներուժ ունեցող մի քանի քարանձավներ (օրինակ՝ ՀՀ Վայոց ձորի «Արջերի», «Մոզրովի», «Մագելանի» և «Արենի 1 (Թռչունների)», ՀՀ Արագածոտնի մարզի Աղձքի «Քարե դռներ» քարանձավները), որոնցից մի քանիսն ընդգրկված են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում:

Այնուամենայնիվ, նախարարության պատասխանում չի խոսվում այցելուների կողմից հասցվող հավանական վնասի մասին: Այս առումով հավանաբար հարկ կլինի ուսումնասիրել ֆրանսիական մի շարք քարանձավների օգտագործման դեպքերից քաղված դասերը, օրինակ՝ Ֆրանսիայի հարավում գտնվող Լասկոյի քարանձավային համալիրի դեպքը, որը սիրված զբոսաշրջային վայր դարձավ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, բայց 1963թ. փակվեց հանրության համար, որովհետև այցելուների շնչառությունն ու քրտինքը ստեղծում էին ածխածնի երկօքսիդ և խոնավություն, որոնք վնասում էին քարանձավային ժայռապատկերները: Այցելուների կենտրոնների, ռեպրոդուկցիաների և եռաչափ տեխնոլոգիաների զարգացումը կարող է օգտակար լինել և գուցե դիտարկվի որպես հնարավորություն այսպիսի իրավիճակներում (Ծանոթագրություն. կարծիք կա, որ վերջինս դիտարկվում է որպես հնարավորություն «Իմ Հայաստան» ծրագրի աջակցությամբ): Ավելին, չի հստակեցվում քարանձավային նախագծերի ծավալը, օրինակ՝ **2010 թ. Մրցունակության ազգային հիմնադրամը** «Հարավային միջանցք» ծրագրի շրջանակներում ձեռնամուխ եղավ Մոզրովի քարանձավը զբոսաշրջության օբյեկտի վերածելու գործընթացին: Սակայն նախարարությունը նշում է, որ աշխատանքները մնացին անավարտ հիմնադրամի ղեկավարների փոփոխության հետևանքով:

Վերջին տարիներին ՀՀ մշակույթի նախարարության կողմից իրականացվում են գործընթացներ, որոնք նպատակաուղղված են վերականգնվող հուշարձանների թվաքանակի ավելացմանն ու դրանց տարածքային ընդգրկվածության ընդլայնմանը: 2005-2015թթ. պետական միջոցներով վերականգնման, ամրակայման աշխատանքներ են իրականացվել մոտ 67 հուշարձաններում: Հուշարձանների վերականգնումը մեծապես կնպաստի նաև դրանց ընդգրկմանը զբոսաշրջային երթուղիներում, հետևաբար նաև կիթանի զբոսաշրջիկների թվի աճը: Այնուամենայնիվ, այս վերականգնված հուշարձանների ճշգրիտ ներուժը և դրանց ներկայացրած հետաքրքրության բնույթը չի մասնավորեցվում:

2012թ. ՀՀ կառավարությունը հաստատեց «Հայաստանի Հանրապետության մշակութային տարածքների ճանաչման չափորոշիչները և մշակութային տարածքների ցանկը»: Գործընթացի նպատակն է հասարակության մեջ էթնոէկոլոգիական մշակույթի ձևավորումը, որը էկոլոգիայի և ավանդական, ժողովրդական մշակույթի յուրօրինակ միաձուլում է: Այստեղ կարևորվում են որոշակի բնապատմական միջավայրի առանձնահատկություններով պայմանավորված, ժամանակի ընթացքում ձևավորված ավանդական բնօգտագործման գիտելիքներն ու հմտությունները: Ներկայում ցանկում ներառված են երկու բնակավայրեր: Որպես ավանդական արհեստագործության տարածք հաստատվել է Գյումրի քաղաքը (ՀՀ Շիրակի մարզ), իսկ ավանդական խաղողագործության և գինեգործության տարածք է հռչակվել Արենի գյուղը (ՀՀ Վայոց ձորի մարզ): Երկուսն էլ հատկորոշվել են որպես զբոսաշրջության զարգացման ներուժ ունեցող բնակավայրեր:

- Գյումրի

Գյումրին համարվում է եզակի բնակավայր, որտեղ ակտիվ կենցաղավարում են գրեթե բոլոր ավանդական արհեստները՝ մետաղամշակությունը՝ ներառյալ գեղարվեստական, փայտամշակությունը, քարտաշությունը, որմնադիրությունը, ասեղնագործությունը, ժանեկագործությունը: Գյումրին միակ բնակավայրն է, որտեղ մինչ այսօր կիրառվում է պղնձագործությունը: Արհեստագործության ներկա վիճակը և արհեստներից շատերի ցուցաբերած զարգացման միտումները հիմք են Գյումրին որպես ավանդական արհեստագործության տարածք դիտարկելու համար: Ոչ նյութական մշակութային ներուժի պահպանման և կենսունակության պաշտպանության նպատակով Գյումրի քաղաքում 2012թ իրականացվեցին դարբնագործության, թաղիքագործության ուսուցման ծրագրեր, ինչպես նաև հանրակրթական, բարձրագույն ուսումնական, մշակութային հաստատությունների ուսուցիչների, դասախոսների համար ոչ նյութական մշակութային ժառանգության թեմայով տեսական և գործնական դասընթացներ: Այս գնահատականից պարզ է դառնում, որ Գյումրի քաղաքում մշակութային ժառանգության ռեսուրսների օգտագործման ներուժ կա:

- Արենի

Արենիում հայտնաբերված հնագիտական նյութերը, այդ թվում՝ գինու արտադրամասերն ու խաղողի մնացորդները, ինչպես նաև այն, որ տեղի բնակչությունը շարունակում է զբաղվել գինեգործությամբ, հիմք են տալիս Արենին դիտարկելու որպես գինեգործական մշակույթի ավանդական տարածք: Հայտնաբերված գինու արտադրամասն աշխարհում մինչ այժմ հայտնի ամենահին գինեգործարանն է, թվագրվում է Ք. ա. 4000-ական թվականներին: Գյուղում գինեգործությունն այսօր էլ ոչ նյութական մշակութային ժառանգության գերիշխող բնագավառ է, որը ոչ միայն կենսունակ է, այլև զարգացման միտումներ է դրսևորում: Արենիում ստեղծվել են յուրատեսակ գինեգործական տնտեսություններ՝ տնական և գործարանային: Գինեգործության ոլորտում ներգրավված է գյուղի ամբողջ բնակչությունը: Գինին պատրաստում են բացառապես խաղողի «Արենի» տեսակից, որի ողկույզն արտաքինից նման է ոչխարի գլխի: Քաղցրությունը (սպիրտի) 19-23 տոկոս է: Հատկապես միջազգային ճանաչում են ձեռք բերել Արենի գինու նոր տեսակները՝ «Արենի Մառանը» և «Արենի Գեդեռնը»: Գյուղում գործում է նաև գինու երկու գործարան: Այս իսկ պատճառով այս ռեսուրսը ունի զարգացման ներուժ:

Նախարարության պատասխանում ընդգծվել է տեղեկատու ցուցանակների հարցը: 2016 թվականի սեպտեմբերի 15-ի «Պատմամշակութային հուշարձանների պահպանության, օգտագործման և հանրահռչակման 2016-2020 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության N36 արձանագրային որոշմամբ, ինչպես նաև 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության N438 որոշման 32-րդ կետի պահանջով՝ լիազորված մարմինը հուշարձանային համալիրներում և առանձին հուշարձանների մոտ տեղադրում է միասնական նմուշով պատրաստված տեղեկատու ցուցանակներ: Այնուամենայնիվ, նշվել է հուշարձանային համալիրներում և հուշարձանների մոտ տեղեկատվական ցուցանակների անբավարարությունը որպես ոլորտին բնորոշ խնդիրներից մեկը: Նախկինում հուշարձանների տարածքներում տեղադրված են եղել երկու լեզվով և միայն հուշարձանի անվանումը ներառող վահանակներ: Որոշ հուշարձանների մոտ պահպանվում են խորհրդային տարիներին տեղադրված ցուցանակները, վերջին տարիներին առավել հայտնի հուշարձանների տարածքներում AMAP ծրագրի շրջանակներում իրականացվել են տեղեկատվական ցուցանակների տեղադրման աշխատանքներ: Երևան քաղաքի որոշ հուշարձանների մոտ տեղադրվել են տեղեկատու ցուցանակներ: Առկա խնդիրներն են.

- Ցուցանակներում ներկայացված տեղեկատվության ստույգությունը,
- Ֆինանսավորումը,
- Միասնական ձևանմուշի բացակայությունը:

Հստակ նշվել է, որ հարկ է լրացուցիչ գործողություններ իրականացնել այս ուղղությամբ և ներկայումս զբոսաշրջության զարգացման արդի պահանջներին համահունչ անհրաժեշտ է հուշարձանները ներկայացնող ցուցանակները պատրաստել եռալեզու՝ QR կոդերով: Հույս կա, որ եռալեզու տեղեկատվական վահանակ-ցուցանակների տեղադրման արդյունքում կբարձրանա հուշարձանների հանրահոջակման, հասարակության և զբոսաշրջիկների տեղեկացվածության մակարդակը: Վերոնշյալ **ռազմավարական ծրագրի** համաձայն՝ 2017թ. մշակվում է «**Հուշարձանների տարածքներում տեղեկատվական ցուցանակների նմուշի օրինակելի ձևի հաստատման մասին**» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Այս ուղղությամբ կատարվել է որոշակի աշխատանք. ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկերում ընդգրկված ՀՀ հուշարձանների տարածքում տեղադրված են կոնվենցիայի պահանջներից բխող տեղեկատվական ցուցանակներ:

Մշակույթի նախարարությունը վերոհիշյալ ծրագրերը որակել է որպես գործողություններ, որոնք օժանդակում են երկրի կայուն զարգացման ապահովմանը միտված մշակութային ժառանգության օգտագործման գործընթացին:

Նախարարության պատասխանն ավելի շուտ փաստերի արձանագրում է, իսկ այլ մեկնաբաններ արտահայտել են կարծիքներ մշակութային ժառանգության համատեքստում զբոսաշրջության զարգացման վերաբերյալ: Այս մեկնաբանությունների լույսի ներքո բարձրացվել են հետևյալ նկատառումները.

- Սպասարկման ոլորտի բոլոր ենթակառուցվածքները հարկ է բարեկարգել և արդիականացնել, և մասնավորապես հսկայածավալ աշխատանք է անհրաժեշտ ձեռնարկել հատկապես զբոսաշրջիկների համար տարրական հարմարությունների ապահովման առումով: IDEA (Հայաստանի զարգացման նախաձեռնություններ) հիմնադրամը կարող էր այստեղ կարևոր դեր խաղալ, քանի որ նրա հիմնական նպատակը համայնքների ինտեգրումն է զբոսաշրջային «արտադրանքի» շուրջ, օրինակ՝ գիշերակացի հարմարությունների և սննդի ծառայությունների միջոցով: Այն նաև համագործակցել է ընտանիքների հետ՝ վարելու նրանց «Բրեդ ընդ բրեքֆասթ» (B&B) սննդային ծառայությունները, քանի որ մասնավորապես կենտրոնանում է մշակութային ժառանգության վրա և սերտորեն համագործակցում է համայնքների հետ՝ չխաթարելու նրանց ինքնությունը: Մասնավորապես անհրաժեշտ է մշակել կայուն նպատակներ՝ զբոսաշրջության զարգացման կենտրոններ հանդիսացող վայրերում, օրինակ՝ Գյումրի և Գորիս քաղաքներում զբոսաշրջային հարմարությունների քանակը մեծացնելու ուղղությամբ:

- Ավելի շատ հստակություն՝ կապված մշակութային ժառանգության վայրերում մուտքի տոմսերի և վճարների կիրառման հետ, հատկապես կառավարման կարգավիճակի կապակցությամբ, եթե դրանք թանգարաններ են: Առաջարկվում է, որ այս համատեքստում մշակվի մի քաղաքականություն, որը կսահմանի, թե ինչպես են նորից ներդրվում վճարներից գոյացած գումարները:

- Ուժեղացնել և աջակցել գոյություն ունեցող «Իմ Հայաստան» ծրագրին՝ պատմությունը պատմելու կարողությունը ծառայեցնելով մշակութային ժառանգության կայունության ամրապնդմանը համայնքի հենքի վրա զբոսաշրջության զարգացման շնորհիվ (ծրագրի իրականացման առաջիկա տարիների ընթացքում), Հայաստանի բնակչության, Միիթունյանի և ԱՄՆ ՄԶԳ-ի միջև համագործակցային ծրագրի միջոցով:

- Ապահովել թանգարանների լիարժեք ներգրավվածությունը իրատեսական ծրագրերում՝ հաշվի առնելով Մշակույթի նախարարության և ՀՀ կառավարության նոր երթուղիների առաջարկները, և մշտադիտարկել թանգարանների առաջընթացը՝ հատկորոշելու թանգարանների ներուժը զբոսաշրջության խթանման գործում և արձագանքելու ցանկացած խնդրի, որը կարող է խոչընդոտել դրան:



- Ներդնել զբոսաշրջությանն առնչվող մշակութային ժառանգությանը հասցված վնասի գնահատման համակարգ և ապահովել կայուն մշակութային զբոսաշրջության քաղաքականության առկայությունը:

- Դիտարկել մշակութային ժառանգության վայրերում վանդալիզմի հարցը, որը կարող է վանել զբոսաշրջիկներին (հատկապես տեղական համայնքներում և դպրոցահասակ երեխաների շրջանում իրազեկության մակարդակի բարձրացման և կրթության միջոցով):

- Մահմանել հիմնավոր նպատակներ և հզորացնել տեղացի դերակատարների՝ զբոսաշրջության քաղաքականության իրականացմանն աջակցելու կարողությունները, օրինակ՝ զբոսաշրջության հետ կապված գործունեություն ծավալող փոքր ձեռնարկություններին (ծառայություններ, արտադրություն, ստեղծարար արդյունաբերություններ), որոնք կան ստարտափներ են, կան արդեն վաղուց գործող կայացած բիզնեսներ: Պետական կառույցների դերը կարող է լինել դրանց գործողությունները տարածելը և լուսարանելը:

- Ապահովել կայուն զբոսաշրջության ռազմավարությունների պատշաճ համակարգումը բոլոր շահագրգիռ կողմերի հետ մեկ միասնական մոտեցման շրջանակներում (միմյանցից անկախ աշխատելու փոխարեն), և այդ իսկ պատճառով:

- Տնտեսական զարգացման համար պատասխանատու նախարարության կազմում ստեղծել նոր, զբոսաշրջությամբ զբաղվող հանձնաժողով, ինչպես նաև ձևավորել միջգերատեսչական հանձնաժողով՝ դիտարկելու զբոսաշրջությունը մշակութային և բնության ժառանգության հետ առնչությամբ՝ ներգրավելով համապատասխան գերատեսչություններին և մարմիններին, օրինակ՝ Idea հիմնադրամին և տուր օպերատորներին, ինչպես նաև կրթական ծառայություններ մատուցողներին (օրինակ՝ ագրոտուրիզմի վերաբերյալ դասընթացների իրականացման նպատակով),

- Այս կերպ քննել կլաստերային զարգացումների հնարավորությունը, օրինակ՝ ցուցահանդեսների կամ առաջարկների, կամ մշակութային ժառանգության վայրերի ու տեղական բիզնեսի միասնական մարկետինգի իրականացում, մասնավորապես գինու շուկաները, ռեստորանները, խանութները կապակցել զբոսաշրջային օպերատորների հետ համագործակցության ձևաչափով և այս ամենը հիմնել ԱՄՆ ՄԶԳ, IDEA հիմնադրամի նախաձեռնությունների վրա՝ ստեղծելով կլաստերներ և այլ նախագծեր ձեռնարկատիրության զարգացման համար: Այլ օրինակների թվում կարող են լինել նոր նախաձեռնությունների մշակումները, օրինակ՝ բազմազան հետաքրքրությունները՝ ճիավարությունը, թռչունների դիտումը, ռեստորանները, գինեգործությունը, մշակութային միջոցառումները, որոնք կապակցվում են նաև թանգարանների, հետաքրքրություն ներկայացնող վայրերի և արգելոցների հետ: Այս ամենը միասնական և կապակցվածության մեջ ներառվում է առաջարկներում՝ հանրության շրջանում զարգացնելու էթնոկոլոգիական մշակույթը, այդ թվում՝ բարձրացնելու իրազեկության մակարդակը շրջակա միջավայրի պահպանության, ավանդույթների և ժողովրդական մշակույթի մասին:

- Հայաստանի սահմաններից դուրս (օրինակ՝ Վրաստանում կամ Թուրքիայում) գտնվող հայկական մշակութային ժառանգությանն առնչվող զբոսաշրջային գործունեության համար ավելի համակողմանի քաղաքականություն մշակել և երկրի սահմանները հատող մշակութային երթուղիների վերաբերյալ երկկողմ համաձայնագրեր և համատեղ նախաձեռնություններ մշակել (խրախուսելու զբոսաշրջիկների անդրսահմանային հոսքերը):

- Քանի որ զբոսաշրջությունը կարևոր է ամբողջ Հայաստանի համար, հարկ է ստեղծել զբոսաշրջային տեղեկատվության/հանրահոչակման կենտրոններ Երևանից դուրս: Կազմակերպել Երևանից դուրս մեկօրյա էքսկուրսիաներ՝ օգտվելով երկաթուղային ծառայություններից, որտեղ դրանք առկա են, կամ օգտվելով մշակութային ժառանգության վայրերի երթուղիների քարտեզներից:

- Ընդլայնել կապերը կրոնական իշխանությունների հետ՝ զարգացնելու կրոնական ժառանգության վրա հիմնված զբոսաշրջությունը, մասնավորապես՝ այն պատճառով, որ Հայաստանի քրիստոնեական ժառանգությունը եզակի է աշխարհում: Տաճարների ճոպանուղու ծրագրի օրինակը (Տաթևի դարպասներից դեպի Տաթևի



Չորացած շատրվան. Երևան

(պատկերի սկզբնաղբյուր)



վանական համալիր) լավ օրինակ է, որում ներառված է զբոսաշրջության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների (տեղեկատվական կենտրոնի, հյուրանոցի, խահրապարակների, քայլարշավի ուղիների, ճամբարային տարածքների և այլն) կառուցումը, ինչպես նաև օրինակ է նրա, թե ինչպես կարելի է հնարավորություն ընձեռել գործակալություններին և հիմնադրամներին համակարգելու այսպիսի ծրագրերը՝ ապակենտրոնացնելով դրանք կառավարության նախարարություններից և գերատեսչություններից (օրինակ՝ Անգլիայի քրիստոնեական ժառանգությունը):

- Ջարգացնել փորձի վրա հիմնված զբոսաշրջությունը, օրինակ՝ մշակել կազմակերպված խմբային էքսկուրսիաների փաթեթներ դեպի վանական համալիրներ, եկեղեցիներ, թանգարաններ, ինչը կարող է առաջ բերել բարձր եկամուտների հոսքեր,

- Այցելուների և ճանապարհորդների համար մշակել տեխնոլոգիական օժանդակության միջոցներ, օրինակ՝ սմարթֆոնների հավելվածներ մշակութային ժառանգության վայրերի, թանգարանների, հարմարությունների, կեցության վայրերի, հանրային զուգարանների մասին, տեխնոլոգիական օժանդակության միջոցներ ապահովել արտադրանքի և ծառայությունների նորորարության համար, պատրաստել սոցիալական մեդիայում հայկական ժառանգության և զբոսաշրջության ողջ պորտֆելը:

- Ջարգացնել մշակութային/զբոսաշրջային երթուղիները, մասնավորապես այն պատճառով, որ քիչ տեղեկատվություն է հայտնի գոյություն ունեցող երթուղիների մասին, օրինակ՝ Մետաքսի ճանապարհի սևծվյան երթուղու և այլ եվրոպական երթուղիների մասին, օրինակ՝ Արդյունաբերական ժառանգության եվրոպական երթուղին և Եվրախորհրդի մշակութային երթուղիները, մասնավորապես Եվրոպայում *Iter Vitis Route «Որթերի ուղի»* ծրագիրը: Այստեղ ներգրավված է 18 երկիր. ծրագիրը սկիզբ է առել որպես եվրոպական ինքնության տարր հանդիսացող գինեգործության հետ կապված գյուղատնտեսական լանդշաֆտային նախագիծ: Հայաստանն այս ծրագրին անդամակցում է 2015թ.-ից:

- Հաշվի առնել արդյունաբերության և, օրինակ, հանքահանության գործողությունների պատճառով հասցված բնապահպանական վնասը/մշակութային և բնության ժառանգությանը հասցվող վնասը, մշակել դրա դեմ պայքարելուն միտված կայուն քաղաքականություններ, այդ թվում՝ դիտարկել ազդեցությունների մեղմման նախաձեռնությունների հնարավորությունը:

#### **4. Մշակութային ժառանգության կառավարման մակարդակները (ներառյալ՝ բյուջեի կառավարում)**

Այս հատվածը նպատակ էր հետապնդում ստանալ մշակութային ժառանգության համար վարչարարության տարբեր մակարդակների, դրանց արդյունավետության և ֆինանսավորման հետ կապված հարցերի մասին տեղեկատվություն: Այստեղ տրված հարցն էր. «Ի՞նչ գործողություններ են անհրաժեշտ, որպեսզի բարելավվեն մշակութային ժառանգության կայուն զարգացմանը և միջոցների շահավետ շահագործմանը միտված կառավարման կառուցվածքը և բյուջեն»:

Մշակույթի նախարարությունը հատկորոշել է վարչարարության և մշակութային ու բնության ժառանգության ռեսուրսների հետևյալ մակարդակները.

Մշակութային և բնության ժառանգության պահպանության և օգտագործման բնագավառի կառավարման օղակներն են՝

- Հայաստանի Հանրապետության կառավարությունը,
- պետական կառավարման հանրապետական (մշակույթի, քաղաքաշինության և բնապահպանության նախարարություններ), տարածքային (մարզեր) կառավարման մարմինները,
- տեղական ինքնակառավարման մարմինները:

**« ՀԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ »** ապահովում է մշակութային ժառանգության պահպանության և օգտագործման բնագավառում պետական քաղաքականության իրականացումը, հաստատում է պատմության և մշակույթի ու բնության հուշարձանների

պահպանության և օգտագործման բնագավառի հանրապետական և մարզային պետական ծրագրերը, ստեղծում է պատմամշակութային ու բնապատմական արգելոցներ և հաստատում դրանց կանոնադրությունները: **Բացառիկ դեպքերում** թույլտվություն է տալիս հանրապետական նշանակության հուշարձանները տեղափոխելու և փոփոխելու համար:

**ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ** մշակույթի ոլորտում պետական լիազոր մարմինն է, որը մշակում ու իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը մշակույթի և տեղեկատվության բնագավառում: Պետական կառավարման տարածքային մարմինների հետ համատեղ ապահովում է պետական մշակութային տարածքային քաղաքականության իրականացումը: Մշակում է Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգության ստեղծման, պահպանության, պաշտպանության, ուսումնասիրության, օգտագործման, հանրահռչակման ծրագրեր, ինչպես նաև պատմամշակութային ժառանգության հաշվառման, պահպանության, օգտագործման ու համալրման սկզբունքները, կանոնները, չափանիշները (նորմատիվներ) և չափորոշիչները: Հաստատում է հուշարձանների պահպանական գոտիների նախագծերը և սահմանում դրանց պահպանության ռեժիմը: Նշված գործառույթները ՀՀ մշակույթի նախարարությունն իրականացնում է պատմամշակութային ժառանգության ոլորտը համակարգող համապատասխան նախարարի տեղակալի, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների միջոցով:

**Մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչությունը** մշակում է մշակութային ժառանգության պահպանության, հանրահռչակման հայեցակարգերի, ռազմավարության, մշակութային ժառանգությունը կարգավորող իրավական ակտերի և այլ փաստաթղթերի նախագծեր, ինչպես նաև ներկայացնում է առաջարկություններ գործող փաստաթղթերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին, ապահովում իրավական ակտերի կիրարկումը, իրականացնում մշակութային ժառանգության բնագավառի պետական քաղաքականության վերլուծությունը:

**Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալությունը** կազմակերպում է Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքների պետական հաշվառման, պահպանության և օգտագործման գործընթացները: Սահմանված կարգով հաստատում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքների պահպանական գոտիների նախագծերը և սահմանում դրանց պահպանության պայմանակարգը (ռեժիմ): Նախարարին կից գործող գիտամեթոդական խորհրդի դրական եզրակացությունն ստանալուց հետո համաձայնություն է տալիս պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ ունեցող բնակավայրերի, դրանց հատվածների հատակագծման, կառուցապատման, ինչպես նաև պատմության և մշակույթի անշարժ հուշարձան հանդիսացող առանձին շինությունների ու համալիրների ամրակայման, վերականգնման, փոփոխման և բարեկարգման նախագծերի վերաբերյալ: Գործակալությունը կազմված է երկու՝ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման ու հուշարձանների վերականգնման բաժիններից և տարածքային ստորաբաժանումներից՝ 30 աշխատակիցներով:

**Մշակութային արժեքների պահպանության գործակալությունն** ապահովում է Հայաստանի Հանրապետության տարածքից մշակութային արժեքների արտահանման և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման օրինականությունը: Ընդունում է որոշումներ ՀՀ տարածքից մշակութային արժեքների արտահանման և ժամանակավոր արտահանման հնարավորության կամ անհնարության մասին:

**«Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը** իրականացնում է շարժական մշակութային արժեքների փորձաքննություն:

**«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ն** իրականացնում է պետական սեփականություն հանդիսացող պատմական, հնագիտական, ճարտարապետական, մոնումենտալ արվեստի անշարժ հուշարձանախմբերի, հուշարձանների համալիրների,



պատմական և բնապատմական միջավայրի, պատմամշակութային հողերի, տեղանքապատկերների (լանդշաֆտների), մշակութային այլ արժեքների պահպանությունը, ուսումնասիրումը, հանրահռչակումը և օգտագործումը:

**«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ն** իրականացնում է պատմամշակութային արժեք ներկայացնող օբյեկտների հայտնաբերման, հաշվառման, ուսումնասիրման, վավերագրման, վկայագրման, պատմամշակութային հուշարձանների պետական ցուցակների կազմման, պահպանական գոտիների նախագծման և թողարկման, գիտատեղեկատու շտեմարանի կազմման և թվայնացման աշխատանքները, հայկական բազմահատորյակի պատրաստումը, «Հուշարձան» տարեգրքի ստեղծումը, վտանգված և վերականգնվող հուշարձանների պեղումները: Կազմում է հուշարձանների պետական կադաստրը: Իրականացնում է պատմամշակութային ժառանգության բնագավառի կադրերի վերապատրաստում, պատմամշակութային շարժական և անշարժ հուշարձանների կյուրաքանակյան, մարդաբանական և հնէաբանական լաբորատոր հետազոտությունների իրականացում ու հնագիտական գտածոների վերականգնում, դրանց գրչանկարների պատրաստում, պատմամշակութային, մշակութաբանական և հնագիտական փորձաքննությունների իրականացում, մշակութային զբոսաշրջության զարգացման ծրագրերի մշակում, պատմամշակութային հուշարձանների մանրակերտների և հուշանվերների պատրաստում ու իրացում:

**«Հուշարձանների վերականգնման կենտրոն» ՓԲԸ-ն** իրականացնում է պատմամշակութային անշարժ հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման, անհրաժեշտության դեպքում նաև տեղափոխման ծրագրերի, նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ, հուշարձանների և դրանց տարածքների ճարտարապետական, կոնստրուկտիվ, պատմական, հնագիտական և այլ բնույթի հետազոտությունների ու ուսումնասիրությունների իրականացում, հուշարձանների տեխնիկական վիճակի, պահպանվածության աստիճանի, նպատակային օգտագործման հնարավորությունների և այլ տեսակի դիտարկումների (մոնիթորինգի) իրականացում:

Ինչպես ակնհայտ է դառնում Մշակույթի նախարարության՝ Բաժին 4-ում վերոշարադրյալ պատասխանից, մանրամասները հիմնականում արտացոլում են փաստացի իրողությունները: Պատասխանում չեն նշվում այն կետերը, որոնք վերաբերում են մշակութային ժառանգության խնդիրների համար բյուջեի համապատասխանությանը (աշխատակազմի համալրում, շինարարական աշխատանքներ, սուբսիդավորում և այլն): Պատասխանը չի որոշարկում նաև տարբեր տեսակի գործողությունների վրա ծախսված բյուջետային ռեսուրսների տոկոսները, չի մանրամասնում որևէ կոնկրետ եղանակ, որով հնարավոր է ստեղծել եկամուտ՝ այս գործողությունները ֆինանսավորելու համար: Սա գուցե այն պատճառով է, որ կառավարությունում վերջերս փոփոխություն է տեղի ունեցել, և դեռևս հնարավոր չէ որոշարկել այս տեղեկատվությունը:

Այլ պատասխանողներ արտահայտել են կարծիքներ մշակութային ժառանգության ռեսուրսների համատեքստում վարչարարության զարգացման մասին: Այս մեկնաբանությունների լույսի ներքո առանձնացվել են հետևյալ հարցադրումները.

- Տպավորություն է ստեղծվում, որ ֆինանսական միջոցները սուղ են: Օրինակ՝ Կումայրի արգելոց-թանգարանի առումով, որտեղ կենտրոնացած է քաղաքի պատմական և մշակութային ժառանգությունը, թանգարանի վարչական մասնաշենքը քայքայված է և չի շահագործվում: Կառույցին պատկանող վարչական շենքը գտնվում է վթարային վիճակում և օգտագործումից դուրս է մնացել: Այդ իսկ պատճառով արգելոցի անձնակազմը տեղավորված է համայնքապետարանի շենքում: Իրականում նշվել է, որ կայուն ինքնաֆինանսավորման համար ֆինանսական աղբյուրները սուղ են: Օրինակ՝ Գյումրիում գտնվող «Քաղաքային ուսումնասիրությունների կենտրոնը», որի առաքելությունն է քաղաքի մշակութային և հատկապես անշարժ ժառանգության պահպանման և դրա սոցիալական դերի բարձրացումը, ստիպված է հույսը դնել եվրոպական հիմնադրամների ֆինանսական աջակցության վրա:

- Նաև տրվել է պատասխան այն մասին, որ աուդիո-զբոսավարների և մշակութային ժառանգության վայրեր տոմսերի վաճառքի համակարգի մշակման համար դի-

տարկվել է բյուջեի հատկացման հնարավորությունը, ինչը դրական միտում է զբոսաշրջային հետաքրքրության և եկամուտների ստեղծման տեսանկյունից:

- Հետագա մեկնաբանությունները հասկորոշել էին, որ մշակութային ժառանգության արժեքների համար պահանջվում են ավելի մեծ ներդրումներ կառավարության կայուն զարգացման նախաձեռնությունների շրջանակում:

- Այնուհետ հիշատակվել է նաև, որ ներկայիս «անձնագրային համակարգը», որով սահմանվում է հուշարձանների վիճակը և դրանց նշանակությունը որպես հուշարձան, բավականին քարացած է, հիմնականում չի կենտրոնանում շահավետ օգտագործման հնարավորությունների վրա: Ավելին, նշվել է, որ կա անհրաժեշտություն ավելի մեծ թվով հուշարձաններից ապահովելու ստացվող եկամուտներ, օրինակ՝ հենց զբոսաշրջությունից: Նախարարության տարբեր նախագծերից և ծրագրերից դատելով (վերը՝ Բաժին 2, 3)՝ թվում է, թե ավելի մեծ ուշադրության են արժանանում Հայաստանի մասնավորապես հյուսիսարևելյան, հյուսիսարևմտյան և հարավային երթուղիները, քանի դեռ դրանք բարվոք վիճակում են: Բայց նաև պահանջվում է բավականաչափ ֆինանսական միջոցների տրամադրում՝ օժանդակ ենթակառուցվածքների, զբոսաշրջիկների համար հարմարությունների և կացարանների զարգացման համար (ինչը կարող է դրական կերպով անդրադառնալ աշխատատեղերի ստեղծման վրա):

- Ներկա եվրոպական մոտեցմանը համահունչ՝ կենսականորեն անհրաժեշտ է մշակութային ժառանգության ռեսուրսները համարել «արժեք, ակտիվ», որը կարող է շահավետ կերպով օգտագործվել հասարակության կողմից; Հետևաբար, հարկ է ձևավորել դրանց օգտագործման նկատմամբ ճկուն վերաբերմունք: Ինչպես նշվել է առաջին մասում, հարկ է ապահովել կայուն պահպանության և մշակութային ժառանգության տնտեսական և սոցիալական ներուժի զարգացման հավասարակշռությունը (օրինակ՝ հասկորոշել ռիսկային վիճակում գտնվող ժառանգությունը):

## **5. Աշխատակազմին և գործնական ուսուցմանն առնչվող անհրաժեշտություններ**

Այս թեման վերաբերում էր մարդկային ռեսուրսների համապատասխանությանը և համապատասխան մարմինների համար ուսուցման և հմտությունների զարգացման կարիքներին (ինչպես նշված է Բաժին 4-ում)՝ իրականացնելու իրենց պարտականությունները, մասնավորապես պահպանության, վերականգնման և հիմնանորոգման նախագծերի աջակցության և իրականացման, ինչպես նաև մշակութային ժառանգության ռեսուրսների հանրահոչակման և թանգարանային ծառայությունների զարգացման համատեքստում: Այստեղ տրվել է հետևյալ հարցը. «Ի՞նչ գործողություններ են անհրաժեշտ կադրերի բարելավման և հմտությունների պակասը լրացնելու համար, որպեսզի մշակութային ժառանգության արժեքների ու միջոցների ազդեցությունն ավելի արդյունավետ և կայուն լինի»:

Մշակույթի նախարարության պատասխանում հասկորոշվեցին մի շարք ուսումնական և գիտական հաստատություններ, որոնք մասնակցում են նյութական մշակութային ժառանգության ոլորտի կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթացներին, մասնավորապես **Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը, Երևանի պետական համալսարանը, Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ը, ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ը, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը** և այլն:

Հայաստանի Հանրապետությունում ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտում ֆորմալ կրթություն են ապահովում մի շարք պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, որոնց մեջ ամենածավալուն աշխատանքներն իրականացնում են ներքոհիշյալ կրթական կառույցները: Երևանի պետական համալսարանում կան բակալավրական և մագիստրոսական դասընթացներ, որոնք վերաբե-

րում են ոչ նյութական ժառանգության խնդիրներին և հայոց պատմությանը: Կա նաև Հայ արվեստի պատմության և տեսության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոն: Համալսարանում ժառանգության և ժառանգությանն առնչվող բազմապիսի խնդիրներին են անդրադառնում արվեստաբանության բաժնի, հնագիտության և ազգագրության ամբիոնի, մշակութաբանության բաժնի և հայ բանախրության ֆակուլտետի գործունեության շրջանակներում, այդ թվում՝ նաև ասպիրանտական և դոկտորական ծրագրերում: Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետը պատրաստում է ոչ նյութական մշակութային ժառանգության մասնագետներ: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան ոչ նյութական մշակութային ժառանգության ժողովրդական երաժշտարվեստի, երգարվեստի և նվագարանային երաժշտության բնագավառի մասնագետների պատրաստումն է իրականացնում: Երևանի գեղարվեստի պետական ակադեմիան ոչ նյութական մշակութային ժառանգության ուսուցմանն անդրադառնում է քանդակագործության ֆակուլտետի «Դիցաբանություն» և «Խաչքարի տեխնիկա» առարկաների միջոցով, իսկ կիրառական արվեստի ֆակուլտետը պատրաստում է խեցեգործության և գորգարվեստի գծով մասնագետներ:

Մշակույթի նախարարությունը պատասխանատու է պատմամշակութային հուշարձանների պահպանության բնագավառի **պետական քաղաքականության մշակման**, պահպանության, հաշվառման, հետազոտման, օգտագործման, հանրահռչակման գործառնությունների համար, որոնք իրականացնում է կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների՝ **Մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչություն, Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալություն**, ինչպես նաև նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով՝ **«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն»**, **«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ների**, **«Հուշարձանների վերականգնման կենտրոն» ՓԲԸ**:

Թանգարանային աշխատողների վերապատրաստման ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր տարի իրականացվում են թանգարանային կադրերի վերապատրաստումներ Հայաստանում և արտերկրում, արտերկրի մասնագետների այցեր Հայաստան, համատեղ պայմանագրերի կնքում, թանգարանային տարբեր ոլորտների (այդ թվում՝ կրթական ծրագրերի) մասնագետների վերապատրաստում: Գրադարանային ոլորտում լրացուցիչ կրթությանը կամ վերապատրաստմանն առնչվող խնդիրները համակարգվում են հիմնականում հաստատությունների ներքին ցանցում տեղային փորձագետների ներգրավմամբ: Գրադարանային ոլորտի աշխատակիցները ընդգրկված չեն տեղական ինքնակառավարման մարմիններում: Կադրերի բարելավման և հմտությունների պակասը լրացնելու համար անհրաժեշտ է համակարգված ձևով իրականացնել ամենամյա վերապատրաստման դասընթացներ՝ դրանք համադրելով փորձի փոխանակման և գործնական աշխատանքի հետ: ՀՀ մշակույթի նախարարության նախաձեռնությամբ համայնքային 90 գրադարանավարների համար վերապատրաստման դասընթացներ՝ վարպետաց դասեր են անցկացվում Հայաստանի ազգային գրադարանում: Գրադարանավարների վերապատրաստման դասընթացների կազմակերպումը նպատակ ունի բարձրացնելու հայ գրադարանավարների մասնագիտական պատրաստվածության մակարդակը, ծանոթացնելու գրադարանային գործում նոր իրողություններին ու ժամանակակից մոտեցումներին, օրենսդրական դաշտում կատարված փոփոխություններին, գրադարանային գործընթացների ավտոմատացման գործում տեխնիկական միջոցների օգտագործման հմտություններին, համակարգչային ծրագրերին, գրադարանների թվայնացման խնդիրներին և այլն:

Մշակույթի նախարարության պատասխանում նաև նշվում են մի շարք խնդիրներ, որոնք դեռևս լուծման կարիք ունեն. մասնավորապես հայկական պատմամշակութային հարուստ ժառանգության պահպանության և վերականգնման նպատակով գոյություն ունեցող մասնագիտացված կառույցները քիչ են, դրանց նյութատեխնիկական զինվածությունն անբավարար է արդի մեթոդներով վերականգնման աշխատանքներ կատարելու համար, ինչը նաև պատճառ է որակյալ կադրերի արտահոսքի:

Պատասխանը նաև ընդգծում է այն հանգամանքը, որ կրթական գործընթացներում չկա շարունակականություն, բարձրագույն ուսումնական հաստատություններն ավարտելուց հետո ընդհատվում են մասնագիտական կրթական գործընթացները, երիտասարդ կադրերը չեն անցնում գործնական մասնագիտական վերապատրաստում, հանրապետությունում չկան հուշարձանների վերականգնման ոլորտի միջին մասնագիտական կրթական ծրագրեր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարածաշրջանում առկա են կոնֆլիկտային իրավիճակներ, որոնց արդյունքում խիստ վտանգված են պատմամշակութային արժեքները, արդիական է դարձել մասնագիտական օժանդակության ցուցաբերումը:

Նախարարության պատասխանն ընդգծում է, որ մշակութային ժառանգության և հարակից ոլորտների մասնագետների համար ուսուցումը և վերապատրաստումը մեծապես ակադեմիական են իրենց բնույթով: Այլ պատասխանողներ նույնպես կարծիք են հայտնել աշխատակազմի համալրման, հմտությունների և ուսուցման կարիքների մասին, որոնք կօգնեն բարելավել մարդկային ռեսուրսների կարողությունները և ապահովել ժառանգության արժեքների և ռեսուրսների ավելի մեծ արդյունավետությունը: Այս մեկնաբանությունների և չլուծված հարցերի լույսի ներքո բարձրացվել են հետևյալ հարցադրումները.


- Թեև կրթական ծրագրերն ընդգրկուն են, դրանք խիստ ակադեմիական են թվում իրենց բնույթով:

- Մշակութային ժառանգության ոլորտում բիզնես զգացողություն զարգացնելու անհրաժեշտություն կա, եթե այն, ի վերջո, պետք է շահագործվի առևտրային սկզբունքով: Այսպիսի զգացողությունը կարելի է իսկապես զարգացնել միայն միջազգային փորձի և/կամ կրթության միջոցով:

- Նոր տեսակի հմտություններ պետք է ձեռք բերվեն և ներառվեն մասնագետների ուսուցման ծրագրերում, մասնավորապես.

- ծրագրի կառավարում և ընկալում,
- ծրագրերի ֆինանսական գնահատում և կառավարում/իրագործելիության ուսումնասիրություն,
- ֆինանսական միջոցների հայթայթման, բիզնես և մարքեթինգային հմտություններ, այդ թվում՝ նաև գործընկերային մասնակցությամբ ծրագրերի կառավարման ժամանակ փորձառությամբ կիսվելու հմտություններ (օրինակ՝ պետական-մասնավոր գործընկերությունների, այդ թվում՝ ներդրումների վրա հիմնված կազմակերպությունների ներգրավման դեպքերում),
- մասնագետների համար շարունակական վերապատրաստումներ մասնագիտական չափորոշիչների (հատկապես՝ ճարտարապետական և հնագիտական հուշարձանների վերականգնման ոլորտում) բարելավման և մասնագետների համար այլ, մշակութային ժառանգությանը չվերաբերող հմտությունների մասնագիտական չափորոշիչների մշակման միջոցով,
- մասնավոր հատվածի հեղինակավոր մասնագետների ներգրավում (ճարտարապետներ, ինժեներներ, հնագետներ, վերականգնողներ, արհեստավորներ, համակարգողներ և այլն),
- ժամանակակից տեխնոլոգիական օժանդակ միջոցների օգտագործում, օրինակ՝ առանց միջամտության հնագիտական հետազոտություններ, աշխարհագրական տեղեկատվական համակարգեր և տվյալների մշակում, համացանցային ռեսուրսներ, եռաչափ տեխնոլոգիաներ և թվային ծառայություններ (որոնք հիշատակված չեն նախարարության պատասխանում),
- իրազեկության մակարդակի բարձրացում և հանրահոջակում (շահագրգիռ կողմերի, տեղական համայնքների, կամավորների և այլոց աջակցության և ներգրավման ապահովում),
- զբոսաշրջության զարգացում և վերահսկողություն՝ ներառյալ ցանցային հարաբերությունների հաստատումը, օրինակ՝ տեղեկագրերի, սոցիալական մեդիայի, էլեկտրոնային փոստով հաղորդակցվողների խմբերի կամ այլ երկրներ ուսումնական այցերի միջոցով,
- այլ հմտությունների ձեռքբերում, օրինակ՝ ցանցային կապերի հաստատում:





«Ստվերներ» արվեստի գործ , հեղ.՝ Ժավաղ Պլենսա

(www.muse.am)



- Մասնավորապես նշվել է, որ թանգարանի աշխատակազմը հաճախ մոտիվացված չէ և չունի համակողմանի վերապատրաստման հնարավորություն՝ աշխատանքային հմտությունների բարելավման համար: Պատասխանողներից մեկը հասկորոշեց թանգարանի աշխատողների համար ուսումնական կենտրոնի ստեղծման անհրաժեշտությունը՝ հղում անելով 2014թ. մի նախաձեռնության, որով սկսեց գործել Թանգարանային գործի ուսումնական կենտրոնը Հայաստանում Հայաստանի ազգային կոմիտեի, Թանգարանների աշխատակիցների և ընկերների սառցիացիա ՀԿ-ի և Մեծահասակների կրթության գերմանական սառցիացիայի միջազգային համագործակցության DVV միջազգային ինստիտուտի նախաձեռնությամբ: Բացի այդ, Թանգարանների միջազգային խորհրդի (ICOM) աջակցությամբ հնարավոր է ամենամյա աջակցություն տրամադրել մի շարք թանգարանային աշխատողների՝ նրանց ներգրավելով միջազգային վերապատրաստման/ուսուցման ծրագրերում և օգնելով նրանց մասնակցելու միջազգային գիտաժողովների:

- Հարկ է լիարժեք կերպով օգտվել COMUS ծրագրի ընձեռած հնարավորություններից՝ քաղաքների և ճարտարապետական հուշարձանների վերականգնման՝ ներառյալ ֆինանսական պլանավորման/ֆինանսավորման հայտադիմումների (ուղղված, օրինակ, եվրոպական կամ միջազգային ֆինանսավորողների), ծրագրի կառավարման, համայնքի զարգացման, ինչպես նաև Հայաստանի տարածքում գտնվող այլ համայնքների հետ հաղորդակցության և փորձի տարածման հնարավորությունները՝ նաև օգտվելով COMUS-ին անդամակցող այլ երկրների հետ ցանցային հարաբերությունների և կապերի առավելությունից:

## **6. Մասնավոր հատվածի իրավունքները և երրորդ հատվածը (ֆիզիկական և իրավաբանական անձինք)**

Այս թեման հետազոտում է մասնավոր հատվածի մասնագետների և ձեռնարկությունների (մասնավորապես նյութական ժառանգության արժեքների հետ աշխատողների) դերը և ավելի է մակրամասնում վերը՝ Բաժին 5-ում արծարծված հարցերը: Այստեղ տրված հարցն էր. «Ի՞նչ գործողություններ են անհրաժեշտ մասնավոր սեփականատիրության մեջ գտնվող մշակութային ժառանգության արժեքների վրա կատարվող աշխատանքների որակը և հսկողությունը բարելավելու, ինչպես նաև այդ գործընթացում ներգրավված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերահսկելու համար»:

Մշակույթի նախարարության պատասխանն ընդգծում է, որ մշակութային ժառանգության պահպանության բնագավառում մասնավոր սեփականության հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ հողային օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (մասնավորապես անշարժ հուշարձանների բնագավառում «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության ու օգտագործման մասին» ՀՀ օրենքով, «ՀՀ քաղաքաշինության մասին օրենքով», բնության հուշարձանների բնագավառում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» ՀՀ օրենքի դրույթներով) (թեև հարկ է նշել, որ բնապահպանական ազդեցությունը անհրաժեշտ է դիտարկել բնության հուշարձանների բնագավառից դուրս նաև. ԵՄ կանոնակարգերը հաշվի են առնում նաև մշակութային ժառանգության զարգացման ծրագրերի ազդեցությունը):

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության ու օգտագործման վերաբերմամբ իրավաբանական ու ֆիզիկական անձինք կարող են իրենց անմիջական մասնակցությամբ, նախաձեռնությամբ, հովանավորությամբ, ֆինանսական, նյութատեխնիկական օգնությամբ աջակցել հուշարձանների նորոգման, վերականգնման և օգտագործման աշխատանքներին: Այնուամենայնիվ, չի մասնավորեցվում օժանդակության այն ծավալը, որը տրվում է այս անձանց: Սովորաբար, նրանք պետք է կրեն որոշակի պատասխանատվություն՝ ըստ պահպանության և հուշարձանների օգտագործման մասին համապատասխան օրենսդրության պահանջների: Այս իմաստով, օրենսդրական պահանջների նկարագրությամբ դրանք պարտադիր պահանջներ են և ինչ-որ իմաստով բացասական են.

հարկ է դրանց համար սահմանել հավասար հանդիպակաց միջոցներ՝ ժառանգության շահավետ օգտագործման համար դրական գործողությունների ապահովման նպատակով: Այստեղ էական է ունենալ այն ընկալումը, որ մշակութային ժառանգության վերաբերյալ օրենսդրությունում հարկ է պահպանել դրական և բացասական խնդիրների միջև հավասարակշռությունը՝ հավասարակշռելով պահպանության պահանջները շահավետ օգտագործման հետ:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցին նշվել է որպես հուշարձանների և եկեղեցիների խոշոր սեփականատեր, քանի որ 1988-2006թթ. Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցուն են հանձնվել 188 վանքեր և եկեղեցիներ, սակայն ենթադրվում է, որ այն նույնպես ենթարկվում է նույն պահանջներին, ինչ մշակութային ժառանգության այլ «մասնավոր» սեփականատերեր:

Նախարարության պատասխանում նշվում են մի շարք գործողություններ, որտեղ **համագործակցություն է հաստատվել և համատեղ ծրագրեր են իրականացվել Հայաստանում գործող հասարակական կազմակերպությունների, մասնավորապես «ԻԿՕՄՕՍ/ Հայաստան», «ԻԿՕՄ», Հայաստանի ճարտարապետների միություն, Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ, «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ (RAA)», «Հայկական հուշարձանների ճանաչման ծրագիր», «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամ», «Ուրբանլաբ», «360 Հայաստան» կազմակերպությունների հետ:** Նշվել են նաև մի շարք ծրագրեր, որոնք իրականացվել են այս կազմակերպությունների հետ համատեղ, մասնավորապես.

- «**Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի (RAA)**» հետ՝ 2010 թվականից «Արտերկրում հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրման» ծրագիրը,

- «**Հայկական հուշարձանների ճանաչման ծրագիր**» հասարակական կազմակերպության հետ՝ Հայաստանի պատմամշակութային և բնության հուշարձանների հինգ լեզուներով տեղեկատվական վահանակների տեղադրման աշխատանքները,

- «**360 Հայաստան» կազմակերպության** հետ՝ 2014 թվականին «360 Հայաստան» (Հայաստանի հուշարձանների վիրտուալ շրջագայությունների և 360 armenia.am կայքէջի ստեղծում) ծրագիրը և այլն:

Նախարարության պատասխանը ընդգծում է հուշարձանների և մշակութային ժառանգության վայրերի վերահսկողության և պահպանության մասին օրենսդրական դրույթների բնույթը: Բացի հիմնականում հասարակական կազմակերպությունների հետ համագործակցային ծրագրերից, նախարարությունը չի նշել կոնկրետ խնդիրներ՝ ի նպաստ հասարակության մշակութային ժառանգության շահագործման ոլորտում մասնավոր հատվածի դրական ներգրավման գործընթացի մասին: Այս կապակցությամբ սույն զեկույցը բարձրացնում է մի շարք հարցեր, որոնք ներառում են նաև դիտորդների կողմից արված մեկնաբանությունները:

- Էական է, որ երկու կողմերն էլ համագործակցեն մասնավոր սեփականություն համարվող մշակութային ժառանգության արժեքների շուրջ տարվող աշխատանքների վերահսկողության, բարելավման ծրագրերի և նմանատիպ այլ գործողություններում իրավաբանական և ֆիզիկական անձանց ներգրավման վերաբերյալ կանոնակարգերի մշակման և իրականացման ուղղությամբ:

- Թեև պետական կառույցներն ունեն մշակութային ժառանգության արժեքների պահպանության/վերականգնման աշխատանքները վերահսկելու բոլոր լիազորությունները, ենթադրվում է, որ մշակութային ժառանգության հուշարձաններին վնաս է հասցվում զարգացման ծրագրերի միջոցով, և այդ հանրային կարծիքը միակ «իրավաբան» է, որը պայքարում է անշարժ հուշարձանների ոչնչացման դեմ: Այս իսկ պատճառով էական է, որ շեշտադրումը փոխվի, և մշակութային ժառանգությունն այլևս չդիտարկվի որպես զարգացման խոչընդոտ, այլ սկսի դիտվել որպես հասարակության զարգացմանը նպաստող գործոն:

- Այստեղ պահանջվում է թե՛ մշակութային ժառանգության ազդեցության գնահատում (օրինակ՝ բնապահպանական գնահատման, բայց նաև ավելի ընդհանրական համատեքստում), թե՛ ավելի կուռ և ինտեգրված մտածելակերպ մշակութային ժա-

ռանգության ռեսուրսների շահագործման առումով՝ ներառյալ մշակութային ժառանգության առավելությունների ընդգծման համար արված ներդրումների թե՛ ուղղակի և անուղղակի օգուտների ազդեցության չափումը, թե՛ կարծիքներ ձևավորելուն միտված համապատասխան քաղաքականությունների մշակումը:

- Նշվել է, որ ներդրումների ոլորտի համար գնումների ընթացակարգերը բարելավվել են վերջին տարիներին (այս գործում ներգրավված մարդկանց/կազմակերպություններին առաջադրվող կոնկրետ պահանջների շնորհիվ): Մա լավ հիմք է հանդիսացել մրցակցային եղանակով կապալառուների ընտրության համար, սակայն հետագա տարիների կտրվածքով աշխատանքների համար հատկացված բյուջեն/ֆինանսավորումը (օրինակ՝ երկարաժամկետ պահպանման ծախսերի մասով) լրացուցիչ քննության կարիք ունի (որպեսզի բոլոր ծախսերը սկզբից մինչև վերջ նախատեսված լինեն):

- COMUS ծրագրի շրջանակներում վերականգնման նախաձեռնություններից քաղված դասերը կարող են օգտակար լինել այս համատեքստում (այդ թվում՝ նաև ծրագրի կառավարման, իրագործելիության և ֆինանսավորման հարցերի շուրջ հետագա զարգացման տեսանկյունից):

## 7. Ֆինանսական օժանդակություն և աջակցություն

Այս թեմայի ներքո քննարկվում էր ֆինանսական կամ հարկային արտոնությունների տրամադրման իրավական միջոցների/ծրագրերի առկայությունը աջակցելու մշակութային ժառանգության պահպանության, նորոգման, վերականգնման և այլ աշխատանքներ իրականացնողներին: Այստեղ տրվել էր հետևյալ հարցը. «**Ի՞նչ գործողություններ են անհրաժեշտ ֆինանսավորման մեխանիզմների ապահովման ու դեկավարման համար**»:

Մշակույթի նախարարությունը մատնանշել է մշակութային ժառանգության պահպանության և շահագործման նպատակով ֆինանսավորման հետևյալ աղբյուրները.

- պետական և համայնքի բյուջեների միջոցներով,
- հուշարձանների սեփականատերերի և օգտագործողների միջոցներով,
- մշակութային, հասարակական և այլ կազմակերպությունների ու հիմնադրամների միջոցներով,
- օրենքով չարգելվող այլ միջոցների հաշվին:

Պետական հատվածից ֆինանսավորումը կատարվում է երկու վարչական մակարդակով և հիմնված է մշակութային ռեսուրսների պահպանման, տարածման և զարգացման պետական բյուջեից հատկացումներով թիրախային ծրագրերի վրա («**ՀՀ բյուջետային համակարգի մասին**», «**Տեղական ինքնակառավարման մասին**», «**Ֆինանսական համահարթեցման մասին**» ՀՀ օրենքների հիման վրա):

Նախարարությունը փաստել է, որ պատմամշակութային ժառանգության պահպանության բնագավառը բնորոշվում է պատմամշակութային ժառանգության պահպանության և վերականգնման համար նախատեսվող ֆինանսական միջոցների աճով՝ ներառյալ միջազգային կառույցների հետ իրականացվող ծրագրերը, սակայն չի խոսվում սրա նշանակության մասին (օրինակ՝ արդյոք ֆինանսավորման պակասը խոչընդոտո՞ւմ է մշակութային ժառանգության ոլորտի զարգացմանը, թե ոչ), ինչպես նաև չի բացատրվում ֆինանսավորման օժանդակության տեսակները (արդյոք սուբսիդիաներ կամ հարկային արտոնություններ տրամադրվո՞ւմ են), կամ ինչպես է հավաքվում կամ օգտագործվում հուշարձանի տարեկան վարձակալության վճարը (արդյոք այն ուղղվո՞ւմ է պետական ծրագրի, թե՞ ուղղվում է օժանդակելու մասնավոր սեփականատերերին և երրորդ հատվածի): Պատասխանում պարզապես նշվում է, որ պետական քաղաքականությունը ձգտում է ապահովել մասնավոր հատվածի ներգրավվածությունը և ներդրումների աճը և որ, բացի պետական հատկացումներից, կա նաև ոլորտում ներդրումների աճ:

Առանց այս ոլորտում կոնկրետ տեղեկատվության դժվար է մեկնաբանել գոյություն ունեցող ֆինանսավորման մեխանիզմները: Այնուամենայնիվ, մի շարք դիտարկումներ են արվել և բարձրացվել են զարգացման քաղաքականության խնդիրներ.



- Թվում է՝ ֆինանսավորման զգալի պակաս կա, և վերջին տարիներին միայն հնարավոր է եղել իրականացնել մշակութային կազմակերպությունների պահպանումը, ոչ զարգացումը:

- Շուկայական տնտեսության անցումը չի նշանավորվել տնտեսական աննախադեպ աճով և այնպիսի մշակութային քաղաքականությամբ, որը կբավարարեր տնտեսական այսպիսի աճի պահանջներին: Շուկայի և պետության միջև հավասարակշռության պահպանման համար անհրաժեշտ տնտեսական համակարգը բավականաչափ զարգացած չէ: Այս իմաստով առկա է ֆինանսական և կառավարման մոդելների պակաս:

- Կա նոր հայեցակարգ և նոր մոդել մշակելու անհրաժեշտություն: Հարկ է մշակել նոր մոդել մշակույթի/մշակութային ժառանգության թե՛ կառավարման, թե՛ ֆինանսավորման համար, այդ թվում՝ միջազգային դոնորների և ներդրողների, հովանավորության և բարեգործության ներգրավմամբ, ինչպես նաև ձևավորել նոր ազգային մտածելակերպ, ստեղծել կամուրջներ մշակույթի, պետության և բիզնեսի միջև և անցում կատարել պետական ֆինանսավորումից դեպի ֆինանսավորման տարբեր տեսակներ՝ նախատեսելով պետական (կամ համայնքային) ֆինանսավորում, ինչպես նաև ֆինանսավորում համապատասխան գործակալություններից և խորհուրդներից, որոնք կարող են հանդես գալ ֆինանսավորման նախաձեռնություններով:

- Թանգարանների ֆինանսավորման նոր մոդելը կարող է նպաստել թանգարանների կառավարման ժողովրդավարացմանը և խթանել թանգարանների ինքնավարությունը, ինչպես նաև օգնել ստեղծելու հավասար պայմաններ մայրաքաղաքում, մարզերում և տեղական համայնքներում գտնվող թանգարանների համար:

- Հավանաբար ֆինանսավորման նոր մոդել կպահանջվի նաև հասարակական կազմակերպություններին և մշակութային ժառանգության արժեքների մասնավոր սեփականատերերին տրվող սահմանափակ ֆինանսական աջակցության խնդիրը լուծելու համար:

- Կարելի է հիմնավորել այնպիսի կառավարման մարմին ստեղծելու անհրաժեշտությունը, որը կստանձնի մշակութային ժառանգության արժեքների պահպանության, վերականգնման և շահագործման պատասխանատվությունը: Սա կբարելավի ֆինանսավորման մեխանիզմների տրամադրումն ու վարչարարությունը:

- Եվրոպական կողմի տրամադրած խորհրդատվությանը համապատասխան հարկ է հաշվի առնել մշակութային ժառանգության նախագծերի ֆինանսավորման տարբեր աղբյուրները և հանրահոշակման լավագույն փորձը (այդ մասին տեղեկատվությունը հասանելի է եվրոպական տվյալների շտեմարանների միջոցով), մուլտի-ֆինանսավորման սկզբունքը (որը հնարավորություն է տալիս մեծամասշտաբ նախագծերի համար բազմավեկտոր եղանակով օգտվելու ֆինանսավորման տարբեր աղբյուրներից), պետական-մասնավոր գործընկերությունների խրախուսումը, հարկաբյուջետային արտոնությունների և այլ սուբսիդիաների տրամադրումը, հետազոտության և ուսումնասիրությունների համար ֆինանսավորման տրամադրումը, ինչպես նաև փորձնական միջոցները՝ վերլուծելու մշակութային ժառանգության հանրահոշակման գործընթացների ազդեցությունը՝ որպես տնտեսական և սոցիալական զարգացման գործընթացներում մշակութային ժառանգության ունեցած ուղղակի կամ անուղղակի ներդրումը գնահատելու միջոց (տե՛ս Եվրախորհրդարանի 2015թ. բանաձևը):

## 8. Մշակութային ժառանգության մասին օրենքներ

Այս բաժնում քննվում են մշակութային ժառանգությանն առնչվող գործող օրենքները, նորմերը, կարգերը, կանոնադրությունները: Այստեղ տրված հարցը հետևյալն է. «Ի՞նչ գործողություններ են անհրաժեշտ, որպեսզի ուղղվեն կամ վերջնական տեսք ստանան մշակութային ժառանգությանն առնչվող իրավական տեքստերը, և գործեն արդեն ընդունված օրենքներն ու վավերացված կոնվենցիաները»:

Մշակույթի նախարարությունը նշել է մշակութային ժառանգության ոլորտի համար հիմնական իրավական կանոնակարգերը, որոնք կիրարկվում են Հայաստանի

Հանրապետության Սահմանադրության, օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների, գերատեսչական և այլ իրավական ակտերի և միջազգային պայմանագրերի համապատասխան: Դրանց թվում են.

- ՀՀ Սահմանադրությունը, ըստ որի պատմության և մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքները գտնվում են պետության հոգածության և պաշտպանության ներքո:

- «ՀՀ քրեական օրենսգիրքը», որը մշակութային ժառանգության պաշտպանության խախտումների համար պատասխանատվություն սահմանող ինքնուրույն բաժին կամ գլուխ չի պարունակում, սակայն սահմանում է պատասխանատվություն պետության կողմից պահպանվող բնության օբյեկտները կամ պատմության և մշակույթի հուշարձանները վնասելու կամ ոչնչացնելու համար համապատասխան հողվածներ:

- «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը», որը պարունակում է մշակութային արժեքները հետ վերցնելու մասին հողված և կարգավորում է մտավոր սեփականությանը և հեղինակային իրավունքին վերաբերող հարցերը:

- «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենքը սահմանում է ՀՀ մշակութային օրենսդրության ինդիքները, պետական մշակութային քաղաքականության սկզբունքները, պետական մշակութային քաղաքականության նպատակները, մշակույթի, այդ թվում՝ մշակութային ժառանգության պահպանության ոլորտում պետության գործունեությունը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, մշակույթի և մշակութային գործունեության ֆինանսավորումը, մշակութային ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության տեսակները, այս բնագավառում միջազգային համագործակցության հիմնական ուղղությունները:

- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքը (1998թ.) և դրան առնչվող «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման, օգտագործման մասին» և «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տեղափոխման և փոփոխման մասին» կարգերը:

- «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին» ՀՀ օրենքը (2007թ.) և դրան առնչվող «Պետական սեփականություն հանդիսացող և օտարման ոչ ենթակա անշարժ հուշարձանների ցանկը»:

- «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքը (2004թ.):

- «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» ՀՀ օրենքը (2009թ.):

- 2010-2012թթ. ՀՀ կառավարությունը հաստատեց մի շարք իրավական ակտեր, որոնք ապահովում են օրենքի կիրարկումը և պարզաբանում օրենքի պահանջների կատարման ընթացակարգերը: Մասնավորապես՝

- «Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային արժեքների ցանկերի կազմման չափորոշիչները և ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը» - 2010թ. մարտի 11-ի N 310-Ա որոշում,
- «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, պաշտպանության, տարածման և օգտագործման 2011թ. տարեկան ծրագիրը» - 2010թ. հունիսի 29-ի N 1027-Ն որոշում,
- «Ոչ նյութական մշակութային արժեքների նույնականացման, փաստաթղթավորման, պահպանության և տեղեկատվության փոխանակման կարգը և ոչ նյութական մշակութային արժեքի վկայագրի ձևը» - 2010թ. սեպտեմբերի 3-ի N 1173-Ն որոշում,
- «Անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերի կազմման չափորոշիչները և դրանց հիման վրա կազմված ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը» - 2011թ. հունվարի 20-ի N 36-Ն որոշում,

- «Հայաստանի Հանրապետության մշակութային տարածքների ճանաչման չափորոշիչները և մշակութային տարածքների ցանկը» - 2012թ. մարտի 1-ի N 241-Ն որոշում:

Թեև նախարարությունը մանրամասներ է տրամադրել այն խնդիրների վերաբերյալ, որոնք կառավարվում են այս օրենքներով և կանոնակարգերով, լրացուցիչ տեղեկատվություն չի տրամադրվել այն գործողությունների մասին, որոնք անհրաժեշտ են մշակութային ժառանգությանը վերաբերող իրավական տեքստերի թարմացման կամ վերջնականացման, ինչպես նաև գոյություն ունեցող օրենքները և հաստատված կոնվենցիաները կիրարկելու համար:

Այնուամենայնիվ, կարելի է բարձրացնել մի քանի հարցադրում.

- ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «Պետական սեփականություն հանդիսացող և օտարման ոչ ենթակա անշարժ հուշարձանների ցանկը» ներառում է 18935 հուշարձան՝ 6145 պահպանական միավորով: Սա նշանակում է, որ մշակութային ժառանգության պահպանվող հուշարձանների մեծ մասը շարունակում է պետական սեփականություն հանդիսանալ: (Համարվում է, որ կա ընդամենը 24,152 հուշարձան, այսինքն՝ սրա հիման վրա 5,217 հուշարձան պետական սեփականություն չէ): Այնուամենայնիվ, դեռևս հստակ չէ՝ արդյոք մշակութային ժառանգության պահպանվող միավորները կարող են լինել մասնավոր սեփականություն, թե ոչ: Եթե այո, ապա հարկ է այստեղ որպես հնարավորություն դիտարկել սեփականության շրջանակի ընդլայնումը, մասնավորապես, եթե այսպիսի լուծումը կարող է հանգեցնել մշակութային ժառանգության ռեսուրսների ավելի արդյունավետ կառավարման:

- Հայաստանի Հանրապետությունը նաև վավերացրել և ուժի մեջ է մտցրել մշակութային ժառանգության ոլորտում մի շարք եվրոպական կոնվենցիաներ, որոնք ընդունվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո (այդ թվում՝ Համաշխարհային ժառանգության կոնվենցիան (1972թ.), Ոչ կյուրական մշակութային ժառանգության պաշտպանության կոնվենցիան (2003թ.), Մշակութային ինքնասարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին կոնվենցիան (2005թ.)), ինչպես նաև այն կոնվենցիաները, որոնք ընդունվել են Եվրոպայի խորհրդի հովանու ներքո (այդ թվում՝ Ճարտարապետական ժառանգության (Գրանսադա, 1985թ.), Հնագիտական ժառանգության (Վալետտա, 1992թ.) և Լանդշաֆտի (Ֆլորենցիա, 2000թ.) մասին կոնվենցիաները, Մշակութային ժառանգության նշանակությունը հասարակության համար Եվրոպայի խորհրդի շրջանակային կոնվենցիան (Ֆարո, 2005թ.)): Եվրոպայի խորհրդի բոլոր կոնվենցիաները շեշտում են մշակութային ժառանգության կառավարման նկատմամբ **ինտեգրված մոտեցման** անհրաժեշտությունը, իսկ Ֆարոյի կոնվենցիան (որը «ուժի մեջ է մտել» Հայաստանում 2012թ. դեկտեմբերի 1-ին), մասնավորապես վերաբերում է սույն զեկույցում արծարծված խնդիրներին (տե՛ս Մաս 1):

## 9. Մշակութային ժառանգության մասին օրենքների և այլ իրավական տեքստերի ու ռազմավարությունների միջև առկա կապը

Այս թեմայի ներքո քննվում է մշակութային ժառանգության մասին օրենքների և այլ օրենքների միջև կապը՝ անդրադառնալով քաղաքային կամ տարածքային պլանավորմանը, շինարարությանը, բնապահպանությանը, ներդրումներին, հարկմանը, սեփականության իրավունքին, փոխհատուցմանը, տուրիզմին, սեփականազրկմանը, քրեական պատժամիջոցներին, մարդու և մշակութային կյանքին մասնակցելու իրավունքներին, կրթությանը և այլն (մշակութային ժառանգությունը պատմական արժեքի և տնտեսական ու հասարակական ներուժի կտրվածքով): Այստեղ տրվել էր հետևյալ հարցը. «**Ի՞նչ գործողություններ են անհրաժեշտ՝ համակարգման և ինտեգրման գործընթացները կատարելագործելու համար**»:

Այստեղ Մշակույթի նախարարությունը շեշտել է, որ մշակութային ժառանգության պահպանությանը վերաբերող բոլոր իրավական ակտերը բխում են ՀՀ Սահմանադրությունից և ՀՀ կողմի ստորագրված և վավերացված միջազգային, մասնավորապես ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Եվրոպայի խորհրդի կոնվենցիաներից:

Այս համատեքստում վերաբերելի օրենքներն են.

- «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքը (2004 թ.),
- «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքը (հեղինակների իրավունքների առաջացման և օգտագործման հետ կապված հարաբերությունների կարգավորում),
- «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքը. սույն օրենքի կիրարկումը ապահովվում է «Պատկերաստանի ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկի մասին» և «ՀՀ արխիվային հավաքածուի պահպանության ֆինանսավորման կարգի մասին» ՀՀ կառավարության որոշումներով,
- «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին» ՀՀ օրենքը կարգավորում է փաստաթղթերի (վավերագրերի) բոլոր տեսակների մշտական պահպանության, հաշվառման, մատենագիտության կազմման և ազգային ժառանգության հանրային օգտագործման առնչությամբ ծագող իրավական և ֆինանսատնտեսական հարաբերությունները:
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (2006թ.), որով սահմանված են բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների և առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմքերը: Օրենքով սահմանվում է մոտ 30 հասկացություն, այդ թվում՝ ազգային պարկ, բնության օբյեկտ, բնության հատուկ պահպանվող տարածք, բնության հուշարձան, պետական արգելոց, պետական արգելալայր, լանդշաֆտ և այլն: (Ծանոթություն. Նշված է, որ մի շարք հասկացություններ համահունչ են «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի դրույթներին):
- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը (1998թ.) (կանոնակարգում է քաղաքաշինության ոլորտը. քաղաքաշինական փաստաթղթերը բաժանվում են երկու խմբի՝ քաղաքաշինական ծրագրային (կամ տարածական պլանավորման) և ճարտարապետաշինարարական փաստաթղթերի): (Ծանոթություն. Այնուհետ բացատրվում է, որ **բնակավայրերի պատմամշակութային հիմնավորումների, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության գոտիների, բնության հատուկ պահպանվող տարածքների նախագծերը և քաղաքաշինական ծրագրային (կամ տարածական պլանավորման) փաստաթղթերը**, ինչպես նաև **լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն** համակարգերի տարածքային կազմակերպման նախագծերն առնչվում են «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» և «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքների դրույթներին):
- «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով եկամուտների թվին են դասվում գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման, կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից (հեղինակային բովանդակության արտոնված օգտագործումից) ստացված շահույթը:
- «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով մշակութային կազմակերպությունները և պետական սեփականություն հանդիսացող պատմամշակութային հուշարձանները ազատված են գույքահարկից: (Ծանոթություն. Սա բավականին սահմանափակ քայլ է թվում, բայց արդեն իսկ հիշատակվել է, որ մշակութային ժառանգության սեփականության հետ կապված իրավիճակը հստակ չէ. տե՛ս Բաժին 8):  
Մշակութային ժառանգության պահպանության ոլորտին առնչվող դրույթներ են ներառում նաև՝
- «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը,
- «ՀՀ հողային օրենսգիրքը»,



- «ՀՀ ջրային օրենսգիրքը»,
  - «ՀՀ անտառային օրենսգիրքը»,
  - «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը»,
  - «ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը»,
  - «ՀՀ քրեական օրենսգիրքը»,
  - «ՀՀ մաքսային օրենսգիրքը»,
  - «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքը (որը վերաբերում է շարժական մշակութային ժառանգության պահպանության խնդիրներին):
- Նշվել է, որ Ազգային ժողովում քննարկման փուլում է «Թանգարանների և ՀՀ թանգարանային ֆոնդի մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Նաև նշվել է, որ Հայաստանի Հանրապետությունում մշակութային ժառանգության պահպանության և օգտագործման բնագավառում օրենսդրությամբ արգելվում է քաղաքական, գաղափարական, կրոնական, ռասսայական ու ազգային խտրականությունը: Այդ կապակցությամբ հայ ժողովրդի կողմից ստեղծված ժառանգության հետ միասին պետության կողմից պահպանվում են նաև Հայաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների ստեղծած հուշարձանները, իսկ պետական ծրագրերի ու անհատական նախաձեռնությունների միջոցով հնարավորություն է ստեղծվում դրանց պահպանության և վերականգնման համար:

Ավելին, զբոսաշրջության զարգացմանը նպաստող նոր ենթակառուցվածքների ստեղծմանն ուղղված շինարարությունն իրականացվում է միայն հուշարձանների տարածքից, պեղման և պահպանական գոտիներից դուրս, ինչով և ապահովվում է լանդշաֆտի և հուշարձանի պատմական միջավայրի անխաթարությունն ու պահպանումը:

Նշվել է, որ միջազգային առումով ոլորտի զարգացման համար մեծ կարևորություն է ներկայացնում նաև համագործակցությունը **Միացյալ ազգերի կրթության, գիտության և մշակույթի հարցերով կազմակերպության (UNESCO), Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհրդի (ICOMOS), Մշակութային ժառանգության պահպանությանը վերաբերող միջկառավարական կազմակերպության (ICCROM), Թանգարանների միջազգային խորհրդի (ICOM) հետ:**

Թեև մշակութային ժառանգության հետ կապված տարբեր ոլորտների համապատասխան օրենսդրության որոշարկումն անկասկած օգտակար է, նախարարությունը չի նշել, թե արդյոք որևէ գործողություն պահանջվում է բարելավելու տարբեր ոլորտների օրենսդրությունների միջև համակարգման և ինտեգրման այլ ընթացակարգեր: Այլ պատասխանողներ մատնանշել են, որ լրացուցիչ գործողությունների կարիք կա: Այս համատեքստում արվել են հետևյալ մեկնաբանությունները.

- Ոլորտի համակարգման և ինտեգրման գործընթացները կատարելագործելու համար անհրաժեշտ է տարբեր օրենսդրական դրույթների և օրենքների համապատասխանեցում միջազգային չափորոշիչներին: Այնուամենայնիվ, լրացուցիչ գործողություններ են անհրաժեշտ՝ ապահովելու ինտեգրված մոտեցման որդեգրումը, ինչպես նկարագրված է Եվրոպայի խորհրդի կոնվենցիաներում և Եվրամիության վերջերս հրապարակված փաստաթղթերում առաջ քաշվող մոտեցումներում: Դրանք ընդգծում են ինտեգրված մոտեցմանը միտված զարգացումների անհրաժեշտությունը (տե՛ս Մաս 1): Իսկապես, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Առաջարկությունը պատմական քաղաքային լանդշաֆտների վերաբերյալ (2011թ.) միտված է պատմական միջավայրի ավելի լայն գնահատմանն ու կառավարմանը և ոչ թե մշակութային ժառանգության հուշարձանների «պաշտպանությանը» միայն:
- Դիտորդները կարծում են, որ ՀՀ թե՛ պետական և թե՛ ոչ պետական մշակութային ժառանգության հուշարձանների և ռեսուրսների հետ առնչվող կառույցների գործառնական համակարգը չի դրսևորում կառավարման նկատմամբ մասնակցային և ինտեգրված մոտեցում:
- Այս իսկ պատճառով մշակութային ժառանգության պահպանության, վերահսկման և զարգացման, ինչպես նաև հասարակական մտածելակերպ և գործելաոճ (ինքնությունը) ձևավորող կառույցների գործունեության և ստացված արդյունքների փոխկապակցվածության ապահովումը դառնում է դժվարին խնդիր:

## 10. Գույքագրում, փաստաթղթավորում և պլանավորում

Այս թեմայի ներքո բարձրացվել են մի շարք հարցեր, որոնք վերաբերում են գույքացանկերի և այլ մեխանիզմների տեսակներին ու կարգավիճակին՝ մշակութային ժառանգության արժեքներն ու ռեսուրսները (կյուրական և ոչ կյուրական) փաստագրելու և գրանցելու համար, (ներառյալ տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի կիրառումը): Հատուկ ուշադրություն է դարձվել տեղեկատվության գրանցմանը որպես մշակութային ժառանգության հուշարձանների պահպանության, դրանց վիճակի ու խոցելիության գնահատման (օրինակ՝ ինչ վտանգների/ռիսկերի կարող են հանգեցնել չվերանորոգելը, անհամապատասխան աշխատանքները, բնական աղետները, բռնագրավումը, օգտավետ շահագործման պակասը և այլն), առաջնահերթ գործողությունների հատկորոշման գործիք կառավարման այլ համակարգերում, օրինակ՝ կադաստրային գրանցումներում կամ տարածական և հողօգտագործման պլանավորման փաստաթղթերում մշակութային ժառանգության արժեքների ճանաչման գործում, ինչպես նաև հանրությանը տեղեկատվություն տրամադրելու գործիք: Այստեղ տրվել է հետևյալ հարցը. «Որո՞նք են գույքագրման և փաստագրման համակարգերում առկա խնդիրները, և ինչպես կարող են դրանք լուծվել (նաև հմտությունների զարգացման, տվյալների մշակման, թվայնացման, հանրությանը և շահառուներին տրամադրվելու առումով), և ի՞նչ գործողություններ է անհրաժեշտ ձեռնարկել արդեն գոյություն ունեցող համակարգերը կատարելագործելու համար»:

Մշակույթի նախարարությունը որոշարկել է լայնածավալ գույքագրման և փաստաթղթավորման համակարգ, որը պարբերաբար թարմացվում է և բաղկացած է հետևյալից.

- Անշարժ հուշարձանների համար.

**Հուշարձանի վկայագիրը** այն փաստաթուղթն է, որը վերաբերում է պատմամշակութային արժեք ունեցող անշարժ օբյեկտին վերաբերող հաշվառման փաստաթղթավորմանը՝ նկարագրական, տեղագրական, բնութագրական տվյալների, տեղագրական հիմքի վրա օբյեկտի տեղի մատնանշմամբ և լուսանկարչական տեղեկատվությամբ: Նշվում է, որ գրանցման մեթոդաբանությունը համապատասխանում է միջազգային չափորոշիչներին: Հուշարձանների ցուցանակները, վկայագրերը և պահպանության գոտիների տեղեկանքները պահվում են **Հուշարձանների կադաստրում**. այն Հայաստանի Հանրապետության պետական կադաստրային համակարգի բաղկացուցիչ մասն է, որի հիմքն էլ անշարժ գույքի պետական կադաստրն է: Առկա տեղեկատվությունը *թարմացվում է հինգ տարին մեկ անգամ*: (Հուշարձանների կադաստրի հիմնական խնդիրներն են՝ հուշարձանների պետական հաշվառման նոր վկայագրերում անհամեմատ ընդլայնել հուշարձանի նկարագրման, բնութագրման, արժևորման, դասակարգման և իրավական կարգավիճակի որոշման չափանիշները, հանրապետության վարչատարածքային կառուցվածքի փոփոխությունները և բնակավայրերի վերանվանումները, նոր հետազոտությունների արդյունքների ընդգրկման և հուշարձանի (անշարժ գույքի) պահպանվածության վիճակի, սեփականության և օգտագործման ձևերի փոփոխությունների ամրագրման անհրաժեշտությունը, նոր՝ ճշգրտված և համալրված տեղեկատվական կոդավորման և ընդհանուր համակարգման անհրաժեշտությունը):

Միասնական տարածք զբաղեցնող հուշարձանախմբի, համալիրի կամ համակառույցի համար կազմվում է մեկ ընդհանուր վկայագիր, որին ենթահամարակալմամբ կցվում են դրա՝ պատմամշակութային ինքնուրույն արժեք ներկայացնող տարրերի առանձին վկայագրերը:

Հնագիտական հուշարձանների դեպքում, վերգետնյա հետազոտություններից բացի, անհրաժեշտության դեպքում սահմանված կարգով կատարվում են նաև փորրածավալ հետախուզական պեղումներ:

Հուշարձանի վկայագիրը նաև կիրառվում է՝ *արձանագրելու հուշարձանի պահպանվածության վիճակը վկայագրի կազմման պահին, ինչպես նաև տեղեկություն տրամադրելու հուշարձանի վիճակի գնահատման վերաբերյալ*:

Հուշարձանների պետական հաշվառման փաստաթղթերում նշված տվյալները պարբերաբար (առավելագույնը՝ յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ) ճշգրտվում և լրանշակվում են՝ ըստ նոր հայտնաբերումների, հետազոտությունների, *պահպանության վիճակի և կարգավիճակի փոփոխման մասին տվյալների*: Նոր տվյալները վկայագրերում գրանցվում են առանձին ներդիրների վրա:

**Ըստ ՀՀ օրենքի՝ հուշարձանների պետական ցուցակները** հիմնական փաստաթուղթ և իրավական հիմք են՝ հուշարձանը պետության կողմից պահպանության վերցնելու համար:

Գոյություն ունի նաև Հայաստանի Հանրապետության հուշարձանների **Գիտատեղեկատու շտեմարան, հուշարձանների համահավաք**, որը կազմում և հրատարակում է Հայկական հուշարձանների համահավաք (դիվան) բազմահատորյակը (այդ թվում՝ արխիվային նյութերի ներառմամբ): Այն հանրագիտական բնույթի բազմահատոր հրատարակություն է, որտեղ, համաձայն արդի պետական և վարչատարածքային բաժանման սահմանների, ներկայացվում են Հայաստանի Հանրապետության, պատմական Հայաստանի և հայկական գաղթօջախների պատմամշակութային անշարժ հուշարձանները:

Տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվությունն ամփոփվում և, ըստ հրատարակության աստիճանի, նոր նախաձեռնությունների տեսքով՝ ընդգրկվում է ՀՀ մշակույթի նախարարության Միջնաժամկետ ծախսային ծրագրերի հայտում: Իսկ անհապաղ միջամտության պարագայում միջոցառումներ են իրականացվում ծագած խնդիրները լուծելու ուղղությամբ:

Հուշարձանների գույքագրման արդյունքում ստեղծված փաստավավերագրական նյութերը և հավաքված տեղեկատվությունը կարևոր ելակետային հիմքեր են պատմական քաղաքների մանրամասն հատակագծման, կառուցապատման և պատմամշակութային հիմնավորման նախագծերի կազմման համար:

Ընդհանուր առմամբ Մշակույթի նախարարությունը նշել է, որ *նվազագույնի է հասցվում մշակութային ժառանգության խոցելիության աստիճանը, կանխվում է հավանական վնասը՝ հուշարձանների գույքագրման համակարգի շտրիխով, քանի որ արձանագրվում են նաև այն իրավիճակները, որոնք կարող են վտանգել հուշարձանի պահպանվածությունը*:

- Ոչ նյութական մշակութային ժառանգության համար.

Գույքագրման արդյունքում ստեղծվել են ՀՀ կառավարության կողմից հաստատված **ոչ նյութական մշակութային ժառանգության 3 պետական ցանկեր**, որոնք ենթակա են պարբերական համալրման: Ցանկերը կազմված են համաձայն ՀՀ կառավարության հաստատած չափորոշիչների՝ ըստ տարրի կենսունակ լինելու, անհապաղ պաշտպանության կարիք ունենալու և մշակութային տարածքների գույքագրման սկզբունքի:

ՀՀ-ում կենսունակ ոչ նյութական մշակութային ժառանգության տարրերը գրանցվում են «ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության տարրերի» ցանկում, որի կազմման չափորոշիչներն են՝

1) արժեքի կամ արժեքների համալիրի ոչ նյութական մշակույթի նշված բնագավառներին պատկանելը (օրինակ՝ ժողովրդական բանահյուսություն, ներառյալ լեզուն և բանավոր ավանդության բոլոր ձևերը և տեսակները, ժողովրդական երաժշտարվեստ, պարարվեստ, թատերախաղեր, ազգային հավատալիքներ ու սովորույթներ, ժողովրդական կենցաղ, ազգային խոհանոց, ազգային խաղեր, ավանդական արհեստներ և հմտություններ, բնության վերաբերյալ պատկերացումներ և այլն), 2) ազգային ինքնության, հոգեկերտվածքի, աշխարհայացքի ձևավորման բաղկացուցիչ լինելը, 3) ազգային պատմության, տոհմի ծագման հետ կապված հիշողության, երևույթների, դեպքերի, գործընթացների խորհրդանշական կամ այլ դրսևորում լինելը, 4) ազգային ավանդական մշակույթի եզակի դրսևորում լինելը, 5) ազգային և համամարդկային մշակութային, պատմական, կրոնական կամ գիտական նշանակություն ունենալը, 6) ոչ նյութական մշակույթի որևէ բնագավառի գիտելիքների և հմտությունների կրող լինելը:

Ցանկում ընդգրկելու նախապայման է ոչ նյութական մշակութային արժեքի՝ կենդանի և կենսունակ միավոր լինելը:

Ցանկը կազմվում է աղյուսակի ձևաչափով, որում յուրաքանչյուր տարրի համար լրացվում են հետևյալ տեղեկությունները՝ արժեքի ընդունված գիտական անվանումը, ինչպես նաև ժողովրդի կողմից առավել գործածվող տարբերակները, բնագավառը (ժանրը, ոճը), տեղայնացումը, տարածման շրջանը, կրողը, պատմական հակիրճ տեղեկանքը (երբ և ինչպես է ձևավորվել, առաջին վկայությունն աղբյուրներում), կենսունակությունը (նախնական գործառույթները, պատմական, մշակութային, տնտեսական, հասարակական նշանակության պահպանվածությունը, զարգացումներն ու փոփոխությունները) և բնութագիրը (եզակիությունը, պատմական, էթնոմշակութային, սոցիալական և այլ առանձնահատկություն):

Ներկայում այս ցանկում ընդգրկված է 19 տարր, և Մշակույթի նախարարությունը նշել է, որ «*Անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների*» ցանկում ներառված են 7 տարրեր, որոնց ընտրության համար հաստատված են հետևյալ չափանիշները՝

- արժեքը կենցաղավարում է կորուստներով,
- կենցաղավարում է մի խումբ մարդկանց շրջանում (համերկրացիներ, ազգականներ),
- պահպանված է միայն որոշակի խմբերի հիշողության մեջ,
- խաթարված է ժառանգական փոխանցումը,
- հիշատակվում է բանահյուսական տեքստերում,
- մոռացված է, սակայն վերականգնումն ազգային ինքնության պահպանության տեսանկյունից կարևորվում է:

Անհապաղ պաշտպանության կարիք ունեցող տարրի համար ցանկում լրացվում են հետևյալ տեղեկությունները՝

- տարրի անվանումը,
- բնագավառը (ժանրը, ոճը),
- բնութագիրը (նկարագրությունը),
- պատմական տեղեկանքը (երբ և ինչպես է ձևավորվել, զարգացումներն ու փոփոխությունները),
- կրողը (անհատ, խումբ, համայնք),
- կորստի վտանգի պատճառները և պահպանման անհրաժեշտությունը:

«**ՀՀ մշակութային տարածքների**» ցանկում ընդգրկված են 2 տարածքներ: Ցանկի կազմման չափորոշիչներն են՝

- տարածքում կրողները ավանդաբար ստեղծում են ոչ նյութական մշակութային արժեքներ,
- տարածքն ավանդական բնօգտագործման վառ օրինակ է,
- տարածքում առկա են պատմության, մշակույթի և բնության հուշարձաններ, որոնք պատմականորեն ձևավորված ժողովրդական ընկալումների արդյունքում ձեռք են բերել հոգևոր, ծիսական և պաշտամունքային նշանակություն,
- տարածքը հանդիսանում է պատմության, մշակույթի և բնության հուշարձանների բացառիկ միաձուլում, ինչի արդյունքում ձեռք է բերել գիտական, մշակութային, զբոսաշրջային նշանակություն:

ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերի համալրումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբերի 3-ի N 1173-Ն որոշմամբ հաստատված «**Ոչ նյութական մշակութային արժեքների նույնականացման, փաստաթղթավորման, պահպանության և տեղեկատվության փոխանակման կարգի**» համաձայն: Կարգը սահմանում է, որ պետական լիազոր մարմինը ոչ նյութական մշակութային տարրերի հայտնաբերման, հաշվառման և ուսումնասիրման, ինչպես նաև ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության և անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային տարրերի պետական ցանկերի տվյալների արդիականացման, ճշգրտման, լրանման նպատակով պարբերաբար կազմակերպում է երթուղային գիտարշավներ՝ համակարգված կերպով ընդգրկելով ՀՀ բոլոր մարզերի ու բնակավայրերի տարածքները:



Արշավախմբի կազմում ընդգրկվում են անհրաժեշտ բնագավառների մասնագետներ՝ ազգագրագետներ, բանագետներ, երաժշտագետներ, պարագետներ, ժողովրդական արհեստագործության և ժողովրդական ստեղծագործության մասնագետներ, լուսանկարիչներ, նկարահանող օպերատորներ, ովքեր ուսումնասիրել (ուսումնասիրում) և համակարգում են տվյալ տարածաշրջանի ոչ նյութական մշակութային ժառանգության վերաբերյալ մատենագրական, արխիվային, տեղեկատվական, ուղեգրական, գիտահետազոտական և վավերագրական նյութեր: *Արձանագրվում են ինչպես պահպանված, այնպես էլ կորսված բաղադրատարրերը, գրանցվում է գիտարշավի պահին առկա իրավիճակը:* Գրանցված նյութերը, ՀՀ կառավարության հաստատած չափորոշիչներին համապատասխան, ներկայացվում են պետական լիազոր մարմին՝ պետական ցանկում համալրում կատարելու նպատակով: Պետական ցանկերում ընդգրկված տարրերի մասին տվյալները պարբերաբար (յուրաքանչյուր 2 տարին մեկ անգամ) ճշգրտվում և լրամշակվում են՝ ըստ նոր բացահայտումների, հետազոտությունների, պահպանության վիճակի և կարգավիճակի փոփոխման մասին տվյալների: Պետական ցանկերում նոր տարր ընդգրկելու կամ նշված ցանկերից տարր հանելու վերաբերյալ առաջարկություն կարող են ներկայացնել նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, գիտական հաստատությունները, կրոնական ու մշակութային կազմակերպությունները, ստեղծագործական միությունները և ոչ նյութական մշակութային ժառանգության կրողները՝ համապատասխան հիմնավորմամբ դիմելով պետական լիազոր մարմին:

Մշակույթի նախարարության կողմից ներկայացված գույքագրման համակարգն անկասկած համակողմանի է: Այս համատեքստում բարձրացվում են մի շարք հարցեր, մասնավորապես այնպիսիք, որոնք մասամբ բխում են այլ պատասխանողների դիտարկումներից.

- Թեև նշվում է, որ գրանցման համակարգերը բավարարում են միջազգային չափորոշիչներին, Եվրոպայի խորհրդի առանցքային տվյալների համաթվին, նման որևէ չափորոշիչ չի հիշատակվում:
- Մշակույթի նախարարության պատասխանում ոչ մի հղում չկա այն մասին, թե արդյոք գրանցման համակարգերը թվայնացված են, թե՞ ոչ, և կա արդյոք փաստաթղթավորման համակարգերին բաց հասանելիություն տարբեր շահագրգիռ կողմերի համար: Այնուամենայնիվ, դիտորդներից մի քանի մեկնաբանություն է ստացվել, որոնք հուշում են, որ թվայնացում չկա, կամ եթե կա, ապա միայն մասամբ: Հիշատակվել է Հայկական հուշարձանների ճանաչման ծրագիրը (AMAP)<sup>22</sup>, որը մշակում է տեղեկատվական գործիք, սակայն սա պետական փաստաթղթավորման համակարգը չէ: Այնուհետ, հիշատակվել է Գյումրիի պատմական հուշարձանների և վայրերի տվյալների թվային շտեմարանը, որը 2003 թվականին ստեղծվել է «Քաղաքային ուսումնասիրությունների կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից<sup>23</sup>: Վերոնշյալ համակարգերի վերաբերմամբ հասկոթողված թերություններից մեկն այն է, որ դրանք լավ ինտեգրված չեն այլ տեղեկատվական համակարգերի: Բացի կառավարման ընթացակարգերի բարելավումից, պետական փաստաթղթավորման համակարգերի թվայնացումը և դրանց առցանց հասանելիությունը կօգնեն մշակութային ժառանգության նկատմամբ ստեղծել «ընդհանուր պատասխանատվության» դաշտ և կաջակցեն մշակութային ժառանգության ոլորտում տարբեր մարմինների ներգրավմանը (տե՛ս Մաս 1):
- Փաստաթղթավորման համակարգի կարողությունը՝ *արձանագրել հուշարձանի պահպանվածության վիճակը վկայագրի կազմման պահին, ինչպես նաև տեղեկություն տրամադրել հուշարձանի վիճակի գնահատման վերաբերյալ*, օգտակար է, սակայն այս արձանագրություններն ըստ պահպանության վիճակի և կարգավիճակի փոփոխման տվյալների ճշգրտելու համար նախատեսված ժամանակը (որը կարող է ձգվել մինչև հինգ տարի) չափից շատ է թվում: Հավանաբար օգտակար կլինի դիտարկել ամենամյա մեխանիզմներ՝ որոշելու այն հուշարձանները, որոնք վտանգված են, որպեսզի սահմանափակ ռեսուրսներն ուղղորդվեն դեպի տարե-

<sup>22</sup> <http://www.armenianheritage.org/en/>

<sup>23</sup> [www.aleksandrapol.net](http://www.aleksandrapol.net)



# Նորատուսի հայկական խաչքարեր

(պատկերի սկզբնաղբյուր)





կան բյուջեներ և խրախուսեն կանխարգելիչ գործողությունները: Սեփականության մասին արձանագրության պահպանումն օգտակար է, եթե կարիք կա պատասխանատվության ենթարկելու մասնավոր սեփականատերերին: Օգտակար կլինեն հիմնել «Վտանգված մշակութային ժառանգություն» թվային ռեեստր՝ կենտրոնացնելու ուշադրությունը գործողությունների կարիք ունեցող հուշարձանների վրա, այդ թվում՝ հավանական ներդրողներ ներգրավելու նպատակով: Գյումրիում մշակված համակարգն օգտակար մեկնակետ է այս առումով, քանի որ այն տրամադրում է վիճակի (տարբեր մակարդակներում), սեփականության և զբաղվածության/օգտագործման մասին մանրամասներ: Նմանատիպ համակարգեր կարող են ձեռք բերվել Պատմական քաղաքների վերականգնման Կինի նախաձեռնությունից (Նախքան COMUS ծրագիրը), բայց տեղեկատվությունը հարկ կլինի համակարգել և ինտեգրել մեկ թվային համակարգում:

- Զգալի ուշադրություն է պետք դարձնել ոչ նյութական ժառանգության փաստաթղթավորմանը: Թվում է, որ կա տեղեկատվության թարմացման ավելի կանոնավոր համակարգ, հատկապես անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների դեպքում: Թեև այս գործելակերպը դրական է. ապահովելով ոչ նյութական ժառանգության առավել կորստից պաշտպանումը՝ հարկ է կիրառել հավասարակշռված մոտեցում թե՛ անշարժ, թե՛ ոչ նյութական ժառանգության փաստաթղթավորման գործընթացների վերանայման նկատմամբ:
- Նյութական մշակութային ժառանգության շարժական միավորների գույքագրման համակարգը չի նկարագրվել: Այդ իսկ պատճառով անհնար է անդրադառնալ այս խնդրին վերլուծության այս բաժնում:

## 11. Անշարժ մշակութային ժառանգության պահպանում

Այս թեման կենտրոնանում է մշակութային ժառանգության անշարժ հուշարձանների պահպանման, Հայաստանի մշակութային ժառանգության անշարժ հուշարձանների մասին իրազեկության մակարդակի բարձրացման աշխատանքների և գործողությունների վերահսկողության հիմնական ձևերի վրա: Այստեղ տրվել է հետևյալ հարցը. «Ի՞նչ խնդիրներ են առաջանում հատուկ պաշտպանության կարիք ունեցող մշակութային ժառանգության արժեքները և ռեսուրսները որոշելիս ու դասակարգելիս, ինչպես նաև պաշտպանությանը ուղղված գործողություններ կիրառելիս, ինչպե՞ս է հնարավոր լուծել այդ խնդիրները: Ի՞նչ գործողությունների է անհրաժեշտ դիմել անշարժ ժառանգության ռեսուրսների վերականգնումը և հանրության օգտին շահագործումը խրախուսելու համար»:

Մշակույթի նախարարությունը փաստել է, որ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության ու օգտագործման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ **հուշարձանները ըստ բնույթի դասակարգվում են հետևյալ տեսակների.**

- հնագիտական,
- պատմական,
- քաղաքաշինական և ճարտարապետական,
- մոնումենտալ արվեստի:

Բացի այդ, նոր հայտնաբերված հնագիտական, պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող օբյեկտները ևս դասակարգվում են ըստ տեսակների և (փորձագիտական եզրակացության հիման վրա) ներկայացվում են անշարժ հուշարձանների պետական ցուցակներում ընդգրկվելու համար:

Պատմական, գիտական, գեղարվեստական, ազգագրական, ճարտարապետական ու քաղաքաշինական հատուկ արժեք են ներկայացնում **պատմամշակութային արգելոցները՝** իրենց շրջակա բնապատմական միջավայրով հանդերձ: Դրանք ստեղծվում են հուշարձաններ ունեցող բնակավայրերի, դրանց հատվածների՝ պատմական կենտրոնների, թաղամասերի, փողոցների, բնական և պատմականորեն ձևավորված արհեստական լանդշաֆտների և պատմական միջավայրերի պահպանության նպատակով:

Ներկայում Հայաստանի Հանրապետությունում գործում են 9 պատմամշակութային արգելոցներ, և ևս 2-ի ստեղծումը դեռ քննարկման ընթացքում է:

**Ըստ արժեքայնության՝ հուշարձանները դասակարգվում են երկու խմբի՝** հանրապետական և տեղական նշանակության: Ըստ կերպարի պահպանվածության աստիճանի՝ առանձնանում են նախնական (կամ պատմականորեն ձևավորված) կերպարը ամբողջական պահպանած հուշարձաններ և կերպարը մասնակի կորցրած հուշարձաններ, իսկ նախնական կերպարը մասնակի կորցրած հուշարձաններն էլ իրենց հերթին բաժանվում են երկու խմբերի՝ հուշարձաններ, որոնց նախնական կերպարը կարելի է վերականգնել փաստագրական նյութերի գիտական վերլուծական հիմնավորմամբ, և հուշարձաններ, որոնց նախնական կերպարը հնարավոր չէ վերականգնել փաստագրական անհրաժեշտ նյութերի բացակայության պատճառով:

Մշակութի նախարարությունը փաստել է, որ պատմամշակութային հուշարձանների պահպանությունը, ըստ բնույթի, իրականացնում է Կառավարությունը՝ ի դեմս պետական լիազոր մարմնի (հանրապետական նշանակության հուշարձաններ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկերում ընդգրկված հուշարձաններ) և տեղական ինքնակառավարման մարմինների (տեղական նշանակության հուշարձաններ), հուշարձանների սեփականատերերի կողմից: Այնուամենայնիվ, սրանից բացի, չի տրվել հավելյալ բացատրություն աշխատանքների վերահսկողության, Հայաստանում մշակութային ժառանգության անշարժ հուշարձանների մասին իրազեկության բարձրացման գործողությունների մասին, ինչպես նաև այն գործողությունների վերաբերմամբ, որոնք կարող են ձեռնարկվել՝ խրախուսելու վերականգնումն ու մշակութային ժառանգության անշարժ հուշարձանների՝ ի նպաստ հասարակության օգտագործումը: Սա մի փոքր զարմացնող է, եթե հաշվի առնենք Հայաստանի Հանրապետության ներգրավումը Եվրոպայի խորհրդի/Եվրահանձնաժողովի համատեղ «Պատմական քաղաքների վերականգնման» Կիևի նախաձեռնության շրջանակներում, սպա դրան հաջորդած ու ընթացիկ COMUS ծրագրում<sup>24</sup> (2015թ. հունվարից մինչև 2017թ. հունիս): Այդ իսկ պատճառով սույն զեկույցի Բաժին 11-ին վերաբերող խնդիրների վերլուծությունը սահմանափակվում է հետևյալ մեկնաբանություններով և դիտարկումներով.

- Մանրակրկիտ և կոնկրետ կարիքներին համապատասխանեցված ծրագիրը կարող է խրախուսել մշակութային ժառանգության անշարժ հուշարձանների վերականգնումը և ի նպաստ հասարակության շահագործումը, այդ թվում՝ փոքրամասշտաբ ֆոնդերի օգտագործումը հաջողված և ազդեցիկ նախագծեր մեկնարկելու համար:
- Ինչ վերաբերում է ընդհանուր առմամբ COMUS ծրագրին (որը ներառում է Հայաստանում Գյումրի և Գորիս քաղաքները, ինչպես և Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի մի շարք քաղաքներ), «Վերականգնման» ծրագրերից քաղված դասերը ներառում են գործընկերների մոբիլիզացում և պետական-մասնավոր գործընկերության ձևաչափում համագործակցություն, ֆինանսավորման ենթակա ծրագրեր, վերականգնման աշխատանքների համար ֆինանսավորման հայտադիմումներ, միջոցների և ռեսուրսների արդյունավետությանն ուղղված սիներգիաների ստեղծում, բնակիչների շրջանում վստահության ձևավորում, քաղաքային մասշտաբով տեղական դիմամիկայի խթանում, համայնքային պլանավորումից քաղված դասերի վերլուծություն և ինտեգրված համակարգերի մշակման խրախուսում: Գործողությունների այս համակազմը հարկ է տարածել Հայաստանի այլ քաղաքների վրա: Առաջին հերթին այս գործողությունները կարող են կենտրոնանալ այն քաղաքների ու համայնքների վրա, որտեղ նախապատրաստական աշխատանքները սկսվել էին Կիևի նախաձեռնության շրջանակներում 2010-2012թթ. (դրանք են Ալավերդի, Աշտարակ, Դիլիջան, Գնիշիկ և Եղեգիս, Մեղրի, Օշական և Վաղարշապատ համայնքները):

24 Տե՛ս <http://www.coe.int/en/web/culture-and-heritage/comus-urban-strategies>



## 12. Շարժական ժառանգություն. թանգարաններ, արխիվներ և գրադարաններ

Այս հատվածը կենտրոնանում է թանգարանների համակարգի կառուցվածքի և այլ հաստատությունների վրա, այդ թվում՝ այն խնդիրների, որոնք առնչվում են համայնքների հետ կայուն հարաբերությունների զարգացմանը, սոցիալական և կրթական օգուտներին, մշակութային զբոսաշրջության համար մեկնաբանությունների ռեսուրսների տրամադրմանը, տեսալսողական, բազմամիջավայրային, եռաչափ, վիրտուալ իրականության ցուցադրություններին, ինտերակտիվ փորձին և եկամուտի ստացմանը: Այստեղ տրված հարցն էր. «Ի՞նչ գործողությունների է անհրաժեշտ դիմել՝ թանգարանները, ինչպես նաև շարժական ժառանգության ոլորտի այլ կառույցները կատարելագործելու և հասարակությանը օգուտ տալու նպատակով»:

Մշակույթի նախարարությունը նշել է հետևյալը.

### - Թանգարանների վերաբերյալ

Ներկայում ՀՀ-ում գործում է թվով 119 թանգարան, որից 51-ը գործում է ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ (ներառյալ «Ցուցահանդեսային կենտրոն» ՊՈԱԿ-ը, մասնաճյուղերը և արգելոց-թանգարանները): Մյուս թանգարանների սեփականության կարգավիճակը հստակեցված չէ:

Անշարժ հուշարձանների, գրադարանների, ոչ նյութական մշակութային ժառանգության բնագավառի իրավապայմանագրային հարաբերությունները օրենսդրորեն կարգավորված են, սակայն այլ է իրավիճակը թանգարանների և ՀՀ թանգարանային ֆոնդի ոլորտում: Դեռևս իրավական կարգավորում չեն ստացել մշակութային ժառանգության մաս կազմող թանգարանների գործունեությունն ու Հայաստանի Հանրապետության թանգարանային ֆոնդին վերաբերող հարցերը: Այնուամենայնիվ, «Թանգարանների և ՀՀ թանգարանային ֆոնդի մասին» ՀՀ օրենքի նախագիծը արդեն իսկ մշակվել է ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի կողմից և ներկայում գտնվում է ՀՀ Ազգային ժողովում:

«Թանգարանների և Հայաստանի Հանրապետության թանգարանային ֆոնդի մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո կկարգավորվեն թանգարանների ստեղծման, գործունեության, գործունեության դադարեցման և հավատարմագրման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև կտրվեն հստակ սահմանումներ թանգարանների տեսակներին, գործառույթներին: Հայաստանի Հանրապետության համար կապահովվեն թանգարանային ֆոնդի ձևավորման, համալրման, հաշվառման, պահպանության և անվտանգության օրենսդրական հիմքերը:

Ներկայում ՀՀ մշակույթի նախարարության համակարգի թանգարանների գործունեությունը կարգավորվում է ՀՀ մշակույթի նախարարի հրամանով հաստատված իրավական ակտերով (ոչ Ազգային ժողովի մակարդակում): Դրանք վերաբերում են թանգարանների ֆոնդերից օգտվելու, ֆոնդերի պահպանման, թանգարանային առարկաների ժամանակավոր պահպանության և ժամանակավոր արտահանման թույլտվության տրամադրման կարգերին և այլն:

Մշակույթի նախարարության կողմից հիշատակվել է, որ նախարարությունը շարունակում է մշակութային ծառայությունների ոլորտում էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի գործարկումը, սակայն այս աշխատանքի ծավալները չեն մասնավորեցվել: Մշակույթի նախարարությունն ակնկալում է, որ դրանց կիրարկումը կնպաստի թանգարանների, թանգարանային ցուցադրությունների, մեկ միասնական տոմսային տնտեսության մշակմանը և այլն:

### - Գրադարանների վերաբերյալ

Հայաստանի Հանրապետությունում կա 915 համայնքային գրադարան, սակայն ներկայում գործում է 621-ը: ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ գործում է թվով 12 գրադարան՝ 2 ազգային և 10 մարզային: Նշվել է, որ գրադարանների

կառուցվածքային հիմնական բովանդակության բաշխվածությունը միտված է մի շարք խնդիրների բարելավմանը, որոնք հիմնականում իրացվում են 2012թ. ընդունված «Գրադարանների և գրադարանային գործի մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի ներքո:

Այդ օրենքից բխող, կառավարության կողմից ընդունված կարգերն ու որոշումները նպաստեցին գրադարանային ոլորտում հիմնական գործառույթների բարելավմանը: Օրինակ՝ գրադարանային հավաքածուների համալրման, պահպանության, ուսումնասիրման, հանրահռչակման, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ մշակութային ժառանգության թվայնացման, տեղեկատվական շտեմարանների և միացյալ ավտոմատացված համակարգերի շարունակական զարգացման, համալրման անընդհատության ու օգտագործման մատչելիության ապահովման, տպագիր կյուրերի, ազգային անձեռնմխելի ֆոնդերի վերաբերյալ մատենագիտության, վիճակագրական տվյալների, տեղեկատվական ցանկերի կազմման ու հրատարակման, գրքափոխանակության, ինչպես նաև հանրությանը մատուցվող ծառայությունների տեղեկատվական, մշակութային սպասարկման որակի բարձրացմանը:

Լրացուցիչ աշխատանքներ են իրականացվել կամ ընթացքի մեջ են: Օրինակ՝ համայնքային գրադարանների հետ կայուն հարաբերություններ ստեղծելու նպատակով իրականացվել են մի շարք ծրագրեր՝ համայնքային գրադարանների հավատարմագրում, գրադարանավարների վերապատրաստում, Հայաստանյան համահավաք էլեկտրոնային գրացուցակի կազմումը, տեղեկատու շտեմարանների ստեղծումը: «Հայ գիրք»-ն այն հարթակն է, որում միավորվել է Հայաստանի գրադարանների համահավաք էլեկտրոնային գրացուցակը 22 գրադարանների մասնակցությամբ, այդ թվում՝ նախարարության համակարգի 13 գրադարան: Այստեղ կարելի է նշել նաև Հայագիտական հետազոտությունների գիտատեղեկատվական հանգույցը, «Հայ մամուլի համահավաք գրացուցակը»:

Ձեռքբերումներ կան նաև **թվայնացման** ուղղությամբ: Հայաստանի ազգային գրադարանում գրականության թվայնացման կենտրոնի կողմից շարունակվում է թվայնացման գործընթացը. թվայնացվել է 422.398 էջ: Առ այսօր թվայնացվել է 3,598,282 թվանշացված էջ, որից՝ 2.068.802 պարբերականի և 1.529.480 գրքի էջ:

Մի շարք **միջոցառումներ**, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության գրադարաններում գրքի շուրջ համախմբումը հատկապես ակտիվ է եղել Պոեզիայի համաշխարհային օրը, Գիրք նվիրելու օրը, Մանկապատանեկան գրքի միջազգային օրը, Գրադարանավարի օրը և այլն: Տասնյակ շնորհանդեսներ են կազմակերպվել մարզի գրողների գրքերի լույսընծայման կապակցությամբ: Գրադարանավարի օրվա (հոկտեմբերի 7) կապակցությամբ իրականացվել է «Դարձիր գրադարանի բարեկամ» ծրագիրը: Ծրագրին միացած 155 գրադարանում իրականացել է 351 միջոցառում՝ վերջին 25 տարում հրատարակված գրքերի ցուցադրություններ, շնորհանդեսներ, հանդիպումներ մարզերի, համայնքների ստեղծագործող հեղինակների հետ: Այս տարի ծրագրին միացել են նաև ԼՂՀ հանրապետական և քաղաքային ութ գրադարաններ:

Պատասխանում նշվել է, որ գրադարանային գործի առաջընթացն ապահովելու, ժամանակակից մարտահրավերների պայմաններում գրադարանների աշխատանքն առավել արդյունավետ դարձնելու նպատակով խիստ կարևորվում է միջազգային համագործակցության անհրաժեշտությունը, աշխարհասփյուռ հայ տպագիր ժառանգության անխաթար պահպանության և այն գալիք սերունդներին հանձնելու շուրջ համատեղ որոշումներ կայացնելը:

Մատենագիտական շտեմարանների ձևավորման և գրադարանային հավաքածուների թվայնացման ուղղությամբ կատարվել են նշանակալի աշխատանքներ, այդ թվում՝ համայնքային գրադարանավարների համար վերապատրաստման դասընթացներ (2012թ. ի վեր), որոնց նպատակն է գրադարանավարներին ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին ծանոթացնելը, գրադարանային համակարգ ներդրված էլեկտրոնային եղանակներին լավատեղյակ դարձնելը:

2013 թվականից սահմանված կարգով իրականացվում է **համայնքային գրադարանների հավատարմագրման** գործընթացը և «Հանրային գրադարանների նյութատեխնիկական բազայի զարգացման ծրագրով» հավատարմագրված համայնքային գրադարանների վերազինումը ինտերնետ կապով, մասնագիտացված կահույքով և տեխնիկայով, ինչպես նաև համալրումը նոր գրականությամբ:

Ինչ վերաբերում է տեսալսողական, բազմամիջավայրային, եռաչափ, վիրտուալ իրականության ցուցադրությունների մշակմանն ու օգտագործմանը, ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության գրադարանները ապահովված են տեսալսողական (CD, DVD) նյութերով: Տարեկան սպասարկվում է 100 հազարից ավելի միավոր: Հասարակության խոցելի խմբերի համար իրականացվում են կույր և թույլ տեսողների համար «Արև» և «Ընտանեկան գրադարանավար» ծրագրերը: Նախարարությունը հատկորոշել է գրադարանները նոր ինտելեկտուալ զբաղմունքի միջավայրի վերամոդելավորելու անհրաժեշտությունը՝ նոր ծառայությունների մատուցման միջոցով գրադարանները դարձնելու մտավոր ստեղծագործական զարգացման կենտրոններ, հանրության համար առավել հետաքրքրական վայրեր, ձևավորելու նոր ինտելեկտուալ զբաղմունքի միջավայր: Այս իմաստով ցանկություն կա ստեղծելու գրադարանային նոր միջավայր՝ ակտիվացնելով համագործակցությունը մասնավոր կազմակերպությունների (թեև պարզ չէ՝ ինչ դերակատարությամբ), գրողների, ստեղծագործական միությունների հետ, գրադարաններն ապահովելու անվճար ինտերնետ կապով և տեխնիկական հագեցվածությամբ:

Մշակույթի նախարարության պատասխանից, ինչպես նաև շահագրգիռ կողմերից ստացված դիտարկումներից բխում են մի շարք հարցադրումներ.

- Կարելի է դիտարկել Գրադարանային և թանգարանային ոլորտների կողմից հանրահռչակվող միջազգային գրադարանային փառատոների կազմակերպման հնարավորությունը, հատկապես կենտրոնից հեռու գտնվող վայրերում, օրինակ՝ հիմնական պատմական քաղաքներում՝ այս կերպ խրախուսելով այցելուների հոսքը:
- Թեև կարելի է ենթադրել, որ գրադարանային ոլորտը լավ է զարգանում (բացառությամբ այն հանգամանքի, որ գրադարանների մեկ երրորդն ակտիվ չի գործում), առկա են գրադարանավարների վերապատրաստման ծրագրեր և մասնագիտական հավատարմագրում, մրջոցառումներ են կազմակերպվում և տեղեկատվական համակարգերի թվայնացման ուղղությամբ ծավալուն ջանքեր են ներդրվում, թանգարանային համակարգն, այնուամենայնիվ, թվում է, թերզարգացած է, և չկա որևէ վկայություն առ այն, որ տեսալսողական, բազմամիջավայրային, եռաչափ և այլ առաջանցիկ տեխնոլոգիաները կիրառվում են թանգարաններում:
- Ավելին, շահագրգիռ կողմերից մեկից ստացված մեկնաբանությունը փաստում է, որ *թանգարանները և շարժական ժառանգության համար նախատեսված պայմանները կատարելագործելու և հասարակությանը օգուտ տալու նպատակով անհրաժեշտ է բարձրացնել նրանց գրավչությունը և մրցունակությունը:*
- Այս առումով անհրաժեշտություն կա զարգացնելու թանգարանների կառավարման կարողությունները (քանի որ հաջողություն ունեցող թանգարանները միայն գիտական նախագծերում ներառված և հետաքրքրություն ներկայացնող թանգարանները չեն, այլև նրանք, որոնք կազմակերպչական ջանք են ներդնում), բարելավելու թանգարանների ֆինանսավորումը և հետաքրքիր միջավայր ապահովելու, որտեղ մարդիկ ցանկանում են ներգրավվել: Սա անխուսափելիորեն առաջ է բերում հարցադրումներ այն մասին, թե ով է կառավարում թանգարանը (պետական հատվածը, թե մասնավոր հատվածը/երրորդ հատվածներ), ինչպես է իրականացվում մարկետինգը, դիզայնը և ապահովվում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը, այդ թվում՝ ինտերակտիվ բազմամիջավայրային թվային ցուցադրությունների կիրառմամբ և առևտրային կետերի բացմամբ (խանութ, ռեստորան, սրճարան և այլն):
- Շահագրգիռ կողմերից մեկը նկատեց, որ Մշակույթի նախարարության ենթակայության տակ գտնվող թանգարանները մշակում են Թանգարանների հեռանկարային զարգացման ռազմավարություններ, և ամեն տարի այս ռազմավարություն-

ներից բխող գործառույթները ներառվում են նախարարության բյուջետային հայտերում և միջնաժամկետ ծախսերի ծրագրերում: Այս համատեքստում գուցե հնարավոր է մշակել մասնագիտացված ուսուցում թանգարանային գործի համար: Իրականում նշվել է, որ ՀՀ մշակույթի նախարարության և «ԻԿՕՍ»-ի հետ համատեղ Հայաստան են հրավիրվել Բրիտանական թանգարանի մասնագետները ՀՀ տարբեր թանգարանների մասնագետների համար թանգարանային մարքեթինգի կառավարումը և պլանավորումը թեմաներով դասընթաց-վարժանք իրականացնելու նպատակով:

- Թանգարանները դերակատարություն ունեն նաև զբոսաշրջության ոլորտի հետ կապված: Անհրաժեշտ է մշակել հստակ ռազմավարություն, որը թանգարանները կկապի զբոսաշրջային նախաձեռնությունների հետ և համագործակցային ծրագրեր կիրականացնի զբոսաշրջության (Տնտեսական զարգացման նախարարության կողմից համակարգմամբ) և ընդհանրապես մշակութային ժառանգության ոլորտի հետ: Սա կարող է վկայությունը լինել այն բանի, որ կարիք կա էլ ավելի զարգացնելու համակարգման ընթացակարգերը տարբեր նախարարությունների և պետական մարմինների միջև (Ծանոթություն. Վերը Բաժին 1-ում նշված միջգերատեսչական հանձնաժողովների նկատառման մեջ չի հիշատակվում զբոսաշրջության հարցը): Այս խնդիրն էլ ավելի է վատթարանում հստակ թանգարանային ռազմավարության բացակայության պատճառով:
- Այլ շահագրգիռ կողմեր նշում են, որ թանգարանների մասին օրենքը անբավարար է ֆինանսավորման մեխանիզմների ապահովման տեսանկյունից, հովանավորության մասին օրենքը նույնպես բավարար չէ (շատ քիչ բան է արվում հովանավորությունը խրախուսելու համար): Այդ իսկ պատճառով կա անհրաժեշտություն եկամտոտի բազմատեսակացման և այլ աղբյուրների որոշարկման համար, այդ թվում՝ խրախուսելով նվիրատվությունները և ֆինանսական միջոցների ներգրավման առումով ավելի մեծ պրոակտիվությունը:
- Մշակվում են զբոսաշրջային նախաձեռնությունների ստեղծման ծրագրեր (մշակութային երթուղիներ/ենթակառուցվածքային միջանցքներ), որոնց համար օգտակար կլինեն թանգարանների ցանցի հետ կապակցվածությունը: Այլ զբոսաշրջային տեսարժան վայրերի և հարմարությունների հետ համակցությամբ սա կարող է նպաստել գործողությունների կլաստերների ձևավորմանը:

### 13. Ոչ նյութական մշակութային ժառանգություն

Այս բաժինը դիտարկում է այն հարցերը, որոնք վերաբերում են ոչ նյութական մշակութային ժառանգության օգտագործմանը սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներով: Այստեղ տրվել է հետևյալ հարցը. «Ի՞նչ գործողություններ են անհրաժեշտ հանրության օգտին ոչ նյութական ժառանգության հատվածը զարգացնելու համար»:

Մշակույթի նախարարության պատասխանը մասնավորեցնում է, որ ոլորտը հզորացնելու և ոչ նյութական մշակութային ժառանգության ներուժը զարգացնելու նպատակով ավելացվել են ՀՀ պետական բյուջեից ոլորտին տրամադրվող հատկացումները, ծրագրերի քանակը, ընդլայնվել է իրականացվող ծրագրերի շրջանակը:

Համայնքային ներգրավվածության և իրազեկվածության բարձրացման նպատակով ՀՀ տարբեր մարզերում իրականացվում են մշակութային ծրագրեր, այդ թվում՝ ժողովրդական ստեղծագործության փառատոներ, ժողովրդական արվեստի ուսուցողական դասընթացներ, ցուցահանդեսներ, ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանմանը նպաստող ու իրազեկվածությունը խթանող այլ բազմաբնույթ միջոցառումներ: Ինչպես նշվել է վերը Բաժին 5-ում, ոչ նյութական մշակութային ժառանգության տեսական ուսուցման գործընթացն ապահովում է Երևանի պետական համալսարանի հայոց պատմության ֆակուլտետը՝ իր հնագիտության և ազգագրության ամբիոնով, հայ արվեստի պատմության և տեսության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնը, մշակութաբանության ամբիոնը՝ որպես պատմության ֆակուլտետի առանձին ստորաբաժանում: Ոլորտում պետության հետ ակտիվ համագործակցությամբ բազմաթիվ



ծրագրեր են իրականացնում մի շարք հասարակական կազմակերպություններ, օրինակ՝ «Կրթության աջակցության հիմնադրամը», «Տննացույց. ավանդական տոների վերածնունդը», «Մասնա տունը», «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» կազմակերպությունը և այլն:

Ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտում իրականացվում են բազմաթիվ միջոցառումներ: Օրինակ՝ 2016 թվականի ընթացքում կազմակերպվել է 32 միջոցառում, այդ թվում՝ արդեն ավանդական դարձած «Մասնա ծոեր» էպոսին նվիրված միջոցառումները, «Երկնքից երեք խնձոր ընկավ...» հեքիաթասացության և բարբառի մրցույթ-փառատոնը, «Հայաստանը խաղաղության խաչմերուկում» ֆոլկլորային 5-րդ միջազգային փառատոնը, Գյումրիի «Հացի փառատոնը» և ՀՀ Արագածոտնի մարզի Նոր Արթիկ համայնքում իրականացվող «Էրզրի համի հիշողությունը» հայկական ուտեստի փառատոնը:

Ոչ նյութական մշակութային ժառանգության և ժառանգության այլ ոլորտների միջև կապը դրսևորվում է հրատարակչական աշխատանքների և տարբեր մշակութային միջոցառումների միջոցով, թեև նյութական մշակութային ժառանգության այլ ձևերի կապերը մասնավորեցված չեն: Այնուամենայնիվ, բազմաբնույթ փառատոների իրականացումը նպաստում է նաև համայնքային զբոսաշրջությանը և տնտեսական զարգացմանը (թեև չի նշվում, թե ինչպես):

Բացի ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003թ. ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության մասին կոնվենցիայից, ոչ նյութական մշակութային ժառանգության գրանցված արժեքների վերաբերմամբ Հայաստանը անդամակցում և համագործակցում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո գործող Արևմտյան և Կենտրոնական Ասիայի ոչ նյութական մշակութային ժառանգության տարածաշրջանային հետազոտությունների և Հարավարևելյան Եվրոպայի երկրների Սոֆիայի կենտրոնի հետ, ինչպես նաև մասնակցում է ժողովրդական արվեստի տարբեր միջազգային ֆոլկլորային փառատոների, հանդիպումների և ցուցահանդեսների:

Դեռևս խնդիր է ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերի համալրումը, միասնական տեղեկատվական շտեմարանի ստեղծումը, ժողովրդական նվագարանագործության կենսունակության պահպանության մեխանիզմների զարգացումը: Կարևորագույն խնդիր է ավանդական արհեստագործության զարգացումը, արհեստավորների խրախուսման և արհեստագործական արտադրանքի արդիականացումը և կենցաղում ներդրման մեխանիզմների մշակումը, ինչպես նաև ոչ նյութական մշակութային ժառանգության վերաբերյալ գիտահանրամատչելի աշխատությունների տպագրումը:

Մշակույթի նախարարությունը հատկորոշել է, որ ոչ նյութական մշակութային ժառանգության հատվածը զարգացնելու նպատակով անհրաժեշտ է ապահովել այս ժառանգության հանրահոշակումը տեղեկատվական դաշտում, ինչը կարող է նպաստել հանրության իրազեկվածության բարձրացմանը և ոչ նյութական մշակութային ժառանգության նկատմամբ հարգանքի ու կարևորության գիտակցության ձևավորմանը: Բացի այդ, մի շարք այլ խնդիրներ կարող են բարձրացվել ոչ նյութական մշակութային ոլորտի զարգացման առնչությամբ.

- Հաճախ համայնքներն են ոչ նյութական մշակութային ժառանգության իրական պահպանները, հատկապես գյուղական վայրերում, բայց նրանց համար գուցե դժվար լինի այս ժառանգության կարևորությունը և դրա օգտագործման ձևերը հասկանալը: Ավելին, մշակույթը/մշակութային ժառանգությունը կամավորության սկզբունքով իրացվող գործառույթ է Հայաստանի տեղական իշխանությունների համար, և նրանք հաճախ պատրաստ չեն կամ չեն կարող ֆինանսական միջոցներ հատկացնել դրա բարեկարգման/զարգացման համար: Այդ իսկ պատճառով, կարևոր է ներգրավել մասնավոր հատվածին՝ տնտեսական զարգացմանը միտված ձևաչափերով (խրախուսել նրանց գործունեությունը, զարգացնել զբոսաշրջային ծառայությունները և այլն):
- Ոչ նյութական մշակութային ժառանգության ռեսուրսների և արժեքների հրապարակումը և դրանց հնարավորինս լայն օգտագործումը, զբոսաշրջության զարգացմանը միտված նյութական ժառանգության այլ արժեքների, այդ թվում՝ հե-

տաքրքրություն ներկայացնող վայրերի կլաստերների հետ համակցությամբ, կարող է նպաստել ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտի զարգացմանն ի նպաստ հասարակության:

- Հարկ է զարգացնել միջազգային համագործակցությունը՝ ընդլայնելու ոչ նյութական ժառանգության հատվածի ծավալները որպես ռեսուրս, իսկ համապատասխան հնարավորություններ կարող են ստեղծվել, եթե 2018թ. Սմիթսոնյան ֆոլկլորային փառատոնը կազմակերպվեր Հայաստանում (Սմիթսոնյան հաստատության հովանու ներքո, ինչպես նշվել էր «Իմ Հայաստանի» ներկայացուցչի կողմից): «Իմ Հայաստանի» հետ այս համագործակցությունը մեծ ներուժ ունի հայկական ոչ նյութական ժառանգության կարևորության մեծացման համար, իսկ միջազգային միջոցառումները հարկ է պլանավորել՝ հաշվի առնելով միջազգային այցելուների նպաստավոր ներուժը:
- Քանի որ ոչ նյութական մշակութային ժառանգությունը կապվում է հարևան երկրների հետ, օրինակ՝ Վրաստանի և Իրանի, կարևոր է բարձրացնել տարբեր երկրներում առկա մշակութային ժառանգության մասին իրազեկության մակարդակը: Սա կարող է նպաստել զբոսաշրջիկների հոսքերի ուղղորդմանը այդ երկրներ: Այնուամենայնիվ, այս գործողությունը կատարելու համար հարկ կլինի ռազմավարություն մշակել, մասնավորապես ապահովել այլ հասարակություններում փոքրամասնությունների մշակույթի պաշտպանությունը վնասվելուց և խթանել այլ երկրների կառավարությունների մասնակցությունը այս գործընթացին:
- COMUS ծրագրի քաղաքների կամ մշակութային ուղիների հետ կապված միջոցառումների կազմակերպումը կարող է օգնել այս նախաձեռնություններին սատարմանը և խրախուսել մեկ միասնական մոտեցման կիրառումը մշակութային ժառանգության կառավարման գործում:
- Պարզ է, որ նոր քաղաքականությունները, որոնք մշակվել են 2006թ. գործողությունների ծրագրի հիման վրա, բարելավել են ոչ նյութական մշակութային ժառանգության վիճակը, իսկ ոչ նյութական մշակութային ժառանգությանը վերաբերող նոր իրավական շրջանակները նպաստել են ոչ նյութական մշակութային ժառանգության գույքագրման երկրորդային իրավական շրջանակների ձևավորմանը: Սակայն այս ոլորտն ահռելի է իր ծավալներով (և դրա համար կպահանջվեն ահռելի ռեսուրսներ՝ մասնավորապես՝ մշակելու հետաքրքիր միջոցառումներ, որոնք և՛ կխրախուսեն, և՛ կգրավեն այցելուներին (օրինակ՝ գինու փառատոն):

#### 14. Կրթության, իրազեկության և խորհրդատվության մեխանիզմներ

Այս թեմայի ներքո քննվում է մշակութային ժառանգության հուշարձանների հանրօգուտ շահագործման համար ներկայացրած արժեքի մասին հանրային իրազեկության մակարդակի բարձրացման ու լայն հանրությանը կրթելուն ուղղված կարգերի և ընթացակարգերի հարցը: այստեղ տրվել է հետևյալ հարցը. «Ի՞նչ գործողությունների կարելի է դիմել հասարակության իրազեկությունը խթանելու և հանրությանը ժառանգության կարևորության մասին կրթելու համար: Ինչպե՞ս կարելի է կատարելագործել մշակութային ժառանգության կայուն հասարակական և տնտեսական զարգացում ապահովող արժեքների մասին կայացվող որոշումների գործընթացը»:

Մշակույթի նախարարության կողմից տրված պատասխանում նշվում է, որ հուշարձաններին առնչվող գործընթացներն իրականացնելիս հուշարձանների սեփականատերերը և դրանք օգտագործողները, գործող օրենսդրության մասին ցածր իրազեկությամբ պայմանավորված, որպես կանոն, չեն դիմում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին՝ իրավական և գիտամեթոդական անհրաժեշտ խորհրդատվություն ստանալու համար: Ավելին, պարզ է դառնում, որ հուշարձանների վրա կատարվելիք աշխատանքների մասին որոշումները կարգավորվում են ՀՀ մշակույթի նախարարությունում գործող 3 խորհրդակցական մարմինների կողմից:

- Սա հուշում է որոշումների կայացման կառուցվածքի վերևից ներքև ուղղության մասին, որի համար ապագա ներդրողներին աջակցող խորհրդատվական կառույցի ստեղծումը նպաստավոր կլինի:

Հօգուտ հանրային կարծիքի արվող ժեստերից հասկորոշվել է այն, որ հուշարձանների պահպանության, վերականգնման, օգտագործման ծրագրերի հետ կապված խնդիրների վերաբերյալ հանրության առավել լայն շրջանակների կարծիքները (խորհուրդները) հաշվի առնելու, նրանց կողմից ներկայացվող առաջարկություններն ի նպաստ հուշարձանների ծառայեցնելու, հուշարձանների պահպանության և օգտագործման խնդիրների վերաբերյալ առկա տարաձայնությունները հստակեցնելու նպատակով վերականգնող ճարտարապետների, ճարտարագիտական համալսարանի շրջանավարտների՝ հուշարձանների պահպանությանը և օգտագործմանը նվիրված նախագծային աշխատանքներով պարբերաբար կազմակերպվում են ժամանակավոր ցուցահանդեսներ: Ցուցահանդեսի յուրաքանչյուր այցելու ազատ է այս կամ այն նախագծի վերաբերյալ իր կարծիքը հայտնելու՝ այն գրառելով այցելուների տպավորությունների մատյանում: Այս կարծիքներն ու առաջարկությունները հետագայում քննարկվում և ամփոփվում են նախագծողների կողմից:

Բացի այդ, մշակութային ժառանգության պահպանության, վերականգնման, օգտագործման բնագավառներին առնչվող խնդիրների լուծման ընթացքում հաշվի են առնվում նաև Հայկական հուշարձաններն ուսումնասիրող կազմակերպության (RAA), Պատմական հուշարձանները վերականգնող ճարտարապետների հայկական ասոցիացիայի և Հայկական հուշարձանների ճանաչման ծրագիր (AMAP) հասարակական կազմակերպությունների, ՋԼՄ-ների կողմից կազմակերպվող հանրային քննարկումների, հասարակական լուսմների, բանավեճերի արդյունքում ներկայացվող առաջարկությունները:

- Այնուամենայնիվ, տպավորություն է ստեղծվում, որ չկա որևէ ֆորմալ հաստատված մեխանիզմ մշակութային ժառանգության վերաբերյալ խնդիրներում հանրային մասնակցության ապահովման համար:

Նախարարության պատասխանում չեն դիտարկվում հանրային ներգրավվածության, իրազեկության մակարդակի բարձրացման և կրթության հետ կապված հարցերը, որոնք ուղղված կլինեն մշակութային ժառանգության՝ որպես հասարակության համար կարևոր ոլորտի նշանակության ընդգծմանը: Այդ իսկ պատճառով դժվար է համակողմանի պատասխան առաջադրել այս խնդիրների վերաբերյալ: Այնուամենայնիվ, արվել են հետևյալ մեկնաբանությունները, որոնք ներառում են նաև այլ շահագրգիռ կողմերի հնչեցրած պատասխանները.

- Նշվել է, որ ազգային մակարդակում ակտիվ քննարկումներ են տեղի ունենում մշակութային ժառանգության վերաբերյալ, բայց քիչ են քննարկումները համայնքային մակարդակում: Հետևաբար, կարիք կա մշակութային ժառանգության գնահատման, պաշտպանության և օգտագործման մասին քննարկումները տեղափոխել տեղական, համայնքային հարթակ: Տեղերում, օրինակ՝ Գյումրիում, կարիք կա ստեղծելու քննարկման հարթակ՝ որոշելու տեղացիների համար հուշարձանների կարևորությունը: Այս համատեքստում կարևորվում է COMUS ծրագիրը. ինչպե՞ս կարող են մարդիկ հասկանալ մշակութային ժառանգության արժեքը և դրա կարևորությունը իրենց բնակության վայրի համար: Տեղական վայրերի, տեղաբնակների համար մշակութային ժառանգության կարևորությունը և ընդհանուր համատեքստի հետ կապված խնդիրները հարկ է բարձրացնել և բարելավել իրավիճակը ողջ երկրում:
- Այս կերպ ակնհայտ է դառնում կրթության և մի այնպիսի մեխանիզմի անհրաժեշտությունը, որով հանրությունը կներգրավվի մշակութային ժառանգությանն առնչվող գործընթացներում՝ մասնավորապես չմոռանալով *Ֆարոյի կոնվենցիայի* «համատեղ պատասխանատվության» հասկացությունը: Իրականում, շահագրգիռ կողմերից մեկն արտահայտեց այն տեսակետը, թե ներկա դրությամբ հասարա-





Երևան քաղաքի կասկադ համալիրի լուսանկար,  
Երևան, «Դը վիզիթոր» ամսագիր

(պատկերի ստեղծատեղի)



կության իրազեկման գործընթացն իրականանում է միայն «խոշոր» կառույցների առիթով: Այսպիսով, այն դեռևս չի դարձել մշակված, կանոնակարգված և մշտապես կիրառվող գործընթաց: Մյուս կողմից, սահմանափակվելով բնակչությանն ուղղակի «տեղյակ պահելու» տրամաբանությամբ, չի ապահովվում հասարակության իրական մասնակցային դերակատարությունը քաղաքաշինության ոլորտում և քաղաքային կառավարման մեջ: Այստեղ պահանջվում է իրազեկության մակարդակի բարձրացման և հանրային ներգրավվածության ընթացակարգերի մշակում:

Համացանցը և ՁԼՄ-ները, ինչպես նաև հանրակրթությունը կարող են օգտագործվել հանրային իրազեկության մակարդակի բարելավման և հանրությանն ընդհանուր առմամբ (նյութական և ոչ նյութական) մշակութային ժառանգության կարևորության մասին կրթելու համար: Մշակութային ժառանգության՝ կայուն հասարակական և տնտեսական զարգացում ապահովող արժեքների մասին կայացվող որոշումների գործընթացը կարելի է կատարելագործել պետական, շահառու ու հասարակական սեկտորների բաց ու թափանցիկ համագործակցությամբ:

- Իսկապես, գույքացուցակների թվայնացված համակարգերին բաց հասանելիությունը կօգնեք ապահովելու հանրության իրազեկվածությունը ոչ միայն մշակութային ժառանգության ռեսուրսների, այլ նաև այն գործողությունների մասին, որոնք կարող են ազդել դրանց վրա (կառուցապատման նախագծեր, վերականգնման գործողություններ և այլն):

## 15. Հոգևոր (կրոնական) ժառանգություն

Հոգևոր ժառանգության վերաբերյալ բարձրացված հարցերը քննում են կրոնական իշխանությունների դերը իրավական դրույթների, մշակութային ժառանգության հուշարձանների հասանելիության և հոգևոր, համայնքային, կրթական և առևտրային, այդ թվում՝ զբոսաշրջության նպատակներով շահագործման ոլորտում: Այստեղ տրվել էր հետևյալ հարցը. «**Ի՞նչ գործողություններ են հարկավոր հոգևոր ժառանգությունն ներկայացնող արժեքների և ռեսուրսների պահպանման, կառավարման և շահագործման համար**»:

Մշակույթի նախարարությունը պատասխանել է, որ լինելով աշխարհում քրիստոնեությունը պետական կրոն հռչակած առաջին երկիրը՝ Հայաստանը ձևավորել է քրիստոնեական ճարտարապետության յուրահատուկ և ինքնատիպ ոճ, որն, ըստ էության, զգալի և հիմնարար ազդեցություն է ունեցել ոչ միայն արևելյան քրիստոնեական ճարտարապետական դպրոցի, այլև համաշխարհային քրիստոնեական ճարտարապետության ձևավորման վրա: Պետական ցուցակներում, ի թիվս այլ հուշարձանների, ընդգրկված են քրիստոնեական հոգևոր և կրոնական հազարավոր կոթողներ՝ վանական համալիրներ, եկեղեցիներ, մատուռներ, խաչքարային արվեստի յուրահատուկ նմուշներ:

Հայաստանի Հանրապետության խոշոր սեփականատեր է նաև Հայաստանյայց Առաքելական եկեղեցին: ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի փետրվարի 22-ին ընդունվել է «**Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին**» ՀՀ օրենքը: ՀՀ կառավարության մի շարք որոշումներով 1988-2016 թթ. Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցուն են հանձնվել 191 վանքեր և եկեղեցիներ: Բոլոր իրավահարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Բնագավառի պետական լիազորված մարմինը մշտապես ակտիվ համագործակցում է Հայ Առաքելական եկեղեցու և այլ կրոնական կազմակերպությունների հետ՝ մշակութային ժառանգության պահպանության խնդիրների, միջազգային ծրագրերի (ՅՈՒՆԵՍԿՕ, Եվրամիություն, Եվրախորհուրդ) իրականացման գործում: Կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչները ներգրավված են միջգերատեսչական հանձնաժողովներում և խորհրդակցական մարմիններում: Մասնակցում են եզրակացությունների տրամադրման և որոշումների կայացման գործընթացներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հոգևոր ժառանգությունը, ինչպես և հանրապետության տարածքի հաշվառված բոլոր արժեքները, պահպանվում և կարգավորվում են համաձայն ՀՀ օրենսդրության, իրահավաստագրությունները ևս ենթակա են օրենքով կարգավորման: Հոգևոր ժառանգության պահպանման, կառավարման և շահագործման համար, ինչպես և այլ բնագավառներում, անհրաժեշտ է ֆինանսական և մարդկային ռեսուրսների ներգրավում՝ հաշվի առնելով բնագավառի յուրահատկությունը:

Նախարարության պատասխանում չեն արտացոլվել թեմայի շուրջ ավելի լայն խնդիրները: Այնուամենայնիվ, կարելի է առաջա քաշել հետևյալ հարցադրումները.

- Հայաստանում կան զգալի քանակությամբ հոգևոր ժառանգության հուշարձաններ: 12 կրոնական մարմին կա Հայաստանում: Այս հանգամանքը, ինչպես նաև այն, որ մի շարք հոգևոր ժառանգության վայրեր համատեղ սեփականություն են համարվում, նշանակում է, որ կա բարելավված համակարգման զգալի կարիք՝ հատկապես ոչ կյուրական ժառանգության ոլորտում:
- Քրիստոնեության համատեքստում հայերենի և հոգևոր ճարտարապետության կարևորության շնորհիվ զգալի հնարավորություններ կան՝ ձևավորելու «Քրիստոնական ժառանգություն» թեմատիկ փաթեթ հոգևոր ժառանգությամբ հետաքրքրված այցելուների համար: Ավելին, պատասխանողներից մեկը նկատեց, որ հոգևոր ժառանգության հուշարձանների և ռեսուրսների վերաբերյալ հետազոտությունները, դրանց հանրահռչակումը և արժեքի մասին իրազեկության մակարդակի բարձրացումը կարող է բարելավել դրանց կառավարումը, պահպանությունը և շահագործումը:

## 16. Փոքրամասնությունների և խոցելի խմբերի իրավունքները

Այս բաժնում բարձրացվել են այն հարցերը, որոնք վերաբերում են Հայաստանում առկա տարբեր մշակութային, կրոնական և ազգային համայնքներին և նրանց մշակութային ժառանգությանը հատկացվող ուշադրությանը: Այստեղ նաև քննվել են այն հարցերը, որոնք վերաբերում են մշակութային ժառանգության արժեքների և ռեսուրսների հասանելիության աջակցությանը խոցելի խմբերի, օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այստեղ տրվել է հետևյալ հարցը. «Ի՞նչ գործողություններ են անհրաժեշտ խոցելի խմբերի մշակութային ժառանգության արժեքների պահպանման և դրանց կառավարման գործընթացը բարելավելու համար»:

Մշակույթի նախարարության պատասխանից պարզ է դառնում, որ Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգության բնորոշ առանձնահատկություններից է տարբեր պատմական ժամանակաշրջաններում և իրադարձությունների արդյունքում Հայաստանում բնակություն հաստատած այլ ժողովուրդներին պատկանող հոգևոր և կրոնական կառույցների առկայությունը: Իրավականորեն ամրագրելով մշակութային երկխոսությունը երկրի ներքում՝ Հայաստանի Հանրապետությունն ակտիվ մշակութային հարաբերություններ է վարում նաև այն երկրների և ազգերի հետ, որոնք Հայաստանի տարածքում ունեն կրոնական տարբեր բնույթի կառույցներ, մշակույթի տարբեր՝ պետականորեն իրականացնելով դրանց պահպանությունը (հրեական, թուրքմենական, ասորական, ռուսական, արաբական, մոնղոլական և այլն):

Նախարարությունը փաստել է, որ համապատասխան միջոցներ են ձեռնարկվում հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների պատմամշակութային հուշարձանների վերականգնման և պահպանման ուղղությամբ: Ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգությունը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության ու օգտագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը սահմանում է, որ ՀՀ տարածքում գտնվող բոլոր հուշարձանները գտնվում են պետության պահպանության ներքո, իսկ 7-րդ հոդվածով արգելվում է պատմամշակութային հուշարձանների օգտագործումը քաղաքական, գաղափարախոսական, ռասայական, ազգային խտրականության նպատակներով:

2011 թ. մարդահամարի տվյալներով՝ Հայաստանում ազգային փոքրամասնությունները կազմում են երկրի բնակչության 2.2%-ը: Չնայած ոչ մեծ քանակությանը՝ Հայաստանի ազգային փոքրամասնությունները (եզդիներ, քրդեր, ռուսներ, ուկրաինացիներ, հույներ, ասորիներ, հրեաներ, բելառուսներ, վրացիներ և այլն) յուրահատուկ են իրենց մշակութային նկարագրով, և վերջիններիս մշակույթը մաս է կազմում Հայաստանի մշակութային բազմազանության: Ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգության, մշակույթի պահպանմանը, տարածմանը և զարգացմանը մշտապես նպաստելը մշակութային քաղաքականության գերակա ուղղություններից մեկն է:

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը սերտ համագործակցության մեջ է ազգային փոքրամասնությունների միությունների և հասարակական կազմակերպությունների հետ և աջակցում է համերգների, ցուցահանդեսների և այլ մշակութային միջոցառումների կազմակերպմանը: Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունում ազգային փոքրամասնությունների միությունների ներկայացուցիչների հետ պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ ու խորհրդակցություններ, որտեղ քննարկվում են համատեղ միջոցառումների ծրագրերը, մշակույթի ոլորտում ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրները, օրենսդրական դաշտի կատարելագործման առաջարկները:

Ազգային փոքրամասնությունների լեզուները Հայաստանի Հանրապետությունում գտնվում են պետության պաշտպանության ներքո և ունեն հատուկ ճանաչում: Սահմանադրության 41-րդ հոդվածով ամրագրված է ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքը: «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը, ազգային լեզվով սեփական մշակույթի տարածումը: ՀՀ-ում պետական աջակցություն են ստանում ազգային փոքրամասնությունների 13 անվանում թերթ և 2 անուն ամսագիր: Գործում են ազգային փոքրամասնությունների լեզուներով ռադիոհաղորդումներ և ռադիոծրագրեր (մասնավորապես Հայկական հանրային ռադիոյում և հեռուստատեսությունում): 2013-2015թթ. պետության կողմից համաձայնություն և մասնագիտական աջակցություն է տրվել ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի և ՀՀ Արարատի մարզի Դվին համայնքի ասորական եկեղեցիների, Երևան քաղաքում ռուսական ուղղափառ եկեղեցու և Արմավիրի մարզի Արգավանդ համայնքի Թուրքմենական դամբարանի վերականգնման աշխատանքներին:

Նախարարության պատասխանն այս առումով խիստ դրական է: Այնուամենայնիվ, կարելի է առաջ քաշել մի շարք լրացուցիչ հարցադրումներ.

- Խոցելի խմբերի մշակութային արժեքների պահպանման և դրանց կառավարման գործընթացը բարելավելու համար անհրաժեշտ է շահառու կողմերի հետ համագործակցության կազմակերպում: Ավելին, ինչպես նշվել է վերոբերյալ Բաժին 13-ում, կարևոր է փոքրամասնությունների ժառանգության մասին իրազեկության մակարդակը բարձրացնել. սա կօգնի հարևան երկրներից գրավել զբոսաշրջիկների, որոնց ժառանգությունը ներկայացված է Հայաստանում:
- Քանի որ նախարարության պատասխանում արտացոլված չէին այն հարցադրումները, որոնք վերաբերում էին հաշմանդամություն ունեցող անձանց համար մշակութային ժառանգության հուշարձաններին հասանելիությանը, անհնար է կոնկրետ մեկնաբանել այս հարցը, բացի հիշատակելուց, որ կենսականորեն անհրաժեշտ է բոլոր անձանց համար (թանգարաններ և այլ վայրեր մուտքի) հասանելիության տրամադրման խնդիրների կարևորումը:

## **17. Հարկադիր կատարում, պատժամիջոցներ ու քրեաիրավական ներգործության այլ միջոցներ**

Այս թեմայի ներքո դիտարկվում էին իրավական ընթացակարգերը և այն պատժամիջոցները, որոնք կարող են կիրառվել մշակութային ժառանգության հուշարձանների կամ ռեսուրսների վրա ազդեցություն ունեցող կամ որևէ այլ կերպ ազդող չար-





**Յատկող ձիեր, հեղ.՝ Թոմ Յիլ, 2012**

(պատկերի սկզբնաղբյուր)



տոնված, անօրինական կամ այլ գործողությունների դեպքում, ինչպես նաև մշակութային ժառանգության արժեքների նկատմամբ անուշադրության և անփութության դեպքում: Այստեղ տրվել է հետևյալ հարցը. «Ի՞նչ գործողությունների է անհրաժեշտ դիմել՝ հարկադրման և պատժամիջոցների մեխանիզմը կատարելագործելու նպատակով»:

Մշակույթի նախարարության պատասխանը որոշարկել է այն պատժամիջոցները սահմանող դրույթները, որոնք ներկայացված են Վարչական օրենսգրքում և Քրեական օրենսգրքում, այդ թվում՝ ֆինանսական պատժամիջոցների մասին դրույթները, որոնք կարծես այնպես են հաշվարկված, որ կանխարգելիչ լինեն (ծանրագույն դեպքերում սահմանված է նաև ազատազրկում): Այնուամենայնիվ, նշվել է, որ.

- Այս ոլորտում իրավահարաբերությունները կանոնակարգելու և համապատասխան պատիժ կիրառելու համար անհրաժեշտ է մշակել «Մշակութային ժառանգությանը հասցված վնասի գնահատման չափանիշները»: Ավելին, այլ պատասխանողներ նկատել են, որ քրեաիրավական ներգործության և պատժամիջոցների կիրառման դրույթներն ու մեխանիզմները կարելի է կատարելագործել կանխարգելիչ մեխանիզմների բարելավման (օրինակ՝ մշտադիտարկման գործունեության) միջոցով: Այս առումով գրանցման մեխանիզմների միջոցով վիճակի կանոնավոր թարմացումները (ինչպես նշվել է վերը՝ Բաժին 10-ում) կարող են օգնել այսպիսի խնդիրների լուծմանը:

## 18. Մշակութային ժառանգության ոլորտում ներդրումների գնահատում և վիճակագրություն

Այս թեմայի ներքո քննվել է, թե արդյոք կազմվում է մշակութային ժառանգության վայրեր զբոսաշրջիկների կամ տեղի բնակիչների կողմից կատարված այցելությունների քանակի և այցելուների ժողովրդագրական տվյալների վիճակագրություն, և երբևէ կատարվել է մշակութային ժառանգության արժեքների պահպանության, ղեկավարման, վերականգնման և հանրօգուտ շահագործման բնագավառներում պետական կամ այլ հանրային ֆինանսական ներդրումների ուղղակի կամ անուղղակի օգուտների գնահատում (նաև ցուցիչների օգնությամբ): Այստեղ տրվել է հետևյալ հարցը. «Ի՞նչ գործողությունների է հնարավոր դիմել, որպեսզի ավելի շատ տեղեկացված լինենք մշակութային ժառանգության՝ հասարակության վրա ունեցած տնտեսական և հասարակական զարգացումը խթանող ազդակների մասին»:

Մշակույթի նախարարությունը այս հարցին պատասխան չի տվել: Ավելին, Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը պաշտոնապես պատասխանել է, որ այս ոլորտի առնչությամբ մեկնաբանություններ չունի: Այնուամենայնիվ, շահագրգիռ խմբերի հետ Երևանում կայացած հանդիպման ընթացքում (3-4 հոկտեմբեր, 2016թ.) վիճակագրական ծառայության մի ներկայացուցիչ նշեց, որ ամենամյա կտրվածքով վիճակագրության գերատեսչությունը հավաքում է սահմանափակ տեղեկատվություն ժառանգության վերաբերյալ, սակայն մշակութային ժառանգությունից կամ զբոսաշրջությունից ստացված եկամուտների մասին ոչ մի տեղեկություն չի գրանցվել:

Այս առումով բարձրացվել են հետևյալ հարցադրումները, որտեղ ներառված են նաև շահագրգիռ կողմերի տեսակետները.

- Չմոռանալով ներկա եվրոպական մտայնությունը (տե՛ս Մաս 1), որում մշակութային ժառանգության ոլորտում ներդրումների տնտեսական և սոցիալական օգուտներն առանցքային նկատառումներ են, կենսականորեն էական է մշակել **ապացուցահեն քաղաքականությունների ստեղծման, ազդեցության գնահատման, միտումների մշտադիտարկման և ազդեցություններն առավելագույնի հասցնելու նպատակով տվյալների փոխանակման և տարածման** համակարգ կառավարման համատեքստում և ճանաչել մշակութային ժառանգության ոլորտի՝ տարածքային և տեղական մակարդակում կայուն զարգացման առումով ունեցած դրական ազդեցությունը: Մշակութային ժառանգությունն այս դեպքում համարվում է ռազմավարական ռեսուրս «խելացի, կայուն և ներառա-

կան աճի» համար և հիմք՝ «ներառական, նորարարական և մտածող հասարակությունների» ձևավորման համար (տե՛ս «Եվրոպական մշակութային ժառանգությունը՝ թվերով» զեկույցը վերը՝ Մաս 1):

- Մշակութային ժառանգության ոլորտի նկատմամբ ընդհանուր պատասխանատվության և հասարակության համար հավանական օգուտների ապահովման նպատակով անհրաժեշտ է քննարկումներ ծավալել հասարակական և փորձագիտական, ինչպես նաև կառավարական շրջանակներում մշակութային ժառանգության հավանական սոցիալ-տնտեսական օգուտների մասին իրազեկության մակարդակը բարձրացնելու համար:
- Այս ոլորտում որոշակի աշխատանք (մշտադիտարկում և գնահատում) մեկնարկել է «Իմ Հայաստան»-ի կողմից, որը կարող է հանդես գալ որպես նմանօրինակ քննարկումներ սկսելու օգտակար հարթակ:

## 19. Այլ ընդհանուր մեկնաբանություններ

Մշակույթի նախարարությունը և այլ շահագրգիռ կողմեր բարձրացրել են մի շարք այլ խնդիրներ, որոնք ամփոփ ներկայացված են ստորև:

Շահագրգիռ կողմերի մեկնաբանությունները.

- Արտահայտվեց այն տեսակետը, որ Հայաստանի Հանրապետությունում մշակութային ժառանգության խնդիրների հետ կապված պատկերացումները և մոտեցումները դեռևս հիմնված են խորհրդային տարիներին ձևավորված մոդելի վրա, որը ենթադրում էր կառույցների հետ կապված գործողություններում պետության գերակշռող մասնակցությունը, հուշարձան հանդիսացող կառույցները որպես պետական սեփականություն պահպանելու միտումները, պետությունը որպես դրանց պահպանման և ճիշտ օգտագործման միակ պարտավորություն կրող կառույց դիտարկելու, մշակութային ժառանգության կառույցների կենդանի կյանքը «թանգարանային» (այսինքն՝ մշակութային օգտագործման, ոչ թե համայնքային կամ տնտեսական օգտագործման) դարձնելու և այլ սկզբունքներ:
- Մշակութային ժառանգություն հանդիսացող կառույցների մասնավորեցումը, որը հապճեպորեն կատարվեց անկախության առաջին տարիներին, ներկայում լուրջ վտանգ է ժառանգության պահպանման համար:
- Եվրոպական մտածելակերպի վրա հիմնված նոր նախաձեռնությունները պետք է լրացնեն և բարելավեն գոյություն ունեցող մոտեցումներն ու աշխատակարգերը:
- Հարկ է ժառանգության սոցիալական կարևորության խթանման գործողություններում խրախուսել համայնքների ակտիվ ներգրավումը, հանրային բանավեճի ներմուծումը, որոշումների կայացման գործընթացում բնակիչների անմիջական մասնակցության ապահովումը և այլ նմանատիպ ընթացակարգեր:

Այս բոլոր տեսակետները հնարավոր չէ լիարժեք կերպով հիմնավորել, սակայն արտահայտված տեսակետները սատարում են մշակութային ժառանգության՝ որպես կայուն ռեսուրսի կառավարման համար նոր նախաձեռնությունների գաղափարին:

Մի շարք հարցեր և մարտահրավերներ են բարձրացվում Մշակույթի նախարարության կողմից: Դրանք ներկայացված են ստորև.

- Ընդունվել է, որ ինստիտուցիոնալ բարեփոխումներ և մարքեթինգային քաղաքականության ակտիվացում է պահանջվում: Իրավական դաշտի կայունության ապահովման համար անհրաժեշտ է հստակեցնել օրենքների բովանդակությունը, բարձրացնել օրենքների մշակման և ընդունման գործընթացների թափանցիկության և կանխատեսելիության մակարդակը, ոլորտին առնչվող օրենքներում առկա բացերը՝ նվազագույնի հասցնելու և միջազգային լավագույն փորձին մոտեցնելու նպատակով՝ հաշվի առնելով ներկա մարտահրավերները և իրողությունները: Այդ խնդիրը լուծելու համար մշակվել է՝
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին,

- «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին և
- «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը:
  - Պետական տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ առկա է գերատեսչական շահերի բախում (որը կարող է խոչընդոտել համակարգված և ինտեգրված մոտեցման մշակման գործընթացին): Այդ իսկ պատճառով հարկ է կանոնակարգել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հուշարձանների սեփականատերերի և օգտագործողների փոխհարաբերությունները,
  - Կա մշակված և ընդունված ծրագրերի ֆինանսավորման բացակայություն,
  - Կա կադրերի արտահոսք, երիտասարդների ներգրավման և կադրերի վերապատրաստմանն ուղղված գայթակղիչ առաջարկների և ծրագրերի բացակայություն կամ պակաս.
  - Չկա հուշարձանների պահպանության բնագավառի միասնական կառույց,
  - Անհրաժեշտ է միջազգային համագործակցության շրջանակների ընդլայնում, հայկական պատմամշակութային ժառանգության միջազգայնացում՝ Իրանի ու Վրաստանի հետ համատեղ տարածաշրջանային արդյունքի ձևավորում:

**Նախարարությունը առաջ է քաշել մի շարք առաջարկություններ վերոհիշյալ խնդիրների համար, այդ թվում՝**

1. Հուշարձանների պահպանության բնագավառի միասնական կառույցի ստեղծում,
2. պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի (տեսլական) իրատեսական ծրագրի հաստատում,
3. առանցքային հիմնախնդիր է բնագավառի համար անհրաժեշտ մասնագետների պատրաստումը (նաև տեխնիկական անձնակազմի մասով), ինչպես նաև կադրերի արտահոսքի դադարեցմանն ուղղված քայլերի ձեռնարկումը,
4. հուշարձանների պահպանության բնագավառում պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, բնագավառի գիտական կազմակերպությունների և բուհերի, ինչպես նաև միջազգային կառույցների հետ ակտիվ ու արդյունավետ համագործակցության արմատավորում,
5. հուշարձանների պահպանության, հանրահռչակման և օգտագործման համալիր միջոցառումների իրականացում, զբոսաշրջային երթուղիների մշակում բնագավառի լիազոր մարմնի հետ, հուշարձանների ընդգրկում ակտիվ զբոսաշրջային երթուղիներում, ենթակառուցվածքների զարգացմանը նպաստող միջոցառումների ծրագրի մշակում և իրականացում, ինչպես նաև անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթում,
6. արտերկրում գտնվող հայկական հուշարձանների ցանկերի կազմում և դրանց վերաբերյալ տեխնիկական տվյալների և պատմական տեղեկատվության հավաքագրում,
7. մշակութային լանդշաֆտի պահպանում,
8. պետական ֆինանսական ներդրումների ավելացում, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից կատարվող ներդրումների խրախուսում, ինչի արդյունքում արդեն իսկ մշակված ծրագրերի իրականացում,
9. քաղաքաշինական, գյուղատնտեսական ակտիվ գործունեության տարածքներում առաջնահերթության կարգով հուշարձանների ուսումնասիրում և պահպանական գոտիների կազմում,
10. ֆոտոխրոնոմետրիայի և գեոդեզիայի մեթոդների կիրառում վերականգնման բնագավառում,
11. միջազգային դոնոր կազմակերպությունների ներգրավում ու համագործակցության շարունակականության ապահովում,



12. անհրաժեշտ է վերանայել և խստացնել ՀՀ օրենսդրությամբ առկա պատասխանատվության ենթարկելու միջոցները՝ տույժերն և տուգանքները,
13. հասնել նրան, որ բացառվի առանց ՀՀ մշակույթի նախարարության հետ համաձայնեցման՝ մշակութային ժառանգության հետ կապված որևէ որոշման ընդունում, որը կարող է վնասել ոչ միայն հուշարձանի պահպանության գործընթացի սահմանված կարգով կազմակերպմանը, այլ նաև անմիջապես հուշարձաններին:
14. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածով հուշարձաններին, կամ դրանց պահպանական գոտիներին վնաս պատճառած իրավաբանական և ֆիզիկական անձինք պարտավոր են վերականգնել դրանց նախկին վիճակը, իսկ վերականգնելու անհնարինության դեպքում հատուցել պատճառած վնասները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Սակայն մինչ օրս սահմանված չէ կիրառման մեխանիզմը, և բացակայում է վնասի գնահատման վերաբերյալ համապատասխան իրավական ակտը, որից էլ բխում է վարչական տույժերի սահմանման անհնարինությունը:  
Ավելին, նախարարությունը մասնավորեցրել է, որ չնայած այն հանգամանքին, որ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ հողային օրենսգրքի համապատասխան հոդվածների պահանջներին՝ սահմանված է հատուկ պահպանվող պատմամշակութային հողերի, հուշարձանների և դրանց պատմական միջավայրի պահպանության ապահովման, պատմագեղարվեստական արժեքների պահպանության, նպատակային օգտագործման և բարենպաստ տեսողական ընկալման ապահովման նպատակով օգտագործման ռեժիմ, սակայն դեռևս չի գործում համապատասխան իրավական ակտ:



**Հայոց այբուբենի պուրակ Ապարանի հարևանությամբ**  
(ապարանի ստորակառուցում)

# ՄԱՍ 3:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետևյալ հարցադրումները և առաջարկությունները բխում են այս զեկույցի առաջին և երկրորդ մասերում բարձրացված խնդիրներից: Դրանք կենտրոնանում են մշակութային ժառանգության ինտեգրված մոտեցման մշակման վրա՝ ճանաչելով մշակութային ժառանգության տնտեսական և սոցիալական դերը հայկական մշակութային ժառանգության ոլորտի մրցունակությունը և նորարարականությունը բարձրացնելու գործում:

### Ընդհանուր առաջարկություններ

Նախ և առաջ հարկ է ևս մեկ անգամ նշել, որ մշակութային ժառանգության եվրոպական քաղաքականությունը միտված է ինտեգրված մոտեցում մշակելու ի նպաստ մշակութային երկխոսության և փոխըմբռնման՝ հաշվի առնելով մշակութային, տնտեսական, սոցիալական, պատմական, կրթական, բնապահպանական և գիտական բաղադրիչները՝ ավելի մեծ սոցիալական, տնտեսական և տարածքային համախմբվածության հասնելու նպատակով: Սա կարևոր քայլ է Հայաստանի Հանրապետության կառավարության համար: Բայց փաստ է, որ շատ շահագրգիռ կողմեր Հայաստանում սատարում են այնպիսի նոր նախաձեռնությունների գաղափարին, որոնք միտված են մշակութային ժառանգությունը որպես կայուն ռեսուրս տնօրինելուն:

Այս նպատակով օգտակար կլինի գտնել մի հարմար միջոց հանրային բանավեճ կազմակերպելու համար՝ ներգրավելով հանրային սեկտորի այն մարմիններին, որոնք պատասխանատու են մշակութային ժառանգության և այլ հարակից ոլորտների համար (հատկապես նրանց, ովքեր զբաղվում են տնտեսության և զբոսաշրջության, շրջակա միջավայրի և բնության, սոցիալական ներառման, կրթության և ազգային վիճակագրության ոլորտներով), այդ թվում՝ տեղական իշխանությունների ներկայացուցիչներին և ժառանգության, զբոսաշրջության, բիզնեսի զարգացման, ստեղծագործական ոլորտներում տարբեր շահագրգիռ կողմերի, տեխնոլոգիա մշակողների և Հայաստանում գործող համապատասխան ՀԿ-ների:

### Ի հավելումն ինտեգրմանը վերաբերող առավել ընդհանուր հարցերի՝ սա կպահանջի քննարկում և հետևյալին միտված քաղաքականության նախաձեռնությունների ձևավորում՝

- մշակութային ժառանգության համար ֆինանսավորման հնարավորությունների ստեղծում,
  - մշակութային ժառանգության վիճակի գնահատման տվյալների գնահատում,
  - մշակութային ժառանգության վիճակի գնահատման տվյալների մշակում,
  - պետական-մասնավոր գործընկերության հաստատում,
  - խթաններ (այդ թվում՝ հարկային արտոնություններ) և մշակութային ժառանգությանն ուղղված հովանավորություն, այդ թվում՝ ֆինանսավորման մի քանի աղբյուրների և միջազգային աղբյուրների միջոցով հովանավորություն:
- Այնուհետև դա կպահանջի կառավարման նոր մոդելների քննարկում, մասնավորապես, քանի որ պատմամշակութային ժառանգությունը ներկայում հիմնականում մեկուսացված է հանդես գալիս: Մրա համար կպահանջվի քննարկում և քաղաքականության մշակում կառավարման նոր մոդելների վերաբերյալ, այդ թվում՝
- ավելի միասնական աշխատանք կառավարական մակարդակով, միջգերատեսչական աշխատանքների խթանում և քաղաքականության մշակման գործում հանրային և հիմնական շահագրգիռ կողմերի ներգրավում՝ ապահովելով համատեղ մոտեցում,
  - նոր իրավական գործիքների, այդ թվում՝ ֆինանսավորման և վարչական գործիքների քննարկում,



- մի կողմից՝ մշակութային ժառանգության պահպանության և կայուն տնօրինման, մյուս կողմից՝ ի նպաստ ողջ հանրության մշակութային ժառանգության օգտագործման ավելի մեծ հավասարակշռության ապահովում,
- ազդեցության գնահատման մեթոդաբանության մշակում:

Այնուհետ, դա կպահանջի մշակութային ժառանգության տնտեսական և ռազմավարական ներուժի քննարկում, այդ թվում՝

- աշխատատեղերի, մասնավորապես կարողությունների և աշխատատեղերի ստեղծման հնարավորությունը,
- համատեղ մշակութային ժառանգության և զբոսաշրջության նախագծերի խթանումը՝ մակրո-տարածաշրջանային ներուժի զարգացման համար,
- մշակութային/մշակութային ժառանգության/ստեղծարար ոլորտներում նորարարության և մրցունակության խթանումը,
- երիտասարդների զբաղվածության ապահովման ներուժը,
- փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացումը (ՓՄՁ):

Անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հնարավորությունները և մարտահրավերները.

- մշակութային ժառանգության նոր տեխնոլոգիաների և թվայնացման զարգացման գործում առաջընթաց ապահովելու անհրաժեշտությունը՝ դրա պահպանության բարելավման, կրթական հնարավորությունների ստեղծման, աշխատատեղերի ապահովման, սոցիալական ներառման և ավելի մեծ հասանելիության ապահովման համար՝ հատկապես հաշմանդամների կամ հեռավոր վայրերում ապրող մարդկանց համար (ինչը շատ արդիական է Հայաստանում տիրող իրավիճակի համար),
- մշակութային ժառանգության՝ որպես կրթական գործիքի օգտագործման անհրաժեշտությունը՝ հասարակության խնդիրների և հասարակության համար ժառանգության ներուժի ավելի լայն ըմբռնման համար:

Եվրոպական Միությունը կարևորել է ժառանգության նորարարական օգտագործումը տնտեսական աճի, աշխատատեղերի ստեղծման, սոցիալական միասնականության և բնապահպանական կայունության համար՝ մասնավորապես հաշվի առնելով մշակութային ժառանգության դրական փորձը, միևնույն ժամանակ գիտակցելով, որ այս տեսակետը դեռ համընդհանուր չէ, քանի որ շատ երկրներում ժառանգության ռեսուրսի միջոցով վերականգնելու և վերանորոգելու ներուժը բավարար չափով զարգացած չէ:

### Ապացուցահեն քաղաքականություն

Այս փոփոխությունը իրականացնելու համար անհրաժեշտ է տրամադրել փաստեր նոր մոտեցման վերաբերյալ: Այս առնչությամբ «Եվրոպական մշակութային ժառանգությունը թվերով» (Մաս 1, Բաժին 7) բավարար փաստեր է ներկայացնում մշակութային ժառանգության որպես կայուն ռեսուրսի օգտագործման հնարավոր օգուտների վերաբերյալ, որոնք ամփոփված են տասը հիմնական կետերում: Այնուամենայնիվ, նոր մոտեցումը կարող է մշակվել միայն հինգ ռազմավարական առաջարկությունների միջոցով.

- **աջակցում ապացուցահեն քաղաքականության մշակմանը,**
- **ազդեցության չափում,**
- **միտումների մշտադիտարկում,**
- **տվյալների տրամադրում և տարածում,**
- **և վերոնշյալի կիրառումը՝ ազդեցությունը առավելագույնի հասցնելու համար:**

Հետևաբար, անհրաժեշտ է բարելավել մեթոդաբանական շրջանակները մշակութային ժառանգության վերաբերյալ ավելի ճշգրիտ վիճակագրություն տրամադրելու համար, այդ թվում՝ մշակութային ժառանգության մշտադիտարկման, գնահատման, դրա իրական և պոտենցիալ տնտեսական և սոցիալական արժեքի գնահատման համար ցուցանիշների շարքերի մշակման միջոցով (ավելի համակարգված ձևով):



Հայաստանում վիճակագրության նման կիրառումը զարգացած չէ: Ավելին, ներկայում չկան բավարար և հասանելի վիճակագրական տվյալներ ժառանգության հարցերի վերաբերյալ համակարգված համատեքստում և ազգային մակարդակում (տե՛ս Մաս 2, Բաժին 18):

Վերոնշյալ նկատառումների առնչությամբ ներկայացվում են հետևյալ երկու առաջարկությունները.

### **Առաջարկություն 1: Կազմակերպել ազգային բանավեճ մշակութային ժառանգության՝ հասարակությանն ի նպաստ օգտագործվող ազգային կայուն ռեսուրսի ունեցած ներուժի վերաբերյալ**

Այս բանավեճի համար պետք է ստեղծել համապատասխան հարթակ, որտեղ կարող են ներառվել լայնածավալ քննարկումներ, եվրոպական փորձի վրա հիմնված փաստերի և մտածողության խթանում: Կարող է կազմակերպվել ազգային գիտաժողով՝ միջազգային դերակատարների և հասարակության բոլոր հատվածների շահագրգիռ կողմերի մասնակցությամբ (հանրային, մասնավոր, երրորդ սեկտոր և համայնքային շահագրգիռ կողմեր): Մշակութային ժառանգության ոլորտի կառավարումը և զարգացումը պետք է դուրս գա ներկայում գործող նեղ կառույցների շրջանակներից:

### **Առաջարկություն 2: Ուսումնասիրել ապացուցահեն քաղաքականության ներուժը**

Այս առնչությամբ կան բազմաթիվ ուսումնասիրություններ և օրինակներ, որոնց կարելի է անդրադարձնալ: Ապացուցահեն այս մոտեցման հայեցակարգն առաջին անգամ մշակվել է Միացյալ Նահանգներում 1990-ականների սկզբին և ծառայել որպես հիմք պատմական վերականգնման համար՝ ապահովելով դաշնային ֆինանսավորում: Ժառանգության մեջ ներդրումներ անելու ուղղակի և անուղղակի օգուտների մասին վկայող փաստերը, այդ թվում՝ մասնավոր հատվածից ստացվող հարկային եկամուտների զգալի մասի վերադարձը արդարացրել է կառավարության աջակցության ծախսերը և զգալիորեն մեծացրել ներդրումների ծավալները: Այս առնչությամբ առանցքային հրապարակումներից մեկը Դոնովան Ռիփլեյմայի 1994 թվականին լույս տեսած գիրքն է՝ «Պատմական արժեքների պահպանման տնտեսությունը. համայնքի ղեկավարի ուղեցույց»: Այն տպագրվել է Պատմական արժեքների պահպանման հիմնադրամի կողմից (նշենք, որ այս գիրքը թարգմանվել է ռուսերեն), իսկ Ռիփլեյման շարունակել է այս աշխատանքը՝ զուգահեռաբեր խորհրդատվություն տրամադրելով Եվրոպայի խորհրդին<sup>25</sup>: Կան ուշադրության արժանի բազում այլ հրապարակումներ, օրինակ՝ *Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանման միջազգային խորհրդի* (ԻԿՕՄՈՍ) զեկույցի հիման վրա «Պահպանման տնտեսությունը» հրապարակումը (1998)<sup>26</sup>, Պատմական Անգլիայի «Ժառանգության շահութաբաժնային մեթոդաբանություն. ժառանգության նախագծերի ազդեցության չափումը» (2005)<sup>27</sup> հրապարակումը և բոլորովին վերջերս Հայաստանում տիրող իրավիճակին առավել համապատասխանող Եվրոպայի խորհրդի հրապարակած Լոնդոնի տնտեսագիտության դպրոցի հետ համագործակցությամբ գիրքը՝ «Մշակութային ժառանգության ոլորտում ներդրումների ավելի մեծ օգուտները» (2015)<sup>28</sup>: Եվրոպայի խորհրդի հրապարակման հիմքում Բոսնիայից, Հերցեգովինայից ու Սերբիայից դեպքերի այնպիսի ուսումնասիրություններ են, որոնք հատուկ շեշտադրությամբ ընդգծում են ֆինանսական ռեսուրսներ

<sup>25</sup> Տե՛ս Donovan's Place Economics Consultancy: [http://www.placeeconomics.com/about\\_us/donovan-rypkema/](http://www.placeeconomics.com/about_us/donovan-rypkema/)

<sup>26</sup> Տե՛ս <http://www.icomos.org/en/what-we-do/disseminating-knowledge/publication/other-publications/116-english-categories/resources/publications/314-report-on-economics-of-conservation>

<sup>27</sup> Տե՛ս <https://historicengland.org.uk/images-books/publications/heritage-dividend-methodology/>

<sup>28</sup> Տե՛ս <https://book.coe.int/usd/en/cultural-heritage/6454-the-wider-benefits-of-investment-in-cultural-heritage.html>

րի ուսումնասիրությունը, ավելի մեծ հասանելիության ապահովումը, ժառանգության ինտեգրված ըմբռնման ձևավորումը, տնտեսական և սոցիալ-մշակութային օգուտները, համայնքի և այցելուների հարցումների դերը:

### Քաղաքականության մշակման ժամանակ նկատի առնվող ցուցանիշներ

Ցուցանիշների մշակումը կարևոր է ապացուցահեն քաղաքականության գործառնության համար: Կարելի է բերել մի քանի օրինակ.

Միացյալ Թագավորությունում Պատմական Անգլիան (պետական գործակալություն) տարեկան ուսումնասիրություններ է հրատարակում «Ժառանգության ոլորտի հաշվարկները» խորագրով: Այս ուսումնասիրությունները տրամադրում են ժառանգության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության և հանրության մասնակցության մասին մի շարք վիճակագրական տվյալներ: 2016թ. ներկայացվել է երկու զեկույց «Ժառանգության ոլորտի հաշվարկներ» խորագրի ներքո. առաջինը՝ «Ժառանգություն և հասարակություն»<sup>29</sup> (որն անդրադարձ է կատարում «բարեկեցության և կյանքի որակի բարձրացման» գործում մշակութային ժառանգության դերին առնչվող այնպիսի խնդիրների, ինչպիսիք են՝ տեղական ժառանգության միջոցով կյանքի որակի բարելավումը, երիտասարդների ներգրավվածությունը, լայն հանրության կողմից դրական գնահատումը): Երկրորդը՝ «Ժառանգություն և տնտեսություն»<sup>30</sup> (որն ուսումնասիրում է ժառանգության և տնտեսական գործունեության միջև ազդեցությունն ու փոխկապակցվածությունը՝ հասկանալու և գնահատելու ժառանգության ավելացրած արժեքը, այդ թվում՝ ժառանգության համախառն արժեքի գնահատումների, ժառանգության և զբոսաշրջության հետ կապված ծախսերի, ինչպես նաև ժառանգության և աշխատուժի/աշխատատեղերի և ժառանգության ոլորտում շինարարության ծավալների վերաբերյալ հիմնական բացահայտումները): Բացի այդ, Միացյալ Թագավորության կառավարության՝ մշակույթի, ՋԼՄ-ների և սպորտի նախարարությունը (ՄՋՄՆ) հրատարակում է ազգային վիճակագրական ժողովածու, որը ներառում է տեղեկատվություն ժառանգության ոլորտի մասին (այցելության, նվիրատվության, կամավորական աշխատանքների, վտանգված ժառանգության և այլ խնդիրների), ինչպես նաև գրադարաններից օգտվելու և թանգարաններ ու պատկերասրահներ այցելությունների մասին<sup>31</sup>:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի վերջերս մշակված «Մշակույթը հանուն զարգացման» ցուցանիշների կազմը (ՄՋՑ) հանրային իրազեկման և քաղաքականության գործիք է, որը գնահատում է զարգացման գործընթացում մշակույթի բազմաառաջնությունը դերակատարությունը փաստերի և ցուցանիշների միջոցով<sup>32</sup>: Տարբեր ցուցանիշային խմբերի շրջանակներում առկա են կոնկրետ ժառանգությանը վերաբերող ցուցանիշներ՝ «Ժառանգություն և կայունություն». *Ժառանգության կայունության պահպանման բազմաչափունային շրջանակի զարգացման համայնքի*<sup>33</sup>: Այս ցուցանիշները բաժանվում են երեք հիմնական խմբի՝ յոթ ենթախմբերով.

- գրանցումներ և արձանագրություններ՝
  - միջազգային մակարդակ,
  - ազգային մակարդակ,
  
- պաշտպանություն, պահպանում և կառավարում՝
  - պահպանում, արժևորում և կառավարում,
  - գիտելիք և կարողությունների զարգացում,
  - համայնքային ներգրավվածություն,
  
- գիտելիքի և փորձի փոխանակում և աջակցության ուժեղացում՝

<sup>29</sup> Տե՛ս <https://content.historicengland.org.uk/content/heritage-counts/pub/2016/heritage-and-society-2016.pdf>

<sup>30</sup> Տե՛ս <https://content.historicengland.org.uk/images-books/publications/heritage-and-the-economy/heritage-and-the-economy-2016.pdf/>

<sup>31</sup> Տե՛ս [https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment\\_data/file/555972/DCMS\\_Statistical\\_Handbook\\_-\\_28\\_September\\_2016.pdf](https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/555972/DCMS_Statistical_Handbook_-_28_September_2016.pdf)

<sup>32</sup> <http://en.unesco.org/creativity/cdis>

<sup>33</sup> [http://en.unesco.org/creativity/sites/creativity/files/cdis/heritage\\_dimension.pdf](http://en.unesco.org/creativity/sites/creativity/files/cdis/heritage_dimension.pdf)



# Հայկական գորգագործություն

(պատկերի սկզբնաղբյուր)





- իրազեկության բարձրացում և կրթություն,
- աջակցության խթանում:

Ընդհանուր առմամբ կան 46 ցուցանիշներ, որոնք առնչվում են հիմնական խմբերի և ենթախմբերի կոնկրետ խնդիրներին: Այնուհետ զեկույցում ներկայացվում է ուղեցույց առ այն, թե ինչպես կարելի է հարաբերակցել խնդիրները ցուցանիշների կիրառման արդյունքում ստացված բացահայտումների հետ:

Բացի այդ, (տե՛ս Մաս 1, Բաժին 10) Եվրոպայի խորհուրդը հավանություն է տվել *Եվրոպական մշակութային ժառանգության 21-րդ դարի ռազմավարության ընդունմանը* (որը պաշտոնապես կընդունվի Եվրոպայի խորհրդի նախարարների կոնֆուրեի կողմից 2017թ. ապրիլին): Այս համատեքստում ռազմավարությունը դեռևս նախագծման փուլում է մինչև փաստացի ընդունվելը: Այնուամենայնիվ, քանի որ կարճ ժամանակ է անցել զեկույցի մշակումից, կարևոր է դիտարկել դրանում պարունակվող առաջարկությունները ցուցանիշային համակարգի ներդրման վերաբերյալ: Ռազմավարությունն անդրադարձ է կատարում մի շարք մարտահրավերների և առաջարկությունների, և, ինչպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցուցանիշների դեպքում, այստեղ ևս մշակված է մեխանիզմ խնդիրները հարաբերակցելու համար: Ռազմավարության հիմքում ընկած են երեք բաղադրիչներ.

- *Սոցիալական* բաղադրիչը պատասխանատու է մշակութային ժառանգության ակտիվների համար՝ նպաստելու բազմազանության ապահովմանը, ժառանգության համայնքների հզորացմանը և մասնակցային կառավարմանը (այն ներառում է 8 մարտահրավերներ և 10 առաջարկություններ):
- *Տնտեսական և տարածքային զարգացման* բաղադրիչը նպատակ ունի ամրապնդելու ժառանգության՝ կայուն զարգացման գործին բերած նպաստը՝ հիմնվելով տեղական ռեսուրսների, զբոսաշրջության և զբաղվածության վրա (այն ներառում է 8 մարտահրավերներ և 11 առաջարկություններ):
- *Գիտելիքի և կրթության* բաղադրիչն անդրադառնում է կրթության, հետազոտության և ցկյանս ուսումնառության խնդիրներին ժառանգության միջոցով՝ հիմնելով ժառանգության մասին գիտելիքի և ժառանգված արվեստի և արհեստի վերապատրաստման կենտրոններ՝ համապատասխան ուսուցման, վերապատրաստման և հետազոտական ծրագրերի միջոցով (այն ներառում է 8 մարտահրավերներ և 11 առաջարկություններ):

Առաջարկությունները հիմք են հանդիսանում քաղաքականության խնդիրների բացահայտման համար և ընդհանուր առմամբ ընդգրկում են հետևյալ խնդիրները.

### Եվրոպական մշակութային ժառանգության 21-րդ դարի ռազմավարության առաջարկությունները

Սոցիալական բաղադրիչ	Տնտեսական և տարածքային զարգացման բաղադրիչ	Գիտելիքի և կրթության բաղադրիչ
1. Խթանել քաղաքացիների և տեղական ինքնակառավարման մարմինների ներգրավվածությունը առօրյա գործունեության մեջ ժառանգության կապիտալիզացման գործում:	1. Հանրահռչակել մշակութային ժառանգությունը որպես ռեսուրս և դյուրացնել ֆինանսական ներդրումները:	1. Առավել արդյունավետ կերպով ընդգրկել ժառանգության վերաբերյալ կրթությունը դպրոցական ուսումնական ծրագրերում:
2. Ժառանգությունը դարձնել առավել հասանելի:	2. Աջակցել և հանրահռչակել ժառանգության ոլորտը՝ որպես աշխատատեղերի ստեղծման և բիզնես հնարավորությունների միջոց:	2. Քայլեր ձեռնարկել՝ խրախուսելու երիտասարդների ներգրավվածությունը ժառանգության հանրահռչակման գործում:
3. Ժառանգության ոլորտը ծառայեցնել Եվրոպայի և եվրոպական հասարակության հիմնարար արժեքներն ամրապնդելուն և փոխանցելուն:	3. Խրախուսել ժառանգության ոլորտի հմտություններն ու մասնագետներին:	3. Խրախուսել ստեղծարար գաղափարները՝ ուշադրությունը դեպի ժառանգության ոլորտ ուղղորդելու համար:

<p>4. Հանրահոջակել ժառանգության ոլորտը որպես հանդիպման վայր և գործիք միջմշակութային երկխոսության, խաղաղության և հանդուրժողականության համար:</p>	<p>4. Իրականացնել ժառանգության աղդեցության ուսումնասիրություններ վերականգնման, կառուցման, զարգացման և ենթակառուցվածքային նախագծերի համար:</p>	<p>4. Կազմակերպել օպտիմալ ուսուցում ժառանգության ոլորտին առնչվող ոչ մասնագետների և այլ ոլորտի մասնագետների համար:</p>
<p>5. Գնահատել քաղաքացիների մասնակցությունը գործողություններին և գործընթացներին:</p>	<p>5. Խրախուսել ժառանգության վերագործարկումը:</p>	<p>5. Ժառանգության ոլորտի մասնագետների վերապատրաստման համակարգը դարձնել բազմազան:</p>
<p>6. Ստեղծել համապատասխան շրջանակ, որը հնարավորություն կընձեռի տեղական ինքնակառավարման մարմիններին և համայնքներին քայլեր ձեռնարկելու՝ խթանելու և կառավարելու իրենց ունեցած ժառանգությունը:</p>	<p>6. Ապահովել ժառանգության տարածական, բնապահպանական և էներգետիկ զարգացման քաղաքականությունը:</p>	<p>6. Ստեղծել գիտելիքի բանկ՝ տեղական և ավանդական նյութերի, մեթոդների և նոր-հասունների հիման վրա:</p>
<p>7. Մշակել և խթանել մասնակցության միջոցով ժառանգության հատկորոշման ծրագրեր:</p>	<p>7. Հատուկ ուշադրություն դարձնել ժառանգության այն հատվածին, որը ներառված է կայուն զբոսաշրջության զարգացման քաղաքականության մեջ:</p>	<p>7. Ապահովել ժառանգություն համարվող արհեստների, գիտելիքի և հմտությունների փոխանցումը:</p>
<p>8. Խրախուսել ժառանգության վերականգնման նախաձեռնությունները, որոնք առաջ են քաշում տեղական ինքնակառավարման մարմինները և համայնքները:</p>	<p>8. Պահպանել, վերականգնել և զարգացնել ժառանգությունը՝ առավել հաճախ կիրառելով նորարարական տեխնոլոգիաներ:</p>	<p>8. Երաշխավորել ժառանգության ցուցակագրված հուշարձանների հետ աշխատող մասնագետների հմտությունները:</p>
<p>9. Աջակցել միջսերնդային և միջմշակութային ծրագրերին, որոնք հանրահոջակում են ժառանգության ոլորտը:</p>	<p>9. Կիրառել նորարարական տեխնոլոգիաներ մշակութային ժառանգությունը հանրությանը ներկայացնելու համար՝ միաժամանակ պահպանելով դրա ամբողջականությունը:</p>	<p>9. Մշակել ուսումնական և հետազոտական ծրագրեր, որոնք կարտացոլեն ժառանգության ոլորտի կարիքներն ու բացահայտումները:</p>
<p>10. Դյուրացնել և խրախուսել (հանրային և մասնավոր) համագործակցությունները մշակութային ժառանգության խթանման և պահպանման ծրագրերում:</p>	<p>10. Կիրառել մշակութային ժառանգությունը՝ որպես տարածաշրջանի տարբերակիչ հատկանիշ և այն ավելի գրավիչ ու հայտնի դարձնելու միջոց:</p>	<p>10. Խրախուսել և խթանել սոցիալական ցանցերի զարգացումը:</p>
<p></p>	<p>11. Մշակել կառավարման նոր մոդելներ՝ համոզվելու, որ ժառանգության ոլորտն օգտվում է իր շնորհիվ ստացված լրացուցիչ տնտեսական եկամուտներից:</p>	<p>11. Հետազոտել ժառանգությունը՝ որպես գիտելիքի և ոգեշնչման աղբյուր:</p>

Ցուցանիշների օգտագործման և զարգացման այս մոտեցումների ուսումնասիրությունը հնարավորություն կարող է ստեղծել ապացուցահեն մոտեցման մշակման համար: Եվրոպայի խորհրդի ռազմավարությունը տրամադրում է հստակ եվրոպա-

կան մոտեցում, որն ընձեռում է այլ երկրների հետ փոքրձի փոխանակման հնարավորություն: Հետևաբար՝

**Առաջարկություն 3. Մշակել և ընդունել ցուցանիշների համակարգ՝ խթանելու ապացուցահեն քաղաքականության մշակումը: Վերջինս կարող է մշակվել համակարգված ձևով հետաքրքրություն ներկայացնող տարբեր ոլորտների ընդգրկմամբ և մշակութային ժառանգությանը, տնտեսությանը, զարգացմանը, զբոսաշրջությանը, սոցիալական հարցերին առնչվող տարբեր պատասխանատու մարմինների կողմից՝ «Վազգային վիճակագրական ծառայության աջակցությամբ:**

Ապացուցահեն քաղաքականության գաղափարների փորձարկման միջոց կարող է լինել ցուցանիշների կիրառումը նախագծերում, որոնք արտացոլում են մշակութային և նյութական ու ոչ նյութական մշակութային ժառանգության հետաքրքրությունները, ինչպես նաև սոցիալական, տնտեսական, տարածքային, գիտելիքի և կրթության խնդիրները: Այս առումով կարևոր է մշակութային երթուղիների/միջանցքների, այդ թվում՝ մշակութային լանդշաֆտների ու պատմական քաղաքների զարգացումը (որպես զբոսաշրջային կենտրոններ)՝ ապահովելու գաղափարների փորձարկումը:

Մշակութային միջանցքներն ու երթուղիները, մշակութային ժառանգությամբ պայմանավորված վերականգնումը, ինչպես նաև կլաստերների և ցանցերի դերը

Հայաստանի մշակութային միջանցքների/երթուղիների քաղաքականությունը դեռևս զարգացման վաղ փուլում է: Ուշադրության կենտրոնում է Մետաքսի ճանապարհի սևծովյան երթուղու և այլ միջանցքների զարգացումը: Հայաստանը նաև Եվրոպայի խորհրդի մշակութային երթուղիներից մեկի՝ Iter Vitis երթուղու անդամ է, թեև շահագրգիռ կողմերը դեռևս չեն խոսում այս միավորման զարգացման աշխատանքների վերաբերյալ:

Մշակութային երթուղիների այլ հնարավորություններ կարող են բացահայտվել, օրինակ՝ Հայաստանում եզակի քրիստոնեական ճարտարապետական ժառանգության շուրջ՝ Եվրոպայի խորհրդի կրոնական ժառանգության այլ երթուղիների համանմանությամբ (օրինակ՝ *Կրոնիակական կենտրոնները Եվրոպայում, Ցիստերցիանական արքայության եվրոպական երթուղին, Եվրոպական ժառանգության ռոմանական երթուղին, Սուրբ Օլաֆի ճանապարհի երթուղին և Սանտյագո դե Կամպոստելայի երթուղիները*)<sup>34</sup>: Ավելին, կա երթուղիների զարգացման հնարավորություն նաև այժմյան Հայաստանի սահմաններից դուրս՝ հարևան երկրներում (վաղ քրիստոնեական ժառանգության թեմայով): Բացի այդ, քրիստոնեական ժառանգությունը կարող է դառնալ առանձին թեմա, օրինակ՝ 1997թ.<sup>35</sup> Անգլիական ժառանգությունը մշակել էր թեմատիկ արշավ՝ «Անգլիայի քրիստոնեական ժառանգության հետքերով» խորագրով: Քրիստոնեական ժառանգությունն ունի բավականին լայն հնարավորություններ՝ այցելուներ գրավելու, այդ թվում՝ քրիստոնեական ժառանգության «տուր-փաթեթների» միջոցով, ինչպես նաև նյութական և ոչ նյութական ժառանգությանն առնչվող միջոցառումների իրականացման համար. նմանատիպ օրինակ է Լոնդոնի քրիստոնեական ժառանգության<sup>36</sup> նախաձեռնությունը:

Եվրոպական մշակութային երթուղիների ազդեցությունը ՓՄՁ-ների նորարարության և մրցունակության վրա ուսումնասիրության առարկա է դարձել Եվրամիության մրցունակության և նորարարության ծրագրի (ՄՆԾ) շրջանակներում, որը միտված է խթանելու եվրոպական ձեռնարկությունների մրցունակությունը<sup>37</sup>: Վերջինս ընդգծում է, ընդհանուր առմամբ, մշակութային երթուղիների՝ հավելյալ արժեք ստեղծելու ներուժը մշակութային զբոսաշրջության ոլորտում, այդ թվում՝ հարակից ՓՄՁ-ների, ինչպես նաև մշակութային երթուղիների նպատակակետերի ներգրավմամբ ՓՄՁ-ների ցանցեր ու կլաստերներ ստեղծելու հնարավորությունները տնտեսական և սոցիալա-

<sup>34</sup> Տե՛ս <http://culture-routes.net/cultural-routes/list>

<sup>35</sup> Տե՛ս <https://content.historicengland.org.uk/images-books/publications/conservation-bulletin-31/conservationbulletin31.pdf/>

<sup>36</sup> Տե՛ս <http://www.christianheritagelondon.org/>

<sup>37</sup> Տե՛ս [http://culture-routes.net/sites/default/files/files/StudyCR\\_en.pdf](http://culture-routes.net/sites/default/files/files/StudyCR_en.pdf)



կան զարգացման համար: Այն սահմանում է, որ մշակութային երթուղիները կարող են հանդես գալ որպես մի հետաքրքիր արժեզրեա, որի հիման վրա կարող են ձևավորվել և զարգանալ կլաստերներ: Տեղական մակարդակում է, որ գործընկերները կարող են արդյունավետ համագործակցել՝ ստեղծելով տարբեր կազմակերպությունների, հաստատությունների և անհատների կլաստերներ ոչ ֆորմալ և հաճախ պատահական կառուցվածքով, սակայն ՓՄՁ-ների զարգացումը կշարունակի կախված լինել ցանցային և միջշուկայական փոխհարաբերություններից: Հետևաբար, գոյություն ունի համագործակցության խրախուսման և կայուն փոքր տնտեսությունների խթանման շրջանակ:

Պատմական քաղաքները «Կիևյան նախաձեռնության» և COMUS ծրագրերի քննարկման առարկան են եղել Հայաստանում: Այստեղ ևս հնարավորություն է ստեղծվում այլ վայրերում ընթացող աշխատանքների ընդլայնման համար՝ խրախուսելով *Փոքր և մեծ քաղաքների ժառանգությամբ պայմանավորված քաղաքային վերականգնումը*, ինչպես նշվում է «Մշակութային ժառանգությունը Եվրոպային ի նպաստ ծառայեցնելը» եվրոպական զեկույցում (տե՛ս Մաս 1, Բաժին 6): Ինչպես նախապես նշվել էր, բազմաթիվ պատմական քաղաքներ ճանաչել են հնուտ և տաղանդավոր մարդկանց, զբոսաշրջիկների և ներդրողների գրավելու իրենց հզոր ներուժը, այնինչ մնացածները շարունակում են տառապել գործազրկությունից, տնտեսական լճացումից և սոցիալական խնդիրներից, իսկ քաղաքային անկման հիմքը դառնում է քաղաքացիական ձգտման պակասը:

Այս ոլորտում դրական փորձի մասին կարող են վկայել այնպիսի ծրագրեր, որոնք հիմք են եղել COMUS ծրագրի համար, ինչպիսիք են Եվրոպայի կողմից ֆինանսավորվող «Ժառանգություն/INHERIT»<sup>38</sup> և «Ժառանգությունը որպես հնարավորություն (HerO)»<sup>39</sup> ծրագրերը: Այս ծրագրերին աջակցություն է տրամադրել Պատմական քաղաքների և շրջանների եվրոպական միավորման (հայտնի որպես՝ Եվրոպայի ժառանգություն)<sup>40</sup> հովանու ներքո գտնվող ցանցը:

Կլաստերային մոտեցումը նույնպես կարող է խթանել փոքր և մեծ քաղաքների՝ ժառանգությամբ պայմանավորված վերականգնումը: Օրինակ՝ Միացյալ Թագավորությունում «Կառուցենք մեր արդյունաբերական ռազմավարությունը» վերնագրով ընթացիկ քաղաքականության խորհրդատվությունը դիտարկում է ժառանգության ոլորտը որպես «ստեղծագործական ոլորտ»<sup>41</sup>: Այս խորհրդատվական փաստաթղթում նշվում է, որ Միացյալ Թագավորության կառավարությունը վերանայում է պետական գերատեսչությունների և մշակութային հաստատությունների տեղակայման հարցը և դիտարկում է նրանց տեղափոխությունն այնպիսի վայրեր, որոնք հնարավորություն կստեղծեն տեղական կլաստերների ամրապնդման և մասնավոր հատվածի զարգացման համար՝ կարևորելով մշակութային հաստատությունների՝ տարբեր վայրեր գրավիչ դարձնելու գործում ունեցած դերը: Այնտեղ նաև նշվում է, որ մշակութային հաստատությունները և կանոնավոր բնույթ կրող միջոցառումները կարող են գրավել այցելուներին, հանրահռչակել կլաստերների գործունեությունը և օգնել գրավելու տաղանդավոր մարդկանց, որոնք կցանկանան հաստատվել այդ տարածքներում: Այսպիսի օրինակ կարող է լինել ՋԼՄ կազմակերպությունը: Այս մոտեցումը համապատասխանում է Եվրոպական Միության մտածելակերպին՝ ընդգծելով մեծ ու փոքր քաղաքների ժառանգության կենտրոններում մշակութային ոլորտի, խելացի և ստեղծագործ ոլորտների ներդրման հնարավորությունների ստեղծման կարիքը: Նյութապատկան-Թայնը, որը զգալի սոցիալական և տնտեսական օգուտ է բերում, և որին անդրադարձ է արվել INHERIT և «Մշակութային ժառանգությունն ի նպաստ Եվրոպայի ծառայեցնելը» զեկույցներում, պատմական քաղաքի և արվեստագիտական ձեռնարկատիրության ու նորարարական ոլորտների համախմբան դրական փորձի օրինակ է:

<sup>38</sup> Տե՛ս <http://www.historictownsforum.org/node/300>

<sup>39</sup> Տե՛ս <http://urbact.eu/hero>

<sup>40</sup> Տե՛ս <http://www.historic-towns.org/>

<sup>41</sup> Տե՛ս <http://ihbconline.co.uk/newsarchive/?p=14948> և [https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment\\_data/file/586626/building-our-industrial-strategy-green-paper.pdf](https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/586626/building-our-industrial-strategy-green-paper.pdf)

Այս քննարկումները հանգեցնում են հետևյալ առաջարկությունների՝

**Առաջարկություն 4. Զարգացնել մշակութային երթուղիների և միջանցքների ներուժը և խթանել պատմական քաղաքներում ժառանգության վերականգնումը:**

**Առաջարկություն 5. Ուսումնասիրել քրիստոնեական ժառանգության երթուղու զարգացման ներուժը:**

**Առաջարկություն 6. Ակտիվացնել տնտեսական զարգացման քաղաքականությունը ժառանգության տեսանկյունից հետաքրքրություն առաջացնող վայրերում՝ մասնավորապես մշակութային երթուղիների և լանդշաֆտների, պատմական քաղաքների մոտ և շուրջ ոլորտին հարող գործունեություն ծավալող ձեռնարկությունների կլաստերների ստեղծումը խրախուսելու և այդ վայրերի տնտեսական և սոցիալական պայմանները բարելավելու նպատակով:**

**Առաջարկություն 7. Խրախուսել ցանցերի ստեղծումը, մշակութային ժառանգության և այլ ոլորտների, կառավարման տարբեր մակարդակներում պետական և մասնավոր սեկտորների միջև համագործակցությունը՝ մասնավորապես ակտիվ դերակատարում ունենալով Պատմական քաղաքների և շրջանների եվրոպական միավորման և Մշակութային երթուղիների մասին մասնակի ընդլայնված համաձայնագրի շրջանակներում՝ օգտվելով հնարավոր տնտեսական և սոցիալական եկամուտներից որպես կայուն ռեսուրսներից և դասեր քաղելով Եվրոպայի տարբեր երկրներում իրականացվող այլ նախաձեռնություններից:**

#### Դեպի ինտեգրված մոտեցում

Մշակույթի նախարարությունն ընդգծել է մշակութային ժառանգության «պաշտպանության» նպատակով միասնական մարմնի ստեղծման անհրաժեշտությունը, մասնավորապես այլ վարչակարգերի (քաղաքային զարգացման, շինարարության, հողօգտագործման և վերաշահագործման նպատակներով հուշարձանների վերականգնման) հետ ոչ բավարար համակարգման պատճառով: Թեև տարբեր մարմիններ ունեն այս խնդիրների լուծման համար իրենց ընթացակարգերը, դրանք արդյունավետ կերպով չեն կիրառվում և պահանջում են նոր իրավական ընթացակարգեր՝ համակարգված մոտեցում ապահովելու համար: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է, որ առաջարկվող փոփոխված օրենսդրությունն (տես՝ Մաս 2, Բաժին 19) անդրադառնա այս խնդրին (տես՝ Մաս 2, Բաժին 1, 2, 4 և 8):

Օրենսդրական դրույթները և օրենքները միջազգային չափանիշներին համաձայնեցնելը կարող է հանգեցնել ճշգրիտ համակարգման և ինտեգրացիոն գործընթացների բարելավման: Բացի այդ, քանի որ Հայաստանը վավերացրել է մշակութային ժառանգության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիաները (Գրանադա 1985, Վալետտա 1992, Ֆլորենցիա 2000, Ֆարո 2005), ապա կայուն մոտեցման ապահովման նպատակով կարևոր է զարգացնել միասնական մեխանիզմ (հատկապես զարգացման գործունեության և ժառանգության պահպանման ոլորտներում): Այն հավասարապես կհավասարակշռի տնտեսության, հասարակության, շրջակա միջավայրի և մշակութային ժառանգության կարիքները և կկանխի չվերականգնվող ժառանգության ռեսուրսներին սպառնացող անխմաստ վնասները: Շահավետ ընթացակարգերի ընդունման աջակցության ցուցաբերման համար Եվրոպայի խորհուրդը տրամադրել է այլ ուղեցույցներ ևս<sup>42</sup>: Ավելին, Ֆարոյի կոնվենցիան առաջ է քաշում ժառանգության ազդեցության գնահատման անհրաժեշտության կարևորությունը (տես՝ Հոդված 8ա), իսկ ԻԿՕՄՕՍ-ը (Հուշարձանների ու պատմական տարածքների միջազգային խորհուրդ (ICOMOS), մշակել է ուղեցույցներ համաշխարհային ժառանգության հուշարձանների վերաբերյալ, որոնք կարող են համապատասխանաբար կիրառելի լինել այլ համատեքստերում ևս<sup>43</sup>:

<sup>42</sup> Տես 2011 թվականին հրատարակված *Մշակութային ժառանգության ոլորտում օրենսդրության և կառավարման համակարգի զարգացման մասին* Եվրոպայի խորհրդի Ուղեցույցը <https://book.coe.int/eur/en/cultural-heritage/4678-guidance-on-the-development-of-legislation-and-administration-systems-in-the-field-of-cultural-heritage.html>

<sup>43</sup> Տես ԻԿՕՄՕՍ-ի *Մշակութային համաշխարհային ժառանգության և պատմամշակութային ար-*

Հարկ է նաև նշել այն փաստը, որ ժառանգությունը չի ընկալվում որպես առաջ-խաղացման խոչընդոտում (այսպիսի ընկալումներ հաճախ են պատահում), այլ միայն խթանում է դրա զարգացումը: Իսկապես, ժառանգությանը վերաբերող օրենսդրու-թյունը պետք է վերանայվի իր բացասական կողմերի («պաշտպանության» վրա շեշ-տադրման առումով), այլ ոչ թե դրական կողմերի առումով, թե ինչպես պետք է կա-ռավարել և օգտագործել ժառանգության ռեսուրսները: Այս հարցը կարելի է ավելի մանրամասն հետազոտել Բալկանյան երկրներում Եվրահանձնաժողովի/Եվրոպայի խորհրդի համատեղ ջանքերով իրականացված վերականգնողական գործողություն-ների ուսումնասիրման միջոցով, և բազմակողմանի քննարկման ենթարկել 2016 թվա-կանի «ՀարավԱրևելյան Եվրոպայի ժառանգության վերականգնման քաղաքականու-թյունը» վերնագրով հրատարակումը<sup>44</sup>:

Վերոնշյալ հարցի շուրջ հետագա բանավեճ պետք է կազմակերպել նաև Հայաս-տանի Հանրապետության կառավարության շրջանակներում, մասնավորապես տար-բեր, սակայն միևնույն ժամանակ իրար հետ կապ ունեցող պատկան մարմինների միջև: Ներկայում գոյություն ունեն սահմանափակ թվով միջգերատեսչական հանձ-նաժողովներ, ուստի նոր հանձնաժողովի կամ համաժողովի ստեղծումը կնպաստեր ժառանգության համատեքստում տնտեսական (այդ թվում՝ զբոսաշրջության ներու-ժի) և սոցիալական հարցերի քննարկման հնարավորության ընձեռնմանը: Առաջարկ-վող ազգային բանավեճը (տե՛ս Առաջարկություն 1) կարող է օգտակար մեխանիզմ լինել՝ հետագայում մշակութային ժառանգության՝ որպես ազգային կայուն ռեսուրսի ներուժն ի նպաստ հասարակության և քաղաքականության մշակման և զարգացման ուսումնասիրելու նպատակով:

**Առաջարկություն 8. Մշակել մշակութային ժառանգության ռեսուրսների կառավարման և զարգացման ավելի ինտեգրված մոտեցում օրենսդրական՝ փոփոխության շնորհիվ՝ համապատասխան ֆորմալ մեխանիզմի ստեղծման միջոցով ժառանգության ազդեցության գնահատման և ինտեգրված քաղաքա-կանության/նազմավարությունների համար ներառելով նոր ընթացակարգեր՝ տարբեր վարչակազմերի, տեղական իշխանությունների, համայնքային ներ-կայացուցիչների և այլ շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ հավանական ներ-դրողներին վերաբերող հարցերը ուսումնասիրելու նպատակով:**

Ընդ որում, «*Ժառանգությունը որպես հնարավորություն*» ծրագիրը (տե՛ս վերը) նա-խաձեռնել է ստեղծել մշակութային ժառանգության կառավարման համալիր ծրագրեր, որոնց մշակման մեջ պետք է իրենց ներդրումն ունենային տեղական շահագրգիռ խմբերը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի քաղաքային «Պատմական լանդշաֆտի վերաբերյալ առաջար-կությունը» նույնպես առաջ է քաշում առավել լայնամասշտաբ, ինտեգրված մոտե-ցում<sup>45</sup>:

## Զբոսաշրջություն և ժառանգության ռեսուրս

Մշակույթի նախարարությունը զբոսաշրջության և մշակութային ժառանգու-թյան միջև կապի ամրապնդման նպատակով արձանագրել է մի շարք դրական զարգացումներ և ստեղծել նազմավարություններ, այդ թվում՝ նոր մշակութային զբոսաշրջության երթուղիների կառուցում, զբոսաշրջային փաթեթների առաջարկ-ների մշակում (ներառյալ՝ գիտական զբոսաշրջություն և ենթակառուցվածքների զարգացում), արգելոցների և արգելավայրերի ստեղծում, բազմալեզու էքսկուրսի-աների և համապատասխան կրթական և մշակութային գործունեության ապահո-վում, ավանդական տոնակատարությունների ու փառատոների, ինչպես նաև անլար համացանցային ծածկույթի (wifi) հնարավորության կազմակերպում: Այս ամենն, իս-կապես, դրական արդյունք է:

*Ժեքների համար ժառանգության ազդեցության գնահատման ուղեցույցը* (2011) <http://www.icomos-uk.org/uploads/sidebar/PDF/ICOMOS%20Guidance%20on%20Heritage%20Impact%20Assessments%20January%202011.pdf>

<sup>44</sup> Տե՛ս <https://book.coe.int/eur/en/cultural-heritage/6970-the-politics-of-heritage-regeneration-in-south-east-europe.html>

<sup>45</sup> Տե՛ս <http://whc.unesco.org/en/activities/638>



Այնուամենայնիվ, թվում է, որ զբոսաշրջության համակարգման ոլորտը դատարկ է. այստեղ անհապաղ անհրաժեշտ է ստեղծել կառավարական հանձնաժողով, որը կկարողանա արդյունավետորեն աշխատել այս ոլորտում կարևոր գործունեություն ծավալող ՀԿ-ների հետ: Բացի այդ, անհրաժեշտություն կա կայուն զբոսաշրջության ռազմավարությունները պատշաճ կերպով համակարգելու ինտեգրված մոտեցմամբ աշխատող բոլոր շահագրգիռ կողմերի հետ:

Մաս 2-ում այս խնդրի վերլուծությունը վեր է հանել մի շարք հարցադրումներ, որոնց համար առաջարկվում է նախաձեռնել հետևյալ քայլերը.

**Առաջարկություն 9. Կայուն և միասնական ռազմավարության մշակման միջոցով բարելավել և ամրապնդել ժառանգության, տնտեսության և զբոսաշրջության միջև կապը՝ բացահայտելու, թե դեպի ուր պիտի ուղղորդվեն զբոսաշրջության ենթակառուցվածքների համար սահմանափակ ռեսուրսները: Այստեղ հարկ է ներառել.**

մշակութային ժառանգությանը վերաբերող երթուղիների ցուցանակներ/ ժառանգության բրենդավորման հետ միասին,

զբոսաշրջիկների համար հատուկ ծառայությունների ապահովում (օրինակ՝ ավտոկայանատեղիների, հասարակական զուգարանների կառուցում),

զբոսաշրջության համար մատուցվող ծառայություններում տարբեր համայնքների ներգրավում (օրինակ՝ կացարանների կամ սննդի ծառայությունների միջոցով),

բազմալեզու տեղեկատվական վահանակների և քաղաքի հատակագծի նշանների ապահովում՝ զբոսաշրջային կենտրոններում տեսարժան վայրերի տեղանշման համար,

զբոսաշրջության պատճառով մշակութային ժառանգությանը հասցված վնասի գնահատում և կայուն մշակութային զբոսաշրջության քաղաքականության ապահովում,

վանդալության կանխարգելման միջոցներ,

երկրի սահմաններից դուրս տեղակայված հայկական ժառանգության (օրինակ՝ Վրաստանում և Թուրքիայում) հետ կապված զբոսաշրջության գործունեության առավել ամբողջական քաղաքականության միջոցով զարգացնել կապը հարևան պետությունների հետ, մշակութային ուղիների համար մշակել երկկողմ համաձայնագրեր և համատեղ նախաձեռնություններ, որոնք տարածվում են երկրի սահմաններից դուրս (զբոսաշրջիկների խաչաձև հոսքի մեծացման նպատակով),

կրոնական ժառանգություն ունեցող վայրերի հասանելիության մեծացում և զբոսաշրջության այլ տեսակների օգտագործման հնարավորություն,

հաղորդակցության ցանցերի բարելավում (ճանապարհային և երկաթուղային),

կարևորագույն վայրերում զբոսաշրջային տեղեկատվական գրասենյակների ստեղծում, ինչպես նաև թոուցիկների, հրապարակումների, տեղեկատվական ծառայությունների մշակում, որոնք հանրահռչակում են հարմարավետ կացարանները, ռեստորաններին և այցելուի մոտ հետաքրքրություն առաջացնող տեսարժան վայրը<sup>46</sup>,

այդօրինակ տեղեկատվական ծառայություններն իրականացնելու նպատակով տեղի բնակիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպում,

զբոսաշրջության ոլորտում թանգարանների ունեցած ներուժի ապահովում,

հեքիաթասացության, փողոցային թատրոնի, և այլ՝ ոչ նյութական միջոցներով զբոսաշրջիկներին գրավող համայնքային միջոցառումների կազմակերպման հնարավորության զարգացում, ինչպես նաև համապատասխան

<sup>46</sup> Մա կարելի է մանրամասն ուսումնասիրել՝ ուշադրություն դարձնելով, թե ինչպես են կազմակերպվում զբոսաշրջային գրասենյակները Ֆրանսիայում, քանի որ Ֆրանսիայում յուրաքանչյուր տարածք (վարչական շրջան) պետք է ունենա այդպիսի մի քանի հարմարություններ:

մարքեթինգի օգտագործում, այդ թվում՝ համացանցային ռեսուրսների կիրառում<sup>47</sup>,

մշակութային լանդշաֆտներում ագրոտուրիզմի զարգացում, այդ թվում՝ հեծանիվների վարձույթի ապահովում, արահետների, ձիավարության, կացարանների հնարավորություններ և այլն,

թանգարաններ, պատկերասրահներ և մուտքի վճար ունեցող այլ վայրեր բազմաթիվ այցելությունների դեպքում կիրառելի դարձնել տոմսերի վրա գործող զեղչային համակարգերի հնարավորությունը՝ այցելուներին խրախուսելով մնալ տվյալ վայրում ավելի երկար և ծանոթանալ ավելի լավ առաջարկների<sup>48</sup>,

առանցքային ՀԿ-ների և միջազգային հովանավորների հետ աշխատելու հնարավորություն՝ հայկական զբոսաշրջության հետ կապված արժեքները զարգացնելու նպատակով,

սպացուցահեն քաղաքականության նախանշված նպատակների իրականացում,

զբոսաշրջությանը առնչվող փոքր ձեռնարկությունների միջոցով (ծառայություններ, արտադրություններ, ստեղծագործական ոլորտներ, որոնք կարող են լինել ինչպես ստարտափներ, այնպես էլ կայացած ձեռնարկություններ) աջակցել զբոսաշրջության քաղաքականության զարգացմանը,

կլաստերային զարգացումների մշակում, օրինակ, տեղական բիզնեսի և զբոսաշրջության ոլորտում գործարարների հետ ցուցահանդեսների կամ առաջարկությունների համատեղ մարքեթինգ (տե՛ս նաև Առաջարկություն 6),

«Զբոսաշրջության ոլորտում փորձառության» զարգացում, օրինակ՝ դեպի վանքեր, եկեղեցիներ, թանգարաններ խմբային արշավների/ուխտերի կազմակերպում, որոնք կարող են խթանել լայնամասշտաբ հոսքի ապահովումը,

այցելուների և զբոսաշրջիկների համար տեխնոլոգիական օժանդակ միջոցների ապահովում, ինչպիսիք են՝ տեսարժան վայրերի, թանգարանների, կացարանային հնարավորությունների, հասարակական զուգարանների, նորարարական ծառայությունների մասին սմարթֆոնների հավելվածները (“apps”) ինչպես նաև սոցիալական լրատվամիջոցի վերաբերյալ հայկական ժառանգության և Զբոսաշրջության փաթեթի մշակում:

#### Կարողությունների զարգացում և վերապատրաստում

Հայաստանում Ժառանգության մասին կրթությունը կարծես թե իրականացվում է խիստ ակադեմիական եղանակով, հիմնականում համալսարաններում ուսուցանվող դասընթացների միջոցով: Դրանք մասնագիտացում են ապահովում ուսումնասիրության որոշակի ոլորտներում, սակայն շեշտը չեն դնում գործնական հմտությունների վրա: Այսօր մասնագետները տարբեր դերեր իրականացնելու համար պետք է բազմակողմանիորեն զարգացած լինեն, ոչ թե լինեն միայն մեկ առարկայի շրջանակներում տարվող աշխատանքների մասնագետներ:

Երկրի ժառանգության հանդեպ ունեցած երիտասարդի հետաքրքրությունը հարատև դարձնելու նպատակով Ժառանգության մասին կրթությունը պետք է սկսել դեռ դպրոցական մակարդակից, որը կօգնի պահպանելու այդ ռեսուրսը սպազայի համար:

Ոլորտի պրոֆեսիոնալ մասնագետները պետք է ձգտեն շարունակական մասնագիտական զարգացման ապահովմանը: Մրան կարելի է հասնել արհեստավարժ մարմինների աջակցությամբ (համակարգողների, ճարտարագետների, հնագետների, կառուցապատողների և այլ մասնագետների միջոցով) հմտությունների լայն շրջանակ ներառող հավատարմագրման գործընթացների միջոցով:

Նոր տեսակի հմտությունների զարգացման անհրաժեշտություն է առաջանում այն դեպքում, երբ ժառանգության ռեսուրսը պետք է ենթարկվի առևտրային շահա-

<sup>47</sup> Տե՛ս <http://www.agritourism.eu/>

<sup>48</sup> Տե՛ս Museumkaart-ը, Ամստերդամի թանգարանի տոմսը <http://www.amsterdam.info/museums/museumkaart/>

գործման, մասնավորապես ծրագրի կառավարման, ֆինանսական գնահատման, դրամահավաքության և ցանցային համակարգերի ստեղծման դեպքում: Օրինակներ կարելի է վերցնել այլ զարգացող երկրներից, որտեղ այս տեսակի հմտությունների զարգացումը ուսումնասիրվել է Եվրոպական ֆինանսավորում ունեցող ծրագրերում, մասնավորապես 2003 թվականից «Ճարտարապետական և հնագիտական ժառանգության վերականգնման ինտեգրված նախագծերի ծրագիրը», որն իրականացվել է Եվրահանձնաժողովի/Եվրոպական խորհրդի համատեղ ծրագրով և 2008-2014 թվականներին վերջինիս երկփուլ շարունակությունը՝ Լյուբլյանայի գործընթացի միջոցով<sup>49</sup>: Արդյունքները լավ փաստագրված են Եվրոպայի խորհրդի երկու գրքերում. «Ժառանգությունը հանուն զարգացման Հարավարևելյան Եվրոպայում»<sup>50</sup> և «Ժառանգության վերականգնման քաղաքականությունը Հարավարևելյան Եվրոպայում»<sup>51</sup>: Երկու գրքերն էլ նվիրված են ֆինանսավորման խնդիրներին, սակայն երկրորդ գիրքը մասնավորապես վերաբերում է բիզնեսի պլանավորման և ֆինանսական միջոցների հայթայթմանն առնչվող հարցերին:

**Առաջարկություն 10. Ընդլայնել Ժառանգության մասին կրթության հասանելիությունը հասարակության բոլոր խմբերի համար (երիտասարդներ և մեծահասակներ) և բարձրագույն կրթություն ստացող մասնագետների մոտ զարգացնել ավելի լայն հմտություններ մասնագիտական հավատարմագրման միջոցով այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ ծրագրերի կառավարումը, ֆինանսական գնահատումը, ֆինանսական միջոցների հայթայթումը, մարքեթինգը, նոր տեխնոլոգիաների ստեղծումը և ավանդական արհեստագործական հմտությունների պահպանումը, այլ Եվրոպական զարգացող երկրների փորձը: Ժառանգության մասին գիտելիքը և վերջինիս ներուժը որպես զարգացման խթան դիտարկելը պետք է ներթափանցի այնպիսի վերաբերելի մասնագիտությունների շրջանակ, ինչպիսիք են գրոսաշրջությունը, տարածական և քաղաքային պլանավորումը:**

### **Ֆինանսական աջակցություն, ֆինանսավորման մեխանիզմ և ֆինանսական միջոցների հայթայթում**

Ինչպես արդեն նշվել է Մաս 2-ում, վերջին տարիների ընթացքում ժառանգության ռեսուրսի ֆինանսավորումը զգալիորեն անբավարար արդյունքներ է գրանցում: Այս իրավիճակը բնորոշ չէ միայն Հայաստանին, հատկապես 2007-2009 թթ. ֆինանսական ճգնաժամից հետո: Սակայն, եթե համեմատենք, պարզ է, որ Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներ ունեն մեծ ֆինանսական ռեսուրսներ: Սակայն վաղուց հայտնի փաստ է, որ պետական ոլորտից և պետական միջոցներից կախում ունենալը չի կարող բավարարել ժառանգության ոլորտի կարիքները:

Պետական միջոցներից ֆինանսավորման հարցը կարող է մասամբ լուծվել ապացուցահեն քաղաքականության միջոցով, ինչը այլ զարգացած երկրներից ստացած փորձի միջոցով հաճախ վկայում է, որ մասնավոր և երրորդ հատվածների խրախուսումը կարող է հանգեցնել այդ աղբյուրների կողմից կատարվող ավելի շատ ներդրումների: Սակայն սա պահանջում է համապատասխան ընկալում և վստահություն առ այն, որ դա հնարավոր է. այսպիսի ընկալումը բացառապես հնարավոր է ժառանգության ոլորտում արված ներդրումների (ստեղծված բիզնեսների և նոր աշխատատեղերի արդյունքում ավելացած հարկային եկամուտներ, սոցիալական համախմբվածություն և այլն) ուղղակի և անուղղակի օգուտների ապացույցների հիման վրա, ինչպես ցույց է տրված Եվրոպական հետազոտական զեկույցում՝ «Եվրոպական մշակութային ժառանգությունը՝ թվերով»:

Այնուամենայնիվ, ներդրումների լծակներ ստեղծելու նպատակով այլ մոտեցումներ ևս կարելի է հաշվի առնել: Օրինակ՝ «Ճարտարապետական ժառանգության ֆի-

<sup>49</sup> Լյուբլյանայի գործընթաց (Փուլ I. Հարավարևելյան Եվրոպայի Ժառանգության վերականգնման ֆինանսավորում: Փուլ II. Մեր ընդհանուր ժառանգության վերականգնում):

<sup>50</sup> <https://book.coe.int/eur/en/cultural-heritage/6144-heritage-for-development-in-south-east-europe.html>

<sup>51</sup> Տես նշում 46:



նանսավորման»<sup>52</sup> մասին Եվրոպայի խորհրդի հրապարակումն ուսումնասիրում է ֆինանսավորման մեխանիզմները և գործարկում այն եվրոպական մի շարք երկրներում (այդ թվում՝ Արևելյան Եվրոպայի երկրներում), ինչպես նաև Միացյալ Նահանգներում և Կանադայում: Թեև այս ուղեցույցի հիմնական ուշադրությունը սևեռված է ճարտարապետական ժառանգության հետ կապված հարցերի վրա, սակայն այնտեղ բերվում են մի շարք օրինակներ, որոնք կարող են կիրառվել նաև ժառանգության այլ ոլորտներում: Բացի դրամաշնորհային օգնության սուբսիդիաներից, վարկերից և վարկային ու հարկային այլ հնարավորություններից, այն նաև տրամադրում է այլընտրանքային եկամուտների բարձրացման մեթոդների օրինակներ, այդ թվում՝ բարեգործական և ժառանգությամբ զբաղվող հիմնադրամներից ստացված միջոցների օրինակներ, ինչպես նաև նպատակային ֆոնդեր, հանրային ոլորտի պարտատոմսեր, վիճակախաղեր, կոնցեսիոն պայմանագրեր, հուշարձանների անուիտետներ, զարգացման համար իրավունքների փոխանցում, վերականգնողական խթանների ստեղծում, միջազգային ֆինանսավորողներ և պետական-մասնավոր գործընկերություններ:

Հայաստանյան համատեքստում ուշադրության արժանի բազմաթիվ նորարարական օրինակներից մի քանիսը կրում են շրջանառվող ֆինանսավորման գաղափարը (Միացյալ Նահանգների, Նիդերլանդների և Մեծ Բրիտանիայի «Ճարտարապետական ժառանգության ֆինանսավորման (ՃԺՖ) ծրագրի» օրինակներով):

Որպես հատուկ բարեգործական կազմակերպություն, ՃԺՖ-ն ստեղծվել է 1975թ. Եվրոպական ճարտարապետական ժառանգության տարվա շրջանակներում Մեծ Բրիտանիայի մասնակցության նպատակով՝ ի շահ Մեծ Բրիտանիայի բոլոր համայնքների, խթանելու պատմական կառույցների պահպանումն ու կայուն վերածագործումը: Նախնական ֆոնդը կազմել է 500,000 ֆունտ ստեռլինգ (305510169.07 ՀՀ դրամ): Այն տրամադրում է խորհրդատվություն, տեղեկատվություն և ֆինանսական աջակցություն՝ ծրագրերի նախապատրաստական դրամաշնորհների և վարկերի տեսքով այն նախագծերի համար, որոնց նախաձեռնությունը պատկանում է բարեգործական և ոչ մասնավոր առևտրային կազմակերպություններին: Շնորհիվ այս ծրագրերի, ՃԺՖ-ի վարկային ռեսուրսները այժմ գրեթե 13 մլն. ֆունտ ստեռլինգ են կազմում (7943264395.73 ՀՀ դրամ): Այս ամենը կառավարության հետագա դրամաշնորհների, նվիրատվությունների, եկամուտների կուտակված ավելցուկի արդյունքն է: ՃԺՖ դրամաշնորհային ծրագրերը ֆինանսավորվում են վարկերի և բանկային ավանդների, ինչպես նաև Կառավարության դրամաշնորհային օգնությունների միջոցով: Նմանատիպ այլ հիմնադրամներ գոյություն ունեն Նիդերլանդներում (National Restauratiefonds) և Գերմանիայում (Deutsche Stiftung Denkmalschutz):

Ուսումնասիրության արժանի մեկ այլ օգտակար օրինակ է Մեծ Բրիտանիայի ժառանգության վիճակախաղի հիմնադրամը (ԺՎՀ), որը ազգային վիճակախաղի մի մասն է: Դրա ընթացքում վիճակախաղի տոմսերի գումարը օգտագործվում է մի շարք օգտակար նպատակներով: ԺՎՀ-ն աջակցում է ժառանգության մի շարք ոլորտների, այդ թվում՝ 1. պատմական շենքերի և հուշարձանների, 2. համայնքային ժառանգության, 3. արդյունաբերական, ծովային և տրանսպորտային, 4. մշակութային (ոչ նյութական ժառանգության), 5. թանգարանների, գրադարանների և արխիվների, 6. բնական ժառանգության ոլորտներին: Ստեղծված լինելով 1994 թվականին՝ այն տրամադրել է £7.1 մլրդ. (4338244400746.80 ՀՀ դրամ) ավելի քան 40.000 նախագծերի: Նմանատիպ այլ ծրագրեր մեծ աջակցություն են ցուցաբերում Իտալիայում, Գերմանիայում և Նիդերլանդներում:

Այժմ ի հայտ են գալիս ֆինանսավորման այլ նոր ձևեր, այդ թվում՝ «ամբոխային դրամահավաքը» (crowdfunding), որը սահմանվում է որպես «ծրագրի կամ նոր բիզնեսի ֆինանսավորում մեծ թվով մարդկանցից դրամահավաք կազմակերպելու միջոցով, որոնցից յուրաքանչյուրը համեմատաբար քիչ գումար է ներդնում՝ հիմնականում ինտերնետային վճարման եղանակով» (սա սովորաբար օգտագործվում է գեղարվեստական, ստեղծագործական, մշակութային, երաժշտական և ժառանգության նա-

<sup>52</sup> Փիբարդ Ռ., *Ճարտարապետական ժառանգության ֆինանսավորում – Քաղաքականության և օրինակների մասին ուղեցույց*: Եվրոպայի խորհրդի հրատ., 2009: Տես <https://book.coe.int/usd/en/cultural-heritage/4242-funding-the-architectural-heritage-a-guide-to-policies-and-examples.html>

խագծերի համար), և կազմակերպվում են վերապատրաստումներ՝ մասնագիտական խորհրդատվությունների միջոցով դա զարգացնելու համար<sup>53</sup>։ Մեծ Բրիտանիայում այժմ մեծ թափ է ստանում սոցիալական ներդրումը՝ որպես ֆինանսավորման նոր աղբյուր, այդ թվում՝ «Ժառանգությանը փոխանցելու» հայեցակարգը<sup>54</sup>։

Ժառանգությանն աջակցելու նպատակով պետական ֆինանսավորում ձեռք բերելու դժվարությունները գիտակցելով՝ ՀՀ մշակույթի նախարարությունը կարևոր է համարել ֆինանսական միջոցների ներգրավման մեթոդների և մեխանիզմների մշակման անհրաժեշտությունը։ Այս գործընթացում կարևոր է նաև հասկանալ, թե արդյոք կա՞ մասնագետների խորհրդի անհրաժեշտություն՝ դրամական միջոցների վերգրավման մեխանիզմների վերաբերյալ տեղի անձնակազմին վերապատրաստելու նպատակով, հատկապես Եվրահանձնաժողովի դրամաշնորհային ծրագրային հայտերի բարդ պահանջները բավարարելու համար։

**Առաջարկություն 11. Եվրոպական խորհրդատվությանը համահունչ՝ հարկ է ուշադրություն դարձնել ֆինանսավորման տարբեր աղբյուրներին և մեխանիզմներին՝ հիմնվելով Եվրոպայի տարբեր երկրներում ժառանգության ծրագրերի հանրահռչակման լավագույն փորձի վրա (օրինակ՝ ըստ եվրոպական տվյալների շտեմարաններից քաղված տեղեկատվության), այդ թվում նաև բազմաթիվ աղբյուրներից ֆինանսավորման սկզբունքին (ինչը հնարավորություն է տալիս մեծամասշտաբ ծրագրերի համար տարբեր ֆոնդերի փոխլրացնող օգտագործման) և պետական-մասնավոր գործընկերությունների խրախուսմանը։ Այնուհետ խորհուրդ է տրվում ՀՀ կառավարությանը ներգրավել միջազգային մասնագետ-խորհրդատուների, որոնք կմշակեն ֆինանսավորման ներգրավման մեթոդներ և կվերապատրաստեն Մշակույթի նախարարության աշխատակազմին այս մեթոդների կիրառման հարցում։**

**Մշակույթային ժառանգության առաջիկա եվրոպական տարին հաշվի առնելով՝ հարկ է քննել կառավարության կողմից նախնական կապիտալ ներդրմամբ ազգային շրջանառու հիմնադրամի ստեղծման հնարավորությունը և իրականացնել արշավ՝ ներգրավելու համապատասխան ֆինանսական միջոցներ այլ հովանավորներից և դոնորներից։**

#### Գույքացուցակներ, վերականգնում և սեփականություն

Հուշարձանների, հատկապես ճարտարապետական հուշարձանների վերականգնման գործողությունները խրախուսելու համար կարելի է իրականացնել լրացուցիչ գործողություններ՝ տարեկան կտրվածքով հուշարձանների վիճակի և սեփականության մասին արձանագրությունների թարմացմամբ։ Այն փաստը, որ այսպիսի հուշարձաններից շատերը դեռ պետական սեփականություն են համարվում, կդժվարացնի համապատասխան գործողությունների իրականացումը՝ բյուջետային ռեսուրսների սահմանափակության պատճառով։ Այդ իսկ պատճառով հետագա սեփականաշնորհումը կարող է հավանական տարբերակ լինել, այդ թվում՝ շինությունները պոտենցիալ մասնավոր կամ երրորդ հատվածի ներդրողներին վաճառելու միջոցով։ Կառուցապատման ծրագրերի նկարագրերի սեղմագրեր կարող են տրամադրվել հավանական ներդրողներին ուղղորդելու ակնկալվող միջամտության շրջանակի մասին, որը թույլատրելի կլինի վերականգնման և նոր շահագործման համար։ Պրոակտիվ լինելու մեկ այլ ձև կլինի խորհրդատվական ծառայության հիմնումը՝ խրախուսելու նախագծերը և տրամադրելու տեղեկատվություն ոչ միայն պարզապես թույլատրելի աշխատանքների մասին, այլ նաև այն մասին, թե ինչպես կարելի է ֆինանսական միջոցներ գտնել։ Որոշ շենքեր շատ ավելի ճկուն շահագործման հնարավորություններ ունեն՝ ի տարբերություն ուրիշների, և կարելի է ասել, որ պաշտպանության ներքո գտնվող ժառանգությունը պետք է համարվի «շահավետ ակտիվ», որը կարող

<sup>53</sup> Տե՛ս օրինակ՝ <http://digventures.com/crowdfunding/training/>

<sup>54</sup> Տե՛ս օրինակ՝ <http://www.theheritagealliance.org.uk/gth/wp-content/uploads/2016/07/CRC17-15-Summary.pdf>

է կայուն կերպով օգտագործվել՝ ավելորդ և մեծ ծախսեր պահանջող պաշտպանության ներքո գտնվող օբյեկտ լինելու փոխարեն:

Նիացյալ Թագավորությունում (ՄԹ) 1980-ականներից ի վեր գործել է «վտանգված ժառանգության» համակարգը<sup>55</sup>: Այն սկսվեց պատմական շինություններից՝ հետագայում ներառելով նաև հնագիտական հուշարձանները և պատմական միջավայրի այլ տարրերը: Այս կերպ ժառանգության օբյեկտների հատկորոշումը հնարավորություն է տալիս կենտրոնացնելու սահմանափակ գումարները և խրախուսում է թիրախային գործողությունները: «Վտանգված ժառանգություն» թվային ռեեստրը կօգնել՝ կենտրոնացնելով ուշադրությունը անհրաժեշտ գործողությունների վրա՝ ներուժ ունեցող մշակութային վայրերը հանելով վաճառքի և ներգրավելով պոտենցիալ ներդրողների: Հնարավոր է զարգացնել գոյություն ունեցող նախաձեռնությունները, օրինակ՝ այն գործողությունները, որոնք մեկնարկել են Գյումրիում՝ Պատմական քաղաքների Կիկյան նախաձեռնության կողմից քարտեզագրման գործողություններով: Այս տեղեկատվությունը հարկ կլինի համակարգել և ինտեգրել մեկ թվային համակարգում:

**Առաջարկություն 12: Մշակել բաց հասանելիությամբ «վտանգված ժառանգության» թվային ռեեստր և թարմացնել վիճակի և սեփականության մասին տեղեկատվությունը ամենամյա կտրվածքով: Խրախուսել պոտենցիալ ներդրողներին ձեռնարկելու գործողություններ՝ տրամադրելով խորհրդատվական ծառայություններ, այդ թվում՝ քննարկելու վերականգնման նախագծերը և տրամադրելու աջակցություն ֆինանսավորման ներգրավման եղանակների մասին տեղեկատվության միջոցով:**

### Թանգարանների ոլորտ

Հայաստանում 119 թանգարանների գրեթե կեսը չի գտնվում Մշակույթի նախարարության ենթակայության և կանոնակարգման ներքո և կարծես չի էլ կանոնակարգվում: Թանգարանների մասին նոր օրենքը, որում առաջարկներ են արվում ստեղծելու թանգարանների ֆոնդ, գտնվում է մշակման փուլում, այնուամենայնիվ, առաջարկների այլ մանրամասներ հստակ չեն: Թվում է՝ թանգարանային հատվածը թերզարգացած է, և չկա որևէ ապացույց, որ տեսալսողական, բազմամիջավայրային, եռաչափ և այլ առաջանցիկ տեխնոլոգիաներ են կիրառվում: Շահագրգիռ կողմերը նշել են, որ կարիք կա բարձրացնելու թանգարանների մրցունակությունը և մեծացնելու դրանց գրավչությունը՝ ի շահ հասարակության:

Եվրոպայում վիրտուալ թանգարանները և սոցիալական հարթակները նոր եղանակներ են ժառանգությունը վերաիմաստավորելու թվային համակարգերի ընձեռած հիշողության, ինքնության և մշակութային փոխազդեցության հնարավորություններով: Տեղեկատվական և թվային տեխնոլոգիաները (S<S) փոխում են այն եղանակները, որոնցով ստեղծվում, տարածվում, պահպանվում և օգտագործվում են մշակութային թվային ռեսուրսները: S<S-ն հնարավորություն է տալիս օգտատերերի տարբեր խմբերին օգտվելու թվային մշակութային ռեսուրսներից, օրինակ՝ հավաքածուների, այսինքն՝ արխիվների, գիտական հավաքածուների, թանգարանների, արվեստի պատկերասրահների, տեսողական արվեստների և այլնի համացանցային ինտերֆեյսերի միջոցով: Վիրտուալ թանգարանները հնարավորություն են ընձեռում մարդկանց՝ հասանելիություն ունենալ թվային բովանդակությանն իրական այցելությունից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո բազմապիսի թվային փորձառությունների միջոցով<sup>56</sup>: Դրանք տեխնիկական հզոր միջոցներ են պահանջում, հատկապես վիրտուալ և հավելյալ իրականության, պատումի գործիքների առումով, որոնք իրականություն կդարձնեն բազմապիսի թվային մոդելավորումներ, այդ թվում՝ վիրտուալ իրականության և եռաչափ փորձառություններ: Դրանք հասանելի կլինեն առցանց, թանգարաններում և մշակութային ժառանգության վայրերում:

<sup>55</sup> Տե՛ս <https://historicengland.org.uk/advice/heritage-at-risk/>

<sup>56</sup> See <http://www.museumsassociation.org/museum-practice>

Դժվար է էլ ավելի շեշտադրել հասանելիության բարելավման անհրաժեշտությունը: Հավաքածուների, ցուցադրությունների և վիրտուալ թանգարանների զարգացման միջոցով, պատմություններով և մեկնաբանություններով ուղղորդվող իմաստալից պատումներ ստեղծելը նաև կպահանջի հաշվի առնել տարբեր տեսակի տեսողական նյութերի նկատմամբ իրավունքների և արտոնագրերի անհրաժեշտությունը, ինչպես նաև թանգարանների՝ նոր S<S ներգրավելու կարողությունը: Սրա համար կպահանջվի մասնագետ խորհրդատուի աջակցությունը Եվրոպայում առկա լավագույն փորձի մասին (ինչպես նաև ուսումնական այցեր՝ այսպիսի նոր տեխնոլոգիաների ողջ ներուժը հասկանալու համար): *Europeana հավաքածուների* ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել այս համատեղությամբ:<sup>57</sup>

Նաև կարիք կա հզորացնելու թանգարանների կառավարման կարողությունները և բարելավելու թանգարանների ֆինանսավորումը՝ տրամադրելով նոր տիպի միջավայրեր, ուր այցելուները կցանկանան հաճախել և ներգրավվել: Կարիք կա խրախուսել թանգարանների աշխատակիցներին և ուսուցում կազմակերպել նոր մեթոդների, այդ թվում՝ մարքեթինգի, կառավարման և պլանավորման վերաբերյալ՝ ավելի ընդլայնելու առաջարկվող զբոսաշրջության փաթեթները:

Թանգարանների ֆինանսավորման խնդիրն այն է, որ դրանք պետք է ֆինանսավորվեն պետության կողմից և այլ աղբյուրներից: Շատ եվրոպական երկրներում թանգարանները փոխարկվել են մասնավոր հիմնադրամների: Դրանք ղեկավարվում են այնպիսի մասնավոր ընկերությունների կամ բարեգործական կազմակերպությունների նման, որոնց աջակցում են բարեգործական նվիրատվությունները, բարեգործական հիմնադրամները և դոնորների հասկացումները հովանավորության ձևաչափով:

Հովանավորությունը նշվել է ժառանգության ֆինանսավորման ընդհանուր համատեքստում (տե՛ս վերը՝ Առաջարկություն 11), և այս հարցը հարկ է պատշաճ կերպով քննության առնել թանգարանների և/կամ հարկերի մասին օերնքների նախագծերում (տրամադրելու անհատական, կորպորատիվ և բարեգործական հարկային արտոնություններ՝ նվիրատվությունները խրախուսելով): Շատ թանգարաններ գործում են հիմնադրամներից և բարեգործական հիմնադրամներից ստացվող ֆինանսական միջոցների (և երբեմն կառավարական դրամաշնորհների)<sup>58</sup> հիման վրա: Բայց ողջ գումարը, որոնք նրանք վաստակում են, կարող են պահել և ներդնել թանգարանների ծառայության որակի բարելավման նպատակով: Շահույթը կարող է օգտագործվել երկարաժամկետ բարեփոխումների համար, օրինակ՝ նոր ցուցադրությունների, վերականգնողական աշխատանքների և նոր տեխնոլոգիաների համար ներդրումների տեսքով: Այսպիսով, նրանք օգտագործում են փողը՝ ավելի լավ արտադրանք ստեղծելու նպատակով, իսկ դրա համար նրանք պետք է գումար գանձեն, հետևաբար հենց այդպես էլ վարվում են և գումար են վաստակում:

ՄԹ-ում հետազոտություն է իրականացվել՝ թանգարանների մուտքի համար վճարներ գանձելու ազդեցության մասին, և պարզվել է, որ.

- Չկան առանձնահատկություններ, որոնք տարբերակում են վճարովի կամ ազատ մուտքով թանգարանները, և պատկերը շատ ավելի բարդ է, քան հաճախ ենթադրում են, քանի որ երեք անկախ թանգարաններից մեկն է անվճար մուտքով, իսկ տեղական իշխանությունների ենթակայության ներքո գտնվող երեք թանգարաններից մեկի դեպքում է մուտքը վճարովի:

- Չկա ուղղակի կապ այցելուների բազմազանության և թանգարանի մուտքի անվճար կամ վճարովի լինելու միջև. նույն օրինաչափությունն է գործում նաև այցելուների սոցիալական բնութագրի անհամասեռության իմաստով: Այնուամենայնիվ, այսպիսի բացահայտման դեպքում հարկ է ընդունել նաև այն, որ թանգարանների այցելուների ընդհանուր սոցիալական բազմաշերտությունը միշտ չի հանդես գալիս որպես տեղի համայնքների սոցիալական բազմազանության ներկայացուցչական պատկեր:

<sup>57</sup> Տե՛ս <http://www.europeana.eu/portal/en>

<sup>58</sup> ՄԹ-ում թանգարանների միության մասին տեղեկությունները տե՛ս <https://www.museumsassociation.org/funding>




- Նվիրատվությունների վրա ազդում են ոչ թե թանգարանների մուտքի վճարովի կամ անվճար լինելը, այլ մի շարք ուրիշ գործոններ:
- Երկրորդային ծախսերի մակարդակի և թանգարանի վճարովի մուտքի միջև կապը ուղիղ համեմատական չէ, և այստեղ ավելի ազդեցիկ են այլ գործոններ: Այնուամենայնիվ, ի հայտ են եկել որոշ ապացույցներ, որոնք վկայում են, որ թանգարանների վճարովի մուտքի պարագայում այցելուներն ավելի հաճախ են մտնում թանգարանի խանութը (կամ օգտվում սննդի վաճառքի կետից), քան անվճար մուտք ունեցող թանգարանների այցելուները:
- Սովորաբար այն թանգարաններում, որտեղ մուտքը վճարովի է, այցելուներն ավելի շատ ժամանակ են անցկացնում:
- Գումարի գանձման գործընթացի ժամանակ ուշադրությունը կետրոնանում է այցելուներին ողջունելու վրա և այս կերպ նպաստում այցելուների մասին տեղեկատվության հավաքմանը: Երբ թանգարանների մուտքն անվճար է, այս տարրերի ապահովման համար այլընտրանքային մոտեցումներ են պահանջվում:
- Ցանկացած փոփոխություն մտցնելիս հատկապես կարևոր է այդ փոփոխության պատճառները շահագրգիռ կողմերին և տեղական համայնքներին հստակ ներկայացնելը, ինչպես նաև համոզվելը, որ աշխատակիցները կողմ են փոփոխությանը և վստահորեն կարողանում են դրանք բացատրել այցելուներին:  
(Աղբյուրը՝ ՄԹ մշակույթի նախարարության հետազոտությունը)<sup>59</sup>

Եկամուտների ավելացումը նշանակում է, որ թանգարանները կարող են աշխատանքի վերցնել մարքեթինգի մասնագետների, որոնք փորձ ունեն ուղղակի հաղորդակցության ոլորտում՝ տարածելու թանգարանի մասին նորությունները և խթանելու ապրանքների վաճառքը, ինչպես նաև այցելուների մասին տեղեկատվության աղբյուրներ ունեն կամ կարող են գտնել. սա կարող է հետազոտության հիմք դառնալ: Նրանք կարող են, օրինակ, վարձել հատուկ դիզայներներ, լուսավորության մասնագետներ՝ այցելուների համար ավելի հագեցած դարձնելու թանգարանային փորձառությունը և ավելի դյուրացնելու լուսանկարումը: Մրա արդյունքում նրանք կարող են նոր թվայնացված համակարգեր ստեղծել և օգտագործել սմարթ տեխնոլոգիաները, օրինակ՝ բջջային հեռախոսների հավելվածները, խրախուսել ավելի «բաց» թանգարանների գաղափարը (օրինակ՝ օգտագործելով պլանշետներ և սմարթֆոններ՝ ազատ և անվճար լուսանկարել՝ գումար գանձելով միայն հետազոտական կամ առևտրային նպատակներով պրոֆեսիոնալ օրինակների համար):

Թանգարանները նաև դերակատարություն ունեն զբոսաշրջության ոլորտում: Հարկ կա հստակ ռազմավարություն մշակելու՝ կապելու համար թանգարանները զբոսաշրջությանը և ստեղծելու համագործակցային ծրագրեր զբոսաշրջության (Էկոնոմիկայի նախարարություն) և ընդհանրապես ժառանգության ոլորտների միջև (մանրամասները տե՛ս Առաջարկություն 9): Ավելին, կարիք կա ոլորտի ներսում թանգարանային կլաստերի նախաձեռնություններ մշակելու և ընդունելու միասնական տոմսի/այցեքարտի/զեղչի քարտերի ռազմավարություն բազմաթիվ այցելությունների համար՝ այս կերպ շահեկանորեն օգտվելով խաչաձև մարքեթինգից և կապ հաստատելով այլ բիզնեսների և ծառայությունների հետ (ռեստորաններ, այդ թվում՝ թանգարանների ներսում սննդի և ըմպելիքների վաճառքի կետերը և խանութները, հեծանիվների վարձույթը և այլն): Թանգարանների և զբոսաշրջության առումով թերզարգացած վիճակն էլ ավելի է վատթարանում թանգարանային ռազմավարության բացակայության պատճառով և պատկան նախարարությունների անբավարար համակարգման արդյունքում:

<sup>59</sup> ՄԹ մշակույթի նախարարության հետազոտության զեկույցը (ՄԹ-ում անկախ թանգարանների ասոցիացիայի խորհրդատուներ) իրականացվել է պետական ֆինանսավորմամբ, որը հատկացվել է ՄԹ արվեստների խորհրդի և Ուելսի կառավարության կողմից. «Պատասխանատվության ստանձնում՝ ապացույցների գնահատում. թանգարանների անվճար կամ վճարովի մուտքի ազդեցությունը», Վերջնական զեկույց, օգոստոս 2016թ.: <http://www.aim-museums.co.uk/downloads/a064fa43-78cb-11e6-9df2-901b0e0dc93a.pdf>





Լժված շատրվան, Գյումրի

[\(Գաղտնի անվանում\)](#)



**Առաջարկություն 13. Հարկ է մշակել և իրականացնել ազգային ռազմավարություն՝ ապահովելու տեղական թանգարանների ծրագրերի ու զարգացման միտումների համապատասխանությունը ժամանակակից թանգարանային ոլորտի սպասարկման չափորոշիչներին (21-րդ դարի չափանիշներին համապատասխան սպասարկում): Հարկ է մշակել մուտքի վճարի գանձման, այդ թվում՝ բազմաթիվ այցելությունների համար գեղչերի քարտերի, ֆինանսավորման, S&S և վիրտուալ հավելվածների օգտագործման համապատասխան մեխանիզմներ: Հարկ է նկատի առնել այս գործոններ Թանգարանների և թանգարանային ֆոնդերի մասին առաջարկվող նոր օրենքը մշակելիս: Հարկ է ներգրավել մասնագիտական խորհրդատվություն այլ եվրոպական երկրներից, որտեղ որդեգրվել է թանգարանային ծառայությունների ավելի ժամանակակից մոտեցում, այդ թվում՝ Եվրոպայի թանգարանների կազմակերպությունների ցանցի (NEMO)<sup>60</sup> և *Europeana-ի* միջոցով:**

### Ոչ նյութական ժառանգություն

Կարևոր է ևս մեկ անգամ անդրադառնալ այն հանգամանքին, որ համայնքներն են հաճախ ոչ նյութական մշակույթի պահպանները, հատկապես գյուղական վայրերում, սակայն նրանց համար գուցե դժվար է հասկանալ այս ժառանգության կարևորությունը և հասարակությանն ի նպաստ դրա օգտագործման եղանակները, մասնավորապես այն պատճառով, որ տեղական իշխանություններից չի պահանջվում կոնկրետ միջոցառումներ մշակել կամ ֆինանսավորել դրանց մշակումը: Այնուամենայնիվ, տեղական մակարդակում տևտեսության զարգացման նախաձեռնությունները կարող են ձևավորվել ոչ նյութական ժառանգության շուրջ՝ ներգրավելով մասնավոր հատվածին՝ գործունեության նույն խմբի ձեռնարկությունների կլաստերների հիմնումը խրախուսելով, զբոսաշրջային ծառայությունների զարգացմամբ, մասնավորապես այնպիսի միջոցառումների հետ զուգորդություններում, որոնք ի ցույց կդնեն ոչ նյութական ժառանգությունը:

Հարկ է զարգացնել միջազգային համագործակցությունը՝ ընդլայնելու ոչ նյութական ժառանգության որպես ռեսուրսի ընդգրկման շրջանակը, և հնարավորություններ կարելի է ստեղծել միջազգային միջոցառումների համար, այդ թվում՝ այցելունների համար համապատասխան հարմարությունների ռեսուրսների ձևավորմամբ: Օրինակ՝ ՄԹ-ում կա առնվազն երկու վայր (օրինակ՝ համաշխարհային ժառանգության վայրեր համարվող Բաթը և Էդինբուրգը<sup>61</sup>), որտեղ արվեստի, երաժշտական, գրական և թատերական փառատոներ են կազմակերպվում այն վայրերում, որոնք ունեն կարևոր պատմական միջավայր: Այսպիսի միջոցառումները խրախուսում են թե՛ ազգային, թե՛ միջազգային այցելուների հոսքը և պահանջում զբոսաշրջային ենթակառուցվածքների էական պլանավորում:

Ոչ նյութական ժառանգության պաշտպանությանն ու պահպանությանն առնչվող հետազոտական աշխատանքը զգալի քանակությամբ ռեսուրսներ է խլում: Այնուամենայնիվ, պետք է հավասարակշռություն լինի այս ժառանգության պահպանման և որպես տևտեսական և սոցիալական զարգացման ռեսուրս օգտագործման միջև:

**Առաջարկություն 14. Կազմակերպել մի շարք ազգային և միջազգային միջոցառումներ՝ այցելուներին մարզային վայրերում օժանդակող ենթակառուցվածքներով, զբոսաշրջային կենտրոններ կամ մշակութային երթուղիներ՝ խթանելու զբոսաշրջային ակտիվությունը և հնարավորություն տալու տեղաբնակներին ներգրավվելու խոշոր միջոցառումներում, որոնք ի ցույց են դնում ոչ նյութական մշակութային ժառանգությունը: Մշակութային ժառանգության եվրոպական տարի 2018-ը պատեհ հնարավորություն է, որից հարկ է օգտվել՝ մշակելով առանցքային միջոցառումների կազմակերպման գործողություններ:**

<sup>60</sup> Տե՛ս <http://www.ne-mo.org/>

<sup>61</sup> Տե՛ս, օրինակ. <http://bathfestivals.org.uk/the-bath-festival/festival-brochure/> և <http://www.edinburghfestivalcity.com/festivals/edinburgh-international-festival>

**րի ծրագիր, այդ թվում՝ հովանավորության կարգի մշակումը, անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացումը և օժանդակող բիզնես կլաստերների զարգացման խրախուսումը այս տարվա համար և դրանից հետո:**

### Իրազեկում

Հայկական ժառանգության ոլորտի վերլուծությունը ի հայտ է բերել այն, որ ժառանգության հարցերի շուրջ քննարկումը առավել ակնհայտ է ազգային մակարդակում, բայց անբավարար չափով է հաշվի առնվում տեղական մակարդակում, մասնավորապես՝ համայնքի համար հուշարձանների և ոչ նյութական ժառանգության կարևորության տեսանկյունից: Մա մատնանշում է կրթության և այնպիսի մեխանիզմների անհրաժեշտությունը, որոնք կներգրավեն հանրությանը «իրենց ժառանգության» պահպանման և օգտագործման գործընթացում, մասնավորապես՝ Ֆարոյի կոնվենցիայով սահմանված «ընդհանուր պատասխանատվության» հասկացությունը համապատասխան: Ավելին, պահանջվում է իրազեկման և հանրային ներգրավման ընթացակարգերի մշակում:

Համացանցը և ՋԼՄ-ները, ինչպես նաև միջոցառումները և դպրոցական մակարդակում բարելավված կրթությունը կարող են օգտագործվել՝ բարձրացնելու հանրային իրազեկության մակարդակը և կրթելու հանրությանն ընդհանրապես (նյութական և ոչ նյութական) ժառանգության նշանակության մասին: Պետության, շահառուների և սոցիալական հատվածների միջև բաց և թափանցիկ համագործակցությունը կարող է բարելավել ժառանգության ռեսուրսների մասին որոշումների կայացման գործընթացը, որը կարող է նպաստել կայուն սոցիալ-տնտեսական զարգացմանը: Իսկապես, գույքացուցակների, այդ թվում՝ հուշարձանների վիճակի և սեփականության արձանագրություններով գույքացուցակների թվայնացված համակարգերի բաց հասանելիությունը կօգնեի ապահովելու հասարակության իրազեկվածությունը ոչ միայն ժառանգության ռեսուրսներին, այլև այն գործողություններին, որոնք կարող են ազդել դրանց վրա (կառուցապատման ծրագրեր, վերականգնման գործողություններ և այլն):

**Առաջարկություն 15. Առաջարկվում է, որ Հայաստանի կառավարությունը լիարժեք կերպով օգտվի Մշակութային ժառանգության եվրոպական տարի 2018-ից՝ տեղական, ազգային և միջազգային մակարդակներում բարձրացնելու հայկական մշակույթի կարևորության և ճանաչելիության մակարդակը բազմապիսի գործողությունների միջոցով, որոնք ուղղված կլինեն իրազեկմանը ու կրթելուն, նաև առանցքային գրոսաշրջային ենթակառուցվածքների, ծառայությունների և հարմարությունների զարգացմանը մի շարք այնպիսի առանցքային երթուղիների և կենտրոնների շուրջ, որտեղ մշակութային ժառանգությունը կարող է ի ցույց դրվել միջոցառումների և կլաստերային գործունեության միջոցով:**

Այս համատեքստում կարող են օգտակար լինել «Մշակութային ժառանգության եվրոպական ռազմավարությունը 21-րդ դարի համար» փաստաթղթում առաջարկվող խորհուրդների սոցիալական և ճանաչողական բաղադրիչները՝ ուղղված թե՛ քաղաքացիներին, թե՛ տեղական իշխանություններին իրենց ժառանգության կապիտալիզացման մեջ ներգրավումը խրախուսող մեխանիզմների մշակմանը (հատկապես բաց հասանելիությամբ գրանցման համակարգերի միջոցով), ժառանգությունն օգտագործելով Եվրոպայի և եվրոպական հասարակության մասին պատկերացումներ ձևավորելու համար՝ որոշում կայացնելու գործընթացները հասանելի դարձնելով, դյուրացնելով և խրախուսելով պետական-մասնավոր գործընկերությունները (նաև վերականգնման ծրագրերում) տեղական նախաձեռնությունների միջոցով՝ իրականացնելով միջոցառումներ, որոնք կխրախուսեն երիտասարդներին կիրառելու ժառանգության աշխատակարգերը, այդ թվում՝ ավելի մեծ արդյունավետությամբ ներառելով ժառանգությունը դպրոցական ուսումնական ծրագրերում և



տարածելով քաղաքականությունների մշակման հիմքում ընկած ապացուցա-  
հեն հետազոտությունները և ուսումնասիրությունները:

Ուշադրության է արժանի «Բնակիչների բացահայտման քարտերի» գաղա-  
փարը, որը հնարավորություն է տալիս մի քանի կարևոր վայրերի տեղաբնակ-  
ներին այցելելու հանրային սեփականություն հանդիսացող ժառանգության  
վայրեր, թանգարաններ և մասնակցելու միջոցառումների դպրոցական արձա-  
կուրդի ընթացքում կազմակերպվող «Ժառանգության բաց շաբաթներ»-ի  
շրջանակներում՝ մեծահասակների, երեխաների և ընտանեկան միջոցառում-  
ների տեղական ծրագրերի հետ զուգորդությամբ:

Սույն գեկույցի երրորդ մասում բերված առաջարկությունները խորհուրդ է տրվում  
հաշվի առնել և զարգացնել: Համապատասխան գործողությունների մշակման հա-  
մար հնարավոր է՝ հարկ լինի առանցքային հարցերի շուրջ դիմելու լրացուցիչ մասնա-  
գիտական խորհրդատվության, այդ թվում և մասնավորապես՝ ենթակառուցվածքնե-  
րի զարգացման, կլաստերների ձևավորման, ֆինանսական միջոցների ներգրավման  
և S<S բազմամիջավայրային միջոցների առնչությամբ:

### **Ամփոփիչ դիտարկումներ**

Հայաստանում առկա իրավիճակի վերլուծության ժամանակ արծարծված մի  
շարք հարցեր (Մաս 2) չեն արտացոլվել առաջարկություններում, որովհետև դրանք  
կարևոր չէին սույն քննության շրջանակներում (օրինակ՝ գրադարանները): Այնուամե-  
նայնիվ, Մաս 2-ում ներառված վերլուծությունում պարունակվում են մի քանի հար-  
ցադրումներ և մեկնաբանություններ, որոնք կարող են դառնալ հետագա քննության  
առարկա:

Ռ. Դ. Փիքարդ  
24.02.2017



**Հայաստանի պատմության թանգարան**

[\(տասնմեծ սկզբնաղբյուր\)](#)



Կարեն Սարգսյան, Անվերնագիր 2009

(ապստամբի սկզբնաղբյուր)





Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Այս հաշվետվությունը պատրաստվել է Եվրոպական միության՝ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում հեղինակը, և այն որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները:

Եվրոպական միության՝ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի նպատակն է՝ ապահովել մշակութային ու ստեղծարար ոլորտների աջակցությունը, ինչպես նաև նպաստել նրանց ներդրման մեծացմանը Հայաստանում, Բելառուսում, Վրաստանում, Ադրբեջանում, Մոլդովայում և Ուկրաինայում՝ կայուն մարդասիրական, սոցիալ-տնտեսական զարգացման մեջ:



Ծրագիրը ֆինանսավորվում է  
Եվրոպական միության կողմից